

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԿԱՆԱԶԱՊԱՏ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԶԵԿՈՒՅՑ

Գյումրիի քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների կառավարման գործընթացների հանրային մոնիտորինգի սույն զեկույցի հրատարակությունը իրականացվել է «Կառավարման պրակտիկայի բարելավում և թափանցիկ տեղական ինքնակառավարման մարմիններ» ծրագրի շրջանակներում, Հանուն ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի (EED) աջակցությամբ:

The results of the public monitoring of the urban green areas management processes of Gyumri city: Report

This Initiative is supported by the European Endowment for Democracy.



«Երրորդ բնություն» ՀԿ
“Third Nature” NGO

ՀՏԴ 712.4(042.3)

ԳՄԴ 85.118.7

Գ 685

Գ 685 ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱԶԱ-
ՊԱՏ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՆ-
ՐԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Զեկույց.-Գյումրի:
«Երրորդ բնություն» հասարակական կազմակերպություն,
2014. – 127 էջ:

Գյումրի քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչապատ տա-
րածքների կառավարման գործընթացների հանրային մոնիտորինգի զե-
կույցի բովանդակությունը արտացոլում է անցկացված մոնիտորինգի
արդյունքները, հրապարակված պաշտոնական վիճակագրության
տվյալները, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները,
իրավասու մարմինների հսկողական-վերահսկողական գործունեության
արդյունքները, այլ հավաստի տեղեկություններ տվյալ հետազոտության
առարկայի վերաբերյալ:

ՀՏԴ 712.4(042.3)

ԳՄԴ 85.118.7

ISBN 978-9939-1-0103-3

© «Երրորդ բնություն» ՀԿ, 2014

© «Third Nature» NGO, 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱԶԱՊԱՏ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ, ՈՒՈՐՏԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ...	11
1. Գյումրի համայնքի քառամյա զարգացման ծրագրերի մոտեցումները.....	11
2. Գյումրու քաղաքային հողերի և կանաչապատ տարածքների վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալները (2013 թվականի համար).....	14
3. ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1318-Ն որոշմամբ հաստատված «Տեխնիկական կանոնակարգ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը ներկայացվող պահանջների» կատարումը.....	15
4. Գյումրի քաղաքի կանաչապատման ու կանաչապատ տարածքների կառավարման վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցներով հրապարակված հողվածներում բարձրագվող խնդիրները.....	26
5. Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների և փողոցային տնկարկներին առնչվող հիմնախնդիրներ.....	27
6. Համայնքային բյուջեի ծախսերը ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների կառավարման և կանաչապատման ուղղություններով.....	29
7. ՀՀ բնապահպանության նախարարության` որպես վերահսկողություն իրականացնող մարմնի տվյալները ապօրինի ծառահատումների վերաբերյալ.....	30
8. Բնակավայրերի կանաչապատման և կանաչապատ տարածքների կառավարման ՀՀ օրենսդրությունը.....	31
9. Հանրության իրազեկվածությունը, կարծիքը և առաջարկությունները.....	33
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	37
1. Ոլորտի տեղական քաղաքականության, համայնքի քառամյա զարգացման ծրագրերի մասով.....	37
2. ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1318-Ն որոշմամբ հաստատված «Տեխնիկական կանոնակարգ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը ներկայացվող պահանջների» կատարումը.....	

	վայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը ներկայացվող պահանջների» կատարման մասով	40
3.	Գյումրի քաղաքի կանաչապատման ու կանաչապատ տարածքների կառավարման վերաբերյալ 2008-2014 թվականներին զանգվածային լրատվամիջոցներով հրապարակված հոդվածներում բարձրացվող խնդիրների մասով	42
4.	Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներին առնչվող հիմնախնդիրների մասով	43
5.	Քաղաքի կանաչապատ տարածքների կառավարման գործընթացներում հասարակության մասնակցության մեծացման մասով	45
6.	Վերահսկողություն իրականացնող մարմինների արդյունավետության բարձրացման մասով	47
7.	Բնակավայրերի կանաչապատման և կանաչապատ տարածքների կառավարման ՀՀ օրենսդրության մասով	48
8.	Հանրության իրազեկվածության և կարծիքի մասով: Հանրության առաջարկությունները	48
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	50
1.	Բնակավայրերի կանաչ տնկարկների խնամքի և կանաչապատ տարածքների պահպանման օրինակելի հիմնական կանոններ (նախագիծ)	50
2.	Կանաչ տնկարկների գույքագրման և կանաչապատ տարածքների անձնագրավորման մեթոդ (նախագիծ)	78
3.	Կանաչ տնկարկների վիճակի մոնիտորինգ	94
4.	Ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների վիճակի մոնիտորինգի համակարգ	98
5.	Մեթոդական առաջարկներ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակավայրերի կանաչ տնկարկների ռեեստրի ստեղծման և վարման վերաբերյալ	103
6.	Հաշվառվող տեղամասի անձնագիր	109
7.	Հաշվառվող տեղամասի կանաչ տնկարկների տեղեկագիր	116
8.	Գյումրի քաղաքի կանաչապատման և կանաչապատ տարածքների կառավարման խնդիրների վերաբերյալ 2008 - 2014 թվականներին զանգվածային լրատվամիջոցներով հրապարակված հոդվածների ցանկ	118
	ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	125

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գյումրի քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների կառավարման գործընթացների հանրային մոնիտորինգի արդյունքների հիման վրա պատրաստված սույն զեկույցի հիմնական նպատակն է՝ լայն հասարակության իրազեկումը.

- 1) ոլորտում տիրող իրավիճակի մասին, ՀՀ օրենսդրության նորմերի կատարման և խախտումների իրական պատկերի մասին, այն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների մասին, որոնք խոչընդոտում են ոլորտում գործուն, միասնական իրավական միջավայրի ձևավորմանը,
- 2) ոլորտում առկա, առավել ակնառու և տարածում գտած օրինախախտումների մասին,
- 3) այն միջոցառումների և քայլերի մասին, որոնք անհրաժեշտ են ձեռնարկել չեզոքացնելու համար այն գործոնները, որոնք խոչընդոտում են ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների կառավարման գործընթացների արդյունավետությանը և օրենսդրության նորմերի պահպանմանը:

Քաղաքի էկոլոգիական հիմնախնդիրների ամբողջ համալիրի մեջ կանաչապատման խնդիրները զբաղեցնում են առանձնահատուկ տեղ: Դա պայմանավորված է նրանով, որ կանաչ տնկարկները, մի կողմից, հանդիսանում են քաղաքի պլանավորման օրգանական մաս, մյուս կողմից՝ քաղաքային միջավայրում իրականացնում են մի շարք կարևոր գործառնություններ, ինչը զգալիորեն բարձրացնում է կանաչ տնկարկների իրական տնտեսական արժեքը:

Կանաչ տնկարկների կրճատման արդյունքում վատթարանում է շրջակա միջավայրի որակը, ինչը խիստ բացասաբար է անդրադառնում բնակչության առողջական վիճակի վրա: Քաղաքի կանաչապատ տարածքների ամբողջական համակարգի նույնիսկ մասնակի քայքայումը բերում է կանաչ տնկարկների պաշտպանական

և էկոլոգիական ֆունկցիաների գրեթե ոչնչացման, որոնց ստեղծման և երկարատև խնամքի վրա ծախսվել են մի քանի սերունդների ջանքեր և բյուջետային միջոցներ:

Գյումրի քաղաքում կանաչապատման ոլորտի հրատապ հիմնախնդիրներն են.

- կանաչապատ տարածքների կրճատումը,
- գոյություն ունեցող կանաչ տնկարկների անբավարար վիճակը,
- կանաչապատողների մասնագիտական գիտելիքների և իրազեկության պակասը, ինչպես նաև շահագրգռված չլինելը աշխատանքների բարձր որակով կատարման հարցում,
- բյուջետային միջոցների անբավարարությունը: Դրանց ոչ նպատակային օգտագործումը, մասնավորապես այգիներում, պուրակներում և փողոցային տնկարկներում ագրոտեխնիկական կանոնների, ժամկետների ու հաճախականության խախտմամբ, չհիմնավորված մասսայական էտի իրականացման դեպքերում:

Հայաստանի քաղաքների կանաչ ֆոնդի հիմնական սպառնալիքներն են.

- կանաչապատ տարածքների կառավարման և պահպանման արդյունավետ քաղաքականության բացակայությունը,
- կանաչապատ տարածքներին առնչվող քաղաքաշինական որոշումների կայացման գործընթացում հասարակության կառուցողական մասնակցության մեխանիզմների անկատարությունը և ընթացակարգերի բացակայությունը (մասնավորապես, այնպիսի գործուն մեխանիզմների, որոնք թույլ կտային հասարակությանը և էկոլոգիայի ոլորտում իրավասու մարմիններին վերահսկել քաղաքաշինական գործունեությունը ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներում),

- հասարակական վերահսկողության իրականացման գործուն մեխանիզմների և մատչելի հնարավորությունների բացակայությունը, մասնավորապես կանաչապատման նպատակով հատկացվող բյուջետային միջոցների և ծախսերի նկատմամբ վերահսկողության համար,
- իրավասու մարմինների կողմից հասարակական կարծիքի նկատմամբ առկա կանխակալ վերաբերմունքն ու համագործակցության համար պատրաստ չլինելը,
- համայնքային իշխանությունների, բնակչության, ոլորտի մասնագետների և մասնագիտացված ընկերությունների միջև փոխվստահության, խորհրդակցությունների և երկխոսության միջավայրի ու մեխանիզմների բացակայությունը,
- կանաչապատ տարածքների խնամքի և պահպանության գործընթացներից կրթական հաստատությունների, ընտանիքների և բնակիչների կտրված լինելը, բնապահպանական վարքագծի և մշակույթի ցածր մակարդակը,
- բնապահպանական շարունակական կրթության և դաստիարակության արդյունավետ համակարգի բացակայությունը, որի ներկա վիճակը չի կարող ապահովել քաղաքացիների շրջանում համապատասխան վարքագծի ձևավորում ու բնապահպանական մշակույթի մակարդակի բարձրացում,
- իրավական այնպիսի մեխանիզմների բացակայությունը, որոնք քաղաքացիներին թույլ կտային ինքնուրույն նախաձեռնել և մասնակցել մերձշենքային և ներթաղամասային տարածքների կանաչապատմանը և դրանց պահպանությանը,
- ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներում քաղաքաշինական նորմերի անտեսմամբ կառուցապատման թույլտվությունների տրամադրումը,

- ներթադամասային կանաչ տնկարկների ոչնչացումը ապօրինի շինարարության և կառուցապատված տարածքների ընդլայնման արդյունքում,
- կանաչ տնկարկների վիճակի վատթարացումը և կանաչապատ տարածքների կրճատումը ավտոմեքենաների թույլատրված և չթույլատրված կայանատեղերի հետևանքով,
- կանաչ տնկարկների վիճակի վրա բացասական ազդեցություն թողնող ընդհանուր էկոլոգիական վիճակի վատթարացումը քաղաքներում,
- կանաչապատ տարածքներում բույսերի հիվանդությունների կանխարգելման միջոցառումների և կանոնավոր խնամքի բացակայությունը, ագրոտեխնիկական կանոնների, ժամկետների ու հաճախականության խախտմամբ իրականացվող էտը և խնամքի այլ միջոցառումները, մասնագիտական մոտեցման բացակայությունն ու կազմակերպական թերությունները,
- կանաչապատ տարածքների ոռոգման ցանցերի բացակայությունը, գոյություն ունեցող ոռոգման համակարգերում առկա խնդիրները,
- քաղաքային տնկարանների և ծաղկաջերմոցային տնտեսությունների բացակայությունը, կանաչապատման գործընթացում տնկիների տեսակային կազմի ու որակի նկատմամբ անտարբերությունը,
- կանաչ տնկարկների ոչնչացումը՝ «ծառ-սպառնալիքների» չհիմնավորված ծառահատումների միջոցով,
- փոխհատուցող կամ փոխլրացնող կանաչապատման բացակայությունը հատված կամ չորացած ծառերի տեղերում,
- կանաչապատ տարածքների պահպանման նորմերին չհամապատասխանող ֆինանսավորումը, կանաչ շինարարության ֆինանսավորման նորմերի իջեցումը, ինչը հանդիսա-

նում է կանաչ տնկարկների տնտեսական, էկոլոգիական և սոցիալական նշանակության թերագնահատման հետևանք,

- կանաչապատ տարածքների իրական վիճակի վերաբերյալ շահագրգիռ կողմերի իրազեկության և նրանց միջև համագործակցության պակասը:

Վերջին տարիների ընթացքում ընդունված և կիրառվող որոշումների կայացման համակարգը, հասարակության կառուցողական մասնակցության բացակայության պայմաններում, քաղաքաշինության, կանաչապատման և բարեկարգման բնագավառում ստեղծել է տնտեսական նախադրյալներ, որոնք նպաստում են կանաչ տնկարկների ոչնչացմանը:

Իրականացվող քաղաքականությունը, գոյություն ունեցող նորմատիվային ակտերը և ներկա օրենսդրությունը ուղղված չեն բարձրացնելու հասարակության մասնակցությունը, որը կոչված է հանրային շահի պաշտպանությանը՝ ինչը չի նպաստում բնակավայրերում բնության ներուժի պահպանման և բազմապատկման գործուն, նպատակային ծրագրերի մշակմանը, հաստատմանն ու իրականացմանը: Կանաչապատման ոլորտում ներկայումս իրականացվող համայնքային քաղաքականությունը չունի հաշվետվական և վերահսկողական ազդեցիկ մեխանիզմներ:

Այս իրավիճակից դուրս գալու և կանաչ ֆոնդի կառավարման արդյունավետ համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ է իրականացնել կանաչ տնկարկների և հանգստի գոտիների կառավարման քաղաքականության բարեփոխումներ՝ որպես քաղաքների էկոլոգատնտեսական համալիր քաղաքականության կարևոր բաղադրիչ:

Քաղաքների, այդ թվում Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացումը պետք է և կարող է լինել այնպիսին, որպեսզի այն չվնասի շրջակա միջավայրը: Կանաչապատման ոլորտում գոյություն ունեցող իրավիճակի փոփոխությունը հնարավոր է միայն

կանաչ տնկարկների նկատմամբ մոտեցման որակական փոփոխության պայմանով:

Հաշվի առնելով ոլորտում առկա մարտահրավերները և զարգացման ժամանակակից պահանջները, Գյումրի քաղաքում կանաչապատ տարածքների կառավարման համապատասխան մեխանիզմների ստեղծումը, քաղաքացիների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև կառուցողական համագործակցության ձևավորումը, ինչպես նաև հանրության իրական մասնակցության ապահովումը՝ հանդիսանում են միանգամայն հրատապ խնդիրներ:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱԶՄՊԱՏ
ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿԻՑ ՍՈՒԲՑԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ, ՈՒՈՐՏԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

1. Գյումրի համայնքի քառամյա զարգացման ծրագրերի մոտեցումները

1.1. Գյումրի համայնքի քառամյա (2013-2016թթ.) զարգացման ծրագրում գերակա ուղղությունների թվում նշվել են.

- կենսամիջավայրի առողջացումը և կատարելագործումը,
- համայնքային կառավարման որակի արմատական բարեփոխումը:
- *«Համայնքային գույքի հաշվառում և կառավարում»* բաժնում (*բաժին 6*) համայնքի տնօրինության տակ գտնվող անշարժ գույքի հաշվառման, կառավարման, գործընթացներում զարգացման ծրագիրը նկատի է ունեցել միայն շենք-շինությունները և հողատարածքները:

Կանաչ տնկարկները՝ ծառերը և թփերը որպես անշարժ գույք չեն դիտարկվում, դրանց հաշվառում և գույքագրում չի նախատեսվում, նախատեսվում է միայն կանաչապատ տարածքների գույքագրում:

- *«Բնակչությունը և շրջակա միջավայրի պահպանություն»* բաժնում (*բաժին 8*) կանաչապատ տարածքների վերաբերյալ տեղեկությունները բերված են *«Ջրային ռեսուրսների պահպանություն»* ենթաբաժնում, դրանք հետևյալն են.

2012 թվականի գույքագրման տվյալների համաձայն Գյումրի համայնքի ընդհանուր օգտագործման կանաչ զանգվածը կազմում է 552հա, որից փողոցների սիզամարգեր՝ 10,5հա, զբոսայգիներ՝ 17,5հա, պուրակներ՝ 4,8հա, անտառ-պուրակներ՝ 77հա, Ախուրյան գետի ափամերձ տարածք՝ 22հա:

Ծառերի ընդհանուր թիվը 43 հազարից ավելի է, ծաղկային մակերեսը՝ 4.2հա, ծաղկասածիլների քանակությունը մոտ 0,706մլն հատ:

Համաձայն բերված տվյալների, տարբեր տեսակների ընդհանուր օգտագործման կանաչ զանգվածների ընդհանուր մակերեսը կազմում է՝ $10,5+17,5+4,8+77+22=131,8$ հա: Անհասկանալի է մնում թե 552հա-ի թվում մնացած 420,2հա տարածքը ինչ տեսակի ընդհանուր օգտագործման կանաչ զանգված է: Բացի այդ, նշված տվյալը չի համապատասխանում Գյումրու քաղաքապետարանին ուղղված հարցմանը ի պատասխան ստացված տվյալին, ըստ որի Գյումրիում հասարակական օգտագործման կանաչ զանգվածները և ծառատնկված վայրերը կազմում են 202,69հա (*Աղյուսակ 1*):

Ծրագրով նախատեսվել են.

- 2013 թվականին նախատեսվում է Գյումրի համայնքում ևս 2հա կանաչ տարածքների հիմնում,
- 2013 թվականին կապահովվի 112հա կանաչ տարածքների խնամքի և սպասարկման աշխատանքների կազմակերպումը, կկատարվի 3000 ծառատունկ: Հաշվի առնելով, որ Գյումրի համայնքը հանդիսանում է էկոլոգիապես ծանրաբեռնված բնակավայր, որտեղ անբարենպաստ բնակլիմայական պայմանները, տրանսպորտային միջոցների ավելացումն իրենց ազդեցությունն են թողնում շրջակա միջավայրի վրա, ներկայումս գերակա խնդիր է դարձել Գյումրի համայնքի կենտրոնական հատվածի զանգվածային կանաչապատումը:

Համաձայն նախատեսվող միջոցառումների՝ 552հա ընդհանուր օգտագործման կանաչ տարածքից խնամքի և սպասարկման աշխատանքներ են նախատեսվել միայն 112հա-ի համար, որը կազմում է 552հա-ի 20,3%-ը:

Ծրագրում բերված հիմնախնդիրների թվում նշված է.

- նոր կանաչ տարածքների հիմնման և պահպանման միջոցառումների իրականացում,
- գետակների ավիամերձ և հարակից տարածքների վերածուր՝ որպես էկոլոգիապես մաքուր հանգստի գոտու:

Նախատեսվող ծրագրային միջոցառումների թվում նշված է.

- համայնքի փողոցների կանաչ գոտիների և այլ համայնքապատկան կառույցների գույքագրում և քարտեզագրում,
- համայնքի կանաչ գոտիների ընդլայնում, նոր ծառերի տրնկում, գազոնների մշակում, ծաղկապատում, թփապատում,
- կանաչ գոտիներում ոռոգման ցանցերի վերանորոգում,
- Գյումրու այգի-պուրակային գոտիները, նաև Ախուրյան գետի ավիամերձ հատվածը և Չերքեզի ձորի տարածքը, քաղաքային հանգստի և ժամանցի բարեկիրթ, կանաչապատ և առավել օգտագործելի դարձնելու հետևողական ծրագրի իրականացում,
- գետակների հարակից տարածքներում թափոններից մաքրման աշխատանքների կազմակերպում և համակարգում,
- ավիամերձ տարածքներում սանիտարական մաքրման՝ աղբակույտերի վերացման և աղբահանության աշխատանքների կազմակերպում:

2013-2016թթ. քառամյա կապիտալ ծրագրերի մեջ քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների վերաբերյալ ծրագրեր չեն նախատեսվում:

1.2. Գյումրի համայնքի նախորդ քառամյա՝ 2009-2012թթ. զարգացման ծրագրի առաջնահերթությունների թվում նշվել են. քաղաքի բարեկարգման, կանաչապատման և սանիտարական մաքրման բնագավառներում՝

- քաղաքի տարբեր մասերում հիմնել և վերականգնել փոքր այգիներ՝ դրանք վերածելով հանգստի գոտիների,

- «Մայր Հայաստան» հուշահամալիրի արևմտյան լանջը անտառապատել՝ քաղաքի օդը թթվածնով հարստացնելու նպատակով:

Բնապահպանության ասպարեզում՝

- «Մուշ» թաղամասում ստեղծել նոր զբոսայգի,
- Ախուրյան գետի քաղաքամերձ և քաղաքին պատկանող տարածքներում ստեղծել հանգստի գոտի:

2. Գյումրու քաղաքային հողերի և կանաչապատ տարածքների վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալները (2013 թվականի համար)

Աղյուսակ 1. Քաղաքային հողեր, կանաչապատ տարածքներ

<i>Հ/հ</i>		<i>Ընդամենը, հա</i>
1	Քաղաքային հողերի ընդհանուր մակերեսը քաղաքի սահմանագծում տարեվերջին, ընդամենը	4429,50
2	այդ թվում՝ կառուցապատված	3852,36
3	քաղաքային օգտահողեր	413,58
4	Բոլոր կանաչ զանգվածների և ծառատնկված վայրերի ընդհանուր մակերեսը քաղաքի սահմանագծում, տարեվերջին	447,60
5	այդ թվում՝ հասարակական օգտագործման կանաչ զանգվածներ և ծառատնկված վայրեր	202,69
6	որից՝ կուլտուրայի և հանգստի, մանկական, բուսաբանական, կենդանաբանական և այլ այգիներ ու պուրակներ	36,25
7	անտառներ և պաշտպանական գոտիներ	150,84
8	մարզադաշտեր	15,60
9	Փողոցներին կից ծառատնկված շերտերի ընդհանուր երկարությունը /ըստ փողոցների առանցքի/, կմ	36,00

Աղյուսակ 1-ում բերված տվյալների աղբյուրը՝ Գյումրու քաղաքապետարանի պատասխան նամակը Գյումրու բնապահպանական տեղեկատվության հասարակական «Օրհուս» կենտրոնի հարցմանը:

3. ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1318-Ն որոշմամբ հաստատված «Տեխնիկական կանոնակարգ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը ներկայացվող պահանջների» կատարումը

«Տեխնիկական կանոնակարգ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը ներկայացվող պահանջների» հիման վրա կազմվել է հարցաշար՝ ուղղված Գյումրու քաղաքապետարանին, նպատակ ունենալով պարզելու տեղական իշխանությունների կողմից նորմատիվային պահանջների կատարման մակարդակը: Հարցաշարում ընդգրկված է եղել թվով 25 հարց, որոնցից 23-ը ուղղակիորեն առնչվում են նորմատիվային պահանջների կետերին:

Աղյուսակ 2. Վերլուծական աղյուսակ նորմատիվային պահանջների կատարման մակարդակի պարզաբանման համար

<i>Հ/հ</i>	<i>Հարցի բնույթը</i>	<i>Պատասխանի բնույթը</i>	<i>Նորմատիվ պահանջի կետը (ՀՀ կառավարության 30.10.08թ.-ի N 1318-Ն որոշման համալրված)</i>	<i>Նորմատիվային պահանջը</i>
1	<i>Քաղաքի կանաչ գոտիների բաշխումը ըստ նպատակային նշանակության (անտառապու-</i>	Անտառային	5-րդ կետ	2 մասի՝ անտառապուրակային և անտառատնտեսական

	<i>րակային, անտառատնտեսական, այլ)</i>			
2	<i>Քաղաքի կանաչ գոտու մակերեսը, այդ թվում՝ անտառապուրակային, անտառատնտեսական մասերի</i>	Անտառային հողերի մակերեսը կազմում է 150,84հա, որից անտառ՝ 4,84հա, վարելահող՝ 15,07հա, արոտ՝ 130,93հա	5-րդ կետ, 8-րդ կետ	Անտառապուրակային մասը պետք է կազմի 1830 հա (15հա/հազ. մարդ x 122 = 1830հա), աղբյուրը՝ նորմի 5-րդ կետ և աղյուսակ N 2, մարդահամար 2011թ.: Քաղաքի կանաչ գոտու մակերեսը պետք է կազմի ոչ պակաս 1771,6 հա (4429հա*40% = 1771,6 հա), աղբյուրը կետ 8, ենթակետ 1 և Գյումրի համայնքի 2013-16թթ. քառամյա զարգացման ծրագիր
3	<i>Կանաչապատ և այլ բաց տարածքների անընդհատ զարգացող համակարգի առկայությունը</i>	Հիմնավորող փաստաթուղթ՝ քաղաքի գլխավոր հատակագիծը	7-րդ կետ	Բնակավայրերում պետք է նախատեսել կանաչապատ և այլ բաց տարածքների անընդհատ զարգացող համակարգ
4	<i>Քաղաքի բնակելի շրջանների ընդհանուր մակերեսը</i>	2712,15հա	Հարցը չի վերաբերվում նորմատիվային	

			պահանջներին, այլ տրված է հաջորդ հարցի պահանջի կատարումը պարզելու համար	
5	<i>Տարբեր նշանակության կանաչապատ տարածքների ընդհանուր մակերեսը քաղաքի բնակելի շրջաններում</i>	44,3հա	8-րդ կետ, 2-րդ ենթակետ	Պետք է կազմի ոչ պակաս 678,04 հա (2712,15հա*25% = 678,04 հա), աղբյուրը 8-րդ կետ, 2-րդ ենթակետ և Գյումրու քաղաքապետարան (նախորդ հարցի պատասխանը)
6	<i>Արտադրական կազմակերպությունների, առկայությունը, որոնց համար պահանջվում է 1կմ-ից ավելի շառավղով սանիտարապաշտպանական գոտի</i>	Չկա	9-րդ կետ	Առկայության դեպքում բնակավայրի կանաչապատ տարածքների մակերեսն անհրաժեշտ է մեծացնել 15%-ից ոչ պակաս չափով
7	<i>Քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների մակերեսը</i>	Այդպիսի տեղեկություն առկա չէ	10-րդ կետ	Պետք է կազմի առնվազն 256,15 հա (նորմատիվի առավելագույն ցուցանիշի համար)՝ 21մ ² /մարդ x

				<p>121 976 մարդ = $2561496\text{մ}^2 =$ 256,15հա և առնվազն 195,16 հա (նորմատիվի նվազագույն ցու- ցանիշի համար)՝ $16\text{մ}^2/\text{մարդ} \times$ 121 976 մարդ = $1951616\text{մ}^2 =$ 195,16հա, աղբյուրը՝ 10-րդ կետ և աղյուսակ 4, մարդահամար 2011թ.</p>
8	<p><i>Քաղաքի անտառային զանգվածների առկայությունը և ընդհանուր մակերեսը</i></p>	<p>Այդպիսի ստեղծվու- թյուն առկա չէ</p>	<p>Կետ 10, ենթակետ 1, կետ 27</p>	<p>Մեծ քաղաքնե- րում քաղաքային անտառների զանգվածները պետք է ձևավորել որպես քաղաքա- յին անտառապու- րակներ՝ դրանց նկատմամբ կիրա- ռելով ոչ ավելի, քան $5\text{ մ}^2/\text{մարդ}$ նորմը: Բնակավայրե- րում, որտեղ չկան բնական անտառ- ներ և այլ կանաչ տարածքներ, կա- նաչ գոտիների անտառներն ստեղծվում են արհեստական եղանակով՝ գյու- ղատնտեսության</p>

				համար ոչ պիտանի հողատարածքների վրա
9	<i>Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներում որքան է կազմում 0,7կմ և ավելի լայնություն ունեցող խոշոր զբոսայգիների և անտառապուրակների ընդհանուր մակերեսը</i>	Այդպիսի տեղեկություն առկա չէ	Հարցում թույլ է տրված սխալ՝ 0,7կմ-ի փոխարեն պետք է լինի 0,5կմ: 10-րդ կետի 6-րդ ենթակետ	Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների կազմում պետք է կազմի 10%-ից ոչ պակաս
10	<i>Ցանկով նշված ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներում կանաչապատված տարածքների մակերեսը</i>	Այդպիսի տեղեկություն առկա չէ	14-րդ կետի 4-րդ ենթակետ	Զբոսայգիների և այգիների կամ պարտեզների ընդհանուր հաշվեկշռում կանաչապատված տարածքի մակերեսը պետք է լինի 70% -ից ոչ պակաս
11	<i>Մասնագիտացված այգիների առկայությունը</i>	Առկա չեն	13-րդ կետ	Բնակավայրերի զբոսայգիները կառուցապատելիս անհրաժեշտ է նախատեսել մասնագիտացված՝ մանկական, մարզական, ցուցահանդեսային, կենդանաբանական, բուսաբանական և այլ այգիներ, տնկարաններ

12	<i>Համայնքային ծառատնկարանի կամ ծաղկաջերմոցային տնտեսության առկայությունը</i>	Առկա չեն	23-րդ կետ, 3-րդ ենթակետ	Անտառապուրակային գոտու ընդլայնման համար պահուստի ստեղծում (ըստ բնակավայրի բնակչության թվի)՝ ծառաթփատեսակների տնկարան՝ 5 մ ² /մարդ չափով, ծաղկային տեսակների տնկարան՝ 0.7մ ² /մարդ չափով
13	<i>Բնակեցված գոտու այգիների մակերեսը ըստ թաղամասերի և դրանցում կանաչապատված տարածքի մակերեսը</i>	Այդպիսի տեղեկություն առկա չէ	8-րդ կետի 2-րդ ենթակետ	Բնակելի շրջանների համար պետք է լինի տարածքի մակերեսի 25%-ից ոչ պակաս չափով
14	<i>Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներում բնակելի գոտու կողմից ազատ մուտքով ապահովվածությունը</i>	Այդպիսի տեղեկություն առկա չէ	16-րդ կետ	Մեյսմիկ գոտիներում անհրաժեշտ է ապահովել ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների ազատ մուտք՝ չթույլատրելով պարիսպների կամ ցանկապատերի տեղադրում բնակելի գոտու կողմից

15	<i>Մանիտարապաշտպանական կանաչապատ գոտիների առկայությունը և դրանց ծառաթփային տրնկարկների շերտի լայնությունը բնակելի վայրերի կողմից</i>	Այդպիսի տեղեկություն առկա չէ	17-րդ կետ, 19-րդ կետ, 20-րդ կետ	Մանիտարապաշտպանական գոտիների անհրաժեշտության դեպքերում դրանց չափերը սահմանվում են սանիտարական նորմերի համաձայն, իսկ բնակության վայրի կողմից ծառաթփային տնկարկների շերտը նախատեսվում է 50մ-ից ոչ պակաս լայնությամբ
16	<i>Քաղաքի կանաչ գոտիների տարանջատված լինելը անտառապուրակային և անտառատնտեսական մասերի</i>	Տարանջատված չեն	20-րդ կետ, 1-ին ենթակետ	Բնակավայրերի կանաչ գոտիների տարածքային կազմակերպումը պետք է նախատեսի կանաչ գոտու տարանջատումն անտառապուրակային և անտառատնտեսական մասերի
17	<i>Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների ռոռզման ցանցի ընդհանուր երկարությունը և դրանց տեխնիկական վիճակը</i>	Հայուհու հրապարակ, տեխ, վիճակը՝ նորմալ, Թբիլիսյան իւճուղի՝ 1980մ՝ չի գործում	20-րդ կետ, 4-րդ ենթակետ	Բնակավայրերի կանաչ գոտիների տարածքային կազմակերպումը պետք է նախատեսի ռոռզման համակարգի կառուցումը՝ ելնելով կանաչ գոտու առանձնահատ-

				կույթուններից
18	<i>Կանաչ տնկարկների պահպանության ու խնամքի տարեկան պլանի կամ համալիր ծրագրի առկայությունը</i>	Ոչ	21-րդ կետ	Կանաչ գոտու տնկարկների պահպանությունն ու խնամքն ամբողջ տարվա ընթացքում կանաչապատման օբյեկտներում անցկացվող միջոցառումների համալիր է, որն ընդգրկում է ժամանակին կատարվող քաղհանները, պարարտացումը, հողացրումը, ոռոգումը, մաքրումը, էտումը, բույսերի ձմեռման նախապատրաստումը և այլն
19	<i>Կանաչ գոտիների, անտառների պահպանությունը և արդյունավետ օգտագործումը, կենսատեխնիկական ու հակահրդեհային միջոցառումների իրականացումը, տարածքի բարեկարգումը, ինչպես նաև անտառի կողմնակի օգտագործ-</i>	Ոչ	22-րդ կետ, 23-րդ կետ	Բնակավայրերի կանաչ գոտիների անտառների պահպանությունը և արդյունավետ օգտագործումն ընդգրկում է անտառային տնտեսության վարումը, կենսատեխնիկական ու հակահրդեհային միջոցառումների իրականացումը, տարածքի բարեկարգումը և անտառի կողմ-

	<i>ման սահմանափակումն ընդգրկող համալիր միջոցառումների ծրագրի առկայությունը</i>			նակի օգտագործման սահմանափակումը
20	<i>Քաղաքի կանաչ գոտու անտառապուրակային մասի ընդլայնման համար պահուստային հողատարածքների առկայությունը</i>	Այդպիսի տեղեկություն առկա չէ	10-րդ կետի 4-րդ ենթակետ, 23-րդ կետ, 3-րդ ենթակետ	Տափաստանային գոտու բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների նորմը թույլատրվում է ավելացնել 10-20%-ով
21	<i>Վերջին յոթ տարիների ընթացքում անտառավերականգնման աշխատանքների իրականացումը: Այդ ուղղությամբ իրականացված միջոցառումները, ընտրված ծառատեսակների անվանումը, անտառի բնականոն վերականգնմանը ուղղված, ինչպես նաև քաղաքի կանաչ գոտիների և անտառների արհեստական եղանակով ստեղծման</i>	Նշվել է «Մրգատու այգի» անտառ-պուրակում, «Մայր Հայաստան» անտառ-պուրակում, Հայֆրանսիական այգում, «Զարդի Ձոր» հուշահամալիրում կատարված աշխատանքները	27, 20-3, 23, 24. 25, 25-րդ կետեր	Բնակավայրերում, որտեղ չկան բնական անտառներ և այլ կանաչ տարածքներ, կանաչ գոտիների անտառներն ստեղծվում են արհեստական եղանակով՝ գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողատարածքների վրա: Անտառավերականգնման աշխատանքները պետք է իրականացվեն ծառերի աճեցման պայմանները հաշվի առնող ծառատեսակների ընտրը-

	<i>միջոցառումները</i>			ման և այնպիսի միջոցառումների անցկացման եղանակով, որոնք կնպաստեն անտառի բնականոն վերականգնմանը
22	<i>Վերջին յոթ տարիների ընթացքում արժեքավոր լանդշաֆտների ձևավորման, ճանապարհների, անտառեզրերի և բացատների դեկորատիվ ձևավորման միջոցառումները</i>	Նշվել են թվով 16 տարածքներում իրականացված տարբեր միջոցառումներ	26-րդ կետ	Կանաչ գոտիների անտառապուրակային գոտում անտառային մշակաբույսերը ընտրվում են հաշվի առնելով արժեքավոր լանդշաֆտների ձևավորումը և ճանապարհների, անտառեզրերի և բացատների դեկորատիվ ձևավորումը
23	<i>Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներումս աներկայումս ատկա ծառաթփային բուսականության տեսակային կազմը</i>	Նշվել է բույսերի ընդհանուր թվով 55 տեսակ կամ ցեղ, որոնց թվում մեր տարածաշրջանին ոչ բնորոշ բույսեր՝ նոճի, գետնանոճի, հոնի, հաճաբենի, սոսի, եղևին, նշենի	30-րդ կետի 4-րդ ենթակետ	Նորմում նշվում են Շիրակի բարձրավանդակում կանաչապատման համար կիրառվող ծառաթփային բուսականության տեսակները

24	Վերջին յոթ տարիներին կանաչապատման աշխատանքներում օգտագործվող տնկիների (ծառերի և թփերի) տեսակային կազմը	Տրվել է միայն 2014թ. -ին օգտագործված բույսերի ցեղերի ցանկը՝ թվով 13 ցեղ, տեսակային կազմը չի տրվել	30-րդ կետի 4-րդ ենթակետ	Նորմում նշվում են Շիրակի բարձրավանդակում կանաչապատման համար կիրառվող ծառաթփային բուսականության տեսակները
25	Վերջին յոթ տարիներին կանաչապատման խնդիրների, ծառահատման և էտի թույտվույթունների վերաբերյալ քաղաքացիներից ստացված գրավոր ու բանավոր դիմումների և բողոքների քանակը և դրանց բաշխումը ըստ տեսակների.	Տրվել է միայն 2014թ. -ին ստացված դիմումների քանակը ըստ տեսակների	Հարցը չի վերաբերվում նորմատիվային պահանջներին	

Աղբյուրը՝ Գյումրու քաղաքապետարանի պատասխան նամակը «Մոնիտորինգ հանուն ապագայի» ծրագրի հարցմանը:

Ծանոթություն.

- ըստ «Գյումրի համայնքի քառամյա (2013-2016թթ.) զարգացման ծրագրում» բերված տվյալի՝ համայնքի տարածքը, 2012 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ, 4429հա է,
- 2011 թվականի մարդահամարի տվյալներով Գյումրի քաղաքի մշտական բնակչությունը կազմում է 121 976 մարդ:

4. Գյուճիքի քաղաքի կանաչապատման ու կանաչապատ տարածքների կառավարման վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցներով հրապարակված հոդվածներում բարձրացվող խնդիրները

Աղյուսակ 3. Գյուճիքի քաղաքի կանաչապատման ու կանաչապատ տարածքների կառավարման խնդիրների վերաբերյալ 2008-2014 թվականներին զանգվածային լրատվամիջոցներով հրապարակված հոդվածների քանակը ըստ հիմնախնդրի դասակարգման

Հ/հ	Հոդվածում ներկայացվող հիմնախնդիրների տեսակը	Հոդվածների քանակը	Մասնաբաժինը հոդվածների ընդհանուր քանակում (%)
1	Ծառահատում (տեղափոխում), հողհատկացում, կառուցապատում	7	18,92
2	Ծառահատում (տեղափոխում)	6	16,22
3	Ծառահատում, կառուցապատում (ճանապարհաշինություն)	2	5,41
4	Հողհատկացում	3	8,11
5	Հողհատկացում, կառուցապատում	8	21,62
6	Ծառահատում (տեղափոխում), տարածքի սանիտարական վիճակ	1	2,70
7	Ծառահատում, կանաչ տնկարկների խնամքի խնդիրներ	1	2,70
8	Ծառահատում, հողհատկացում, կառուցապատում, կանաչապատ տարածքների պահպանություն	2	5,41
9	Քաղաքաշինական նորմերի հետ կապված խնդիրներ	1	2,70
10	Կանաչ տնկարկների խնամքի և պահպանության խնդիրներ, հողհատկացում, կառուցապատում	1	2,70
11	Տարածքի սանիտարական վիճակ, կանաչ տնկարկների խնամքի խնդիրներ, ծառատունկ	2	5,41
12	Ծառատունկ	1	2,70

13	Տարածքի սանիտարական վիճակ	1	2,70
14	Ծառահատում, տնկարկների խնամք, տարածքի սանիտարական վիճակ, հողհատկացում, կառուցապատում	1	2,70
Ընդամենը		37	100

Հավելված 8-ում բերվում է բոլոր հողվածների լրիվ անվանումները, աղբյուրները և հրապարակման ամսաթվերը: Հողվածների մեծ մասը միաժամանակ առնչվում են մի քանի խնդիրների:

Աղյուսակ 3-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ.

- 37 հողվածներից 20-ը առնչվում են ծառահատման խնդրին, այդ թվում 10-ը միաժամանակ առնչվում են հողհատկացման գործընթացներին,
- կանաչապատ տարածքների հետ առնչություն ունեցող հողհատկացումների վերաբերյալ հողվածների ընդհանուր քանակը կազմում է՝ 22,
- ծառատունկի խնդիրներին առնչվում է 3 հողված,
- կանաչ տարածքների խնամքին, պահպանմանը՝ 5 հողված,
- կանաչ տարածքների սանիտարական վիճակին՝ 5 հողված:

5. Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների և կանաչ տնկարկների խնամքին, ինչպես նաև փողոցային տնկարկներին առնչվող հիմնախնդիրներ

- Երկու-երեք լավ խնամված այգիների և պուրակների հետ մեկտեղ քաղաքի բնակելի հատվածում և մերձակա տարածքներում գտնվող զբոսայգիների, այգիների և պուրակների մի զգալի մասը ավելի քան 20 տարի մատնված է անուշադրության, լրիվ ավերված կամ կիսավերված վիճակում են, տեղ-տեղ վերածված աղբակույտերի: Դրանց թվում են՝ Բարեկամության զբոսայգին, Կոմերիտմիության այգին, Բուսաբանական այգին, Գյումրին հատող գետակների երկարությամբ ձգվող կանաչ տարածքները:



Կոմերիտմիության այգին, հուլիս, 2014թ

- Վտանգ ներկայացնող ծառերի անվան տակ ավելի հաճախ հատվում կամ «մինչև բունը» էտվում են վտանգ չներկայացնող ծառեր:



Հաղթանակի պողոտայի այգին, փետրվար, 2014թ.

Փողոցային տնկարկներում զգալի մաս են կազմում փաստացի չկանաչապատված հատվածները:

Համեմատաբար բավարար վիճակում գտնվող Գորկու փողոցում «Մոնիտորինգ հանուն ապագայի» ծրագրի մոնիտորինգային խմբի կողմից իրականացված դիտարկումը պարզաբանել է կանաչ տնկարկների հետևյալ վիճակը:

Աղյուսակ 4. Գորկու փողոցի փողոցային տնկարկների փաստացի առկայությունը

<i>Փողոցի կանաչապատ տարածքի բաշխումը</i>	<i>Մակերեսը, հա</i>	<i>Մասնաբաժինը փողոցի կանաչապատ տարածքի մեջ, %</i>
Փողոցի կանաչապատ տարածքի փաստացի կանաչապատված մասի մակերեսը	0.2349	68,46
Փողոցի կանաչապատ տարածքի փաստացի չկանաչապատված մասի մակերեսը	0.1082	31,54
<i>Ընդամենը</i>		<i>100</i>

6. Համայնքային բյուջեի ծախսերը ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների կառավարման և կանաչապատման ուղղություններով

- Համայնքային բյուջեի անցած՝ 2013 թվականի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունում բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումներում կանաչապատ տարածքների կառավարման և կանաչապատման վերաբերյալ կա միայն մեկ անվանում՝ «Անտառային տնտեսություն»:

- «Անտառային տնտեսություն» անվանման դիմաց ֆինանսական միջոցներ նախատեսված չեն՝ հաստատված պլանները և փաստացի ծախսերը գրո են:
- Կարելի է միայն ենթադրել, որ կանաչապատ տարածքների կառավարման և կանաչապատման վերաբերյալ տարեկան հաստատված պլանները և փաստացի ծախսերը կարող են ընդգրկված լինել բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման այլ բաժիններում, խմբերում և դասերում, օրինակ՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն» կամ այլ անվանումներ կրող տողերում:

Աղբյուրը՝ Գյումրու քաղաքապետարանի պաշտոնական կայք՝

[http://www.gyumricity.am/index.php/hy/gyumri-community-community-budget](http://www.gyumricity.am/index.php/hy/gyumri-community/community-budget)

7. ՀՀ բնապահպանության նախարարության՝ որպես վերահսկողություն իրականացնող մարմնի տվյալները ապօրինի ծառահատումների վերաբերյալ

2010 - 2013 թվականներին և 2014 թվականի 8 ամիսների ընթացքում Գյումրի քաղաքում արձանագրվել է ապօրինի ծառահատման 24 դեպք, որի համար 24 ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 1300.0 հազար դրամ գումարի վարչական տուգանքի որոշումներ և հաշվարկվել է բնությանը պատճառած վնաս՝ 1118.2 հազար դրամ:

Աղյուսակ 5. Տեղեկություններ սպորինի ծառահատումների վերաբերյալ

<i>Հ/հ</i>	<i>Թվականը</i>	<i>Սպորինի ծառահատման դեպքերի քանակը</i>	<i>Վարչական տուգանքները, հազ. դրամ</i>	<i>Բնությանը պատճառած վնասները, հազ. դրամ</i>
1	2010	8	400.0	296.2
2	2011	6	300.0	290.5
3	2012	5	350.0	357.5
4	2013	4	200.0	165.0
5	2014 (մինչև 25-ը օգոստոսի)	1	50.0	9.0
<i>Ընդամենը</i>		<i>24</i>	<i>1300.0</i>	<i>1118.2</i>

Վարչական տուգանքները և բնությանը պատճառած վնասները օրենքով սահմանված կարգով վճարվել են պետական բյուջե:

Վերջին հինգ տարիների ընթացքում Գյումրու քաղաքապետարանի կողմից ծառահատումների, ծառերի վնասման և էտի վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել: Նշված վարչական իրավախախտումները հայտնաբերվել են բնապահպանական տեսչական շրջայցերի արդյունքում:

Աղբյուրը՝ ՀՀ բնապահպանության նախարարության պատասխան նամակը «Մոնիտորինգ հանուն ապագայի» ծրագրի հարցմանը:

8. Բնակավայրերի կանաչապատման և կանաչապատ տարածքների կառավարման ՀՀ օրենսդրությունը

Բնակավայրերի կանաչապատման և կանաչապատ տարածքների կառավարման ոլորտը կարգավորող հիմնական օրենսդրաիրավական ակտերն են՝

- ՀՀ Սահմանադրությունը,
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը,
- ՀՀ օրենքը «Քաղաքաշինության մասին»,

- ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին»,
- ՀՀ հողային օրենսգիրքը,
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը,
- ՀՀ կառավարության 30-ը հոկտեմբերի 2008 թվականի N 1318-Ն որոշումը բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին
- ՀՀ կառավարության 28 հոկտեմբերի 1998 թվականի N 660 որոշումը կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը հաստատելու մասին:

Նշված օրենսդրաիրավական ակտերը անդրադառնում են բնակավայրերի կանաչապատման և կանաչապատ տարածքների կառավարման ոլորտի միայն առանձին խնդիրների: Օրինակ, հողային օրենսգիրքը անդրադարձ ունի ոլորտին միայն այն մասով, որ արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք գետափեր են, զբոսայգիներ, պուրակներ, այգիներ, լողափեր և ընդհանուր օգտագործման այլ տարածքներ:

Նույնիսկ ՀՀ կառավարության 30-ը հոկտեմբերի 2008 թվականի N 1318-Ն որոշումը, որը թվում է թե սահմանելու էր քաղաքային և գյուղական բնակավայրերի կանաչ գոտիներին առնչվող համալիր պահանջներ, իրականում անդրադառնում է միայն բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը, կանաչ գոտիների անտառների պահպանությանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջներին:

ՀՀ օրենսդրությունը ընդհանրապես չի անդրադառնում կամ հստակորեն չի կարգավորում ոլորտին անմիջականորեն առնչվող այնպիսի հրատապ հիմնախնդիրներ, ինչպիսիք են.

- կանաչ տնկարկների հաշվառումը, գույքագրումը, համայնքային ռեեստրի ստեղծումը և վարումը,
- կանաչապատ տարածքների անձնագրավորումը,
- կանաչ ֆոնդի կառավարումը,
- կանաչ տնկարկների վիճակի տարեկան մոնիտորինգ իրականացնելը,
- կանաչ ֆոնդի օբյեկտների նկատմամբ սեփականության իրավունքը,
- հասարակության մասնակցությունը բնակավայրի կանաչապատ տարածքների կառավարման գործընթացում, բնակչության իրավունքներն ու պարտականությունները կանաչ ֆոնդի օգտագործման ոլորտում,
- բնակավայրի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների պահպանումը,
- կանաչապատ տարածքների օգտագործման ռեժիմը,
- կանաչ տնկարկների խնամքի պահանջները,
- կանաչ տնկարկների հատման (վերատնկման) կարգը,
- փոխհատուցող կանաչապատումը,
- կանաչ տնկարկների հատման համար փոխհատուցման արժեքի հաշվարկման և վճարման կարգը,
- կանաչ տնկարկների խնամքի և պահպանման ծախսերի ֆինանսավորումը,
- կանաչ տնկարկների խնամքի և պահպանության նկատմամբ վերահսկողությունը,
- ոլորտում մոնիտորինգի, հաշվետվական և տեղեկատվական գործընթացների իրականացման կարգը:

9. Հանրության իրազեկվածությունը, կարծիքը և առաջարկությունները

«Մոնիտորինգ հանուն ապագայի» երիտասարդական նախաձեռնող խմբի կողմից սոցիոլոգիական հարցում է անցկացվել

Գյումրիում բնակվող 200 անձանց շրջանում, հետևյալ նպատակներով.

- հանրության իրազեկվածության և կարծիքի բացահայտում,
- հանրության իրազեկում,
- հանրության առաջարկությունների հստակեցում և առաջարկությունների փաթեթի մշակման գործընթացում հանրության անուղղակի մասնակցության ապահովում:

Սոցիոլոգիական հարցման հարցաթերթիկում տեղ են գտել, մասնավորապես, հետևյալ հարցերը:

1) Ու՞մ են պատկանում քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները:

- համայնքին,
- տեղական ինքնակառավարման մարմիններին,
- գործարարներին,
- պետությանը,
- այլ _____:

Հարցվողների 59,5%-ը իրազեկված են, որ ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները համայնքային սեփականություն է, իսկ 40,5%-ի կարծիքով դրանց սեփականատերը տեղական ինքնակառավարման մարմիններն են, գործարարները կամ պետությունը:

2) Ձեր կարծիքով ի՞նչ հիմնախնդիրներ կան ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների կառավարման ոլորտում:

Հարցվողների մեծամասնությունը (մոտ 90%-ը) առանձնացրել են հետևյալ խնդիրները.

- կանաչապատ տարածքների քանակը սակավ է,
- կառավարման համակարգում որակյալ մասնագետների պակասը և պատկան մարմինների անտարբերությունը,

- բնակչության անտարբեր վերաբերմունքը այդ տարածքների նկատմամբ:

Հարցվողների ավելի փոքր մասը (20-25%-ը) առանձնացրել են հետևյալ խնդիրները.

- ոռոգման համակարգի բացակայությունը,
- այդ տարածքների ոչ բավարար խնամքը,
- կանաչապատ տարածքներում երեկոյան և գիշերային ժամերին լուսավորության խնդիրը, աղբամանների պակասը, նստարանների անբավարար քանակը կամ դրանց ոչ բարձր վիճակը:

3) Ըստ Ձեզ ի՞նչ վիճակում են գտնվում Գյումրու ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները.

- գերազանց (*հարցվողները չեն ընտրել այս պատասխանը՝ 0%*),
- լավ (*7%*),
- միջին (*34%*),
- վատ (*47%*),
- շատ վատ (*6,5%*),
- դժվարանում եմ պատասխանել (*5,5%*):

4) Ո՞վ է պատասխանատու ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների կառավարման համար.

- տեղական ինքնակառավարման մարմինները (*այս պատասխանը ընտրել են հարցվողների 65,5%-ը*),
- գործարարները (*3%*),
- պետությունը (*6,5%*),
- մարզպետարանը (*8,5%*),
- հանրությունը (*16,5%*):

5) Ըստ Ձեզ ի՞նչ պետք է անել, որպեսզի բարելավվի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների վիճակը:

Հարցվողները առանձնացրել են մի շարք անհրաժեշտ միջոցառումներ, որոնք ներկայացվում են սույն զեկույցի հաջորդ՝ «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում:

Հարցվողների մեծ մասը վերոհիշյալ հարցերին տվել են մի քանի պատասխաններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ոլորտի տեղական քաղաքականության, համայնքի քառամյա զարգացման ծրագրերի մասով

- Գյումրի համայնքի վերջին երկու քառամյա զարգացման ծրագրերով նախատեսվող միջոցառումների թվում նախատեսվում են ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների խնամքի և նոր կանաչապատ տարածքների հիմնման բավականին մեծածավալ աշխատանքներ, սակայն դրանց հիմնական մասը առ այսօր չի իրականացվել (լքված և անուշադրության մատնված այգի-պուրակների վերակառուցման, Ախուրյան գետի և Գյումրին հատող գետակների ափամերձ հատվածները, Չերքեզի ձորի տարածքը քաղաքային հանգստի և ժամանցի, կանաչապատ և առավել օգտագործելի գոտիներ դարձնելու ծրագրերի իրականացումը):
- Համայնքի տնօրինության տակ գտնվող անշարժ գույքի հաշվառման, գույքագրման, կառավարման, գործընթացներում քառամյա (2013-2016թթ.) զարգացման ծրագիրը նկատի է ունեցել միայն շենք-շինությունները և հողատարածքները, այդ թվում նաև կանաչապատ տարածքները: Կանաչ տնկարկները որպես անշարժ գույք չեն դիտարկվում (փաստաթղթում բերվում է 43 հազարից ավելի ծառերի վերաբերյալ ընդհանրացված տվյալը, սակայն որպես համայնքապատկան անշարժ գույք, ըստ տարածքների ծառերի և թփերի հաշվառում և գույքագրում չի նախատեսվում):
- Ներկայումս գործող քառամյա զարգացման ծրագրում բերված քաղաքի կանաչապատ տարածքների վերաբերյալ քանակական տվյալները խիստ հակասում են տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղված հարցումներին ի պատասխան ստացված տվյալներին: Ընդհանուր

օգտագործման կանաչապատ տարածքների ընդհանուր մակերեսի վերաբերյալ ծրագրում բերված է 552հա քանակական տվյալը: Սակայն նույն փաստաթղթում ներկայացվող տարբեր տեսակների ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների մակերեսների գումարը կազմում է ընդամենը 131,8հա: Անորոշ է մնում թե մնացած 420,2հա տարածքը ինչ տեսակի ընդհանուր օգտագործման կանաչ զանգված է: Համալիր և հավաստի տեղեկատվության պակասը դժվարացնում է փաստարկված եզրակացությունների հանգելը, այդ թվում նորմատիվային պահանջների կատարման վերաբերյալ:

- Ինչպես ասում են՝ *կառավարումը արդյունավետ չի կարող լինել, եթե չգիտես ինչն էս կառավարելու*: Առաջարկվում է նախատեսել, ծրագրել և իրականացնել համայնքային կանաչ տնկարկների (ծառեր, թփեր) գույքագրում և կանաչապատ տարածքների անձնագրավորում: Այդ գործընթացների համար, որպես մեթոդական ուղեցույցներ, առաջարկվում է կիրառել *Հավելված 2*-ում բերված «*Կանաչ տնկարկների գույքագրման և կանաչապատ տարածքների անձնագրավորման մեթոդ*»-ը, *Հավելված 6*–ում բերված «*Հաշվառվող տեղամասի անձնագրի*» օրինակելի ձևը և *Հավելված 7*-ում բերված «*Հաշվառվող տեղամասի կանաչ տնկարկների տեղեկագրի*» օրինակելի ձևը: Նշված մեթոդական ուղեցույցը և փաստաթղթերի օրինակելի ձևերը մշակվել են հատուկ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կիրառվելու նպատակով և ընդգրկված են «Բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների և դրանց կառավարման գործընթացների հանրային մոնիտորինգի մեթոդական ձեռնարկ»-ում՝

<http://www.3nature.am/docs/Methodological%20Manual.pdf>

<http://aarhus.am/images/Gyumri/Methodological%20Manual.pdf>

- Կանաչապատ տարածքների պահպանության, սպասարկման ու զարգացման ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքականության և գործունեության (կարճ, միջին և երկարաժամկետ ժամանակաշրջանների համար) հիմնական ուղղությունների ճշգրտման և որոշման համար արժանահավատ տեղեկատվությամբ ապահովման նպատակով առաջարկվում է կանաչ տնկարկների ռեեստրի ստեղծումը և դրա վարումը: Դա կնպաստի բնակավայրում կանաչ տնկարկների հաշվառման ու վիճակի ընթացիկ վերահսկողության իրականացմանը, ինչպես նաև կանաչ տնկարկների վիճակի և քանակի մոնիտորինգի անցկացմանը, կանաչ տնկարկների պահպանության, խնամքի ու զարգացման գործընթացներում առավել ռացիոնալ մոտեցումների մշակմանը, ինչպես նաև կանաչ տնկարկների քանակի և վիճակի վերաբերյալ հանրությանը, պետական մարմիններին, կանաչապատ տարածքների կառավարման և սպասարկման մարմիններին արժանահավատ տեղեկատվությամբ ապահովմանը: Բնակավայրի կանաչ տնկարկների ամբողջական ռեեստրը և դրանում պլանավորվող բոլոր փոփոխությունները պետք է հասանելի լինեն հանրությանը և տեղադրված լինեն համայնքապետարանների տեղեկատվական կայքերում: *Հավելված 5-ում* բերված է «Մեթոդական առաջարկներ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակավայրերի կանաչ տնկարկների ռեեստրի ստեղծման և վարման վերաբերյալ» ուղեցույցը, որը առկա է նաև նախորդ կետում նշված մեթոդական ձեռնարկում (*նշված կայքերում առկա է ուղեցույցի էլեկտրոնային տարբերակը*):

2. ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1318-Ն որոշմամբ հաստատված «Տեխնիկական կանոնակարգ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը ներկայացվող պահանջների» կատարման մասով

- Նորմատիվային ակտի պահանջներին անմիջապես առնչվող 23 հարցերից 7-ի դեպքում տեղական ինքնակառավարման մարմնից ստացվել է «այդպիսի տեղեկություն առկա չէ» պատասխանը:
- Կանաչապատ տարածքների մակերեսներին վերաբերվող այն հարցերից, որոնց պատասխաններում բերվել են քանակական տվյալներ, կարելի է ենթադրել, որ դրանք զիջում են նորմատիվային պահանջներով հաստատված մակերեսների չափերին՝ *Աղյուսակ 2-ի հարց 2*-ում բերվող տվյալի դեպքում՝ ավելի քան 12 անգամ, *Աղյուսակ 2-ի հարց 5*-ում բերվող տվյալի դեպքում՝ ավելի քան 15 անգամ:
- Քաղաքի կանաչ գոտիները ըստ նպատակային նշանակության բաշխված չեն անտառապուրակային և անտառատնտեսական մասերի, որը նույնպես նորմատիվային պահանջի խախտում է: Այլ կերպ ասած, քաղաքում բացակայում է կանաչ գոտու անտառատնտեսական մասը, որը պետք է ունենա անտառատնտեսական արտադրության զարգացման ու անտառապուրակային մասի ընդլայնման համար պահուստի ստեղծմանն ուղղված տնտեսության վարման ռեժիմ:
- Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների պատշաճ կառավարման համար ապահովված չէ նաև համայնքային ծառատնկարանի և ծաղկաջերմոցային տնտեսության առկայությունը:
- Բացառությամբ մի հրապարակի, քաղաքի կանաչապատ տարածքները ոռոգման ցանց չունեն, իսկ գոյություն ունեցողները չեն գործում:

- Կանաչ տնկարկների պահպանության ու խնամքի տարեկան պլաններ կամ համալիր ծրագրեր առկա չեն:
- Առկա կանաչ տնկարկների տեսակային կազմի վերաբերյալ հարցի (*Աղյուսակ 2-ի հարց 23*) պատասխանից կարելի է ենթադրել, որ տեղական ինքնակառավարման մարմիններում այդ ուղղությամբ հավաստի տվյալներ առկա չեն, քանի որ բերված 55 տեսակի և ցեղի անվանացանկում նշվել են Շիրակի մարզին ոչ բնորոշ բույսեր, այդ թվում այնպիսիները, որոնք ընդհանրապես չեն աճում Գյումրի քաղաքի կլիմայական պայմաններում (նոճի, հաճարենի, սոսի, եղևին):
- Քաղաքի կանաչապատման և կանաչապատ տարածքների կառավարման ոլորտում առկա բոլոր խնդիրների արդյունավետ լուծման համար առաջարկվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, գործող օրենսդրությանը համապատասխան, որպես նորմատիվային ակտ ընդունել և առաջնորդվել *«Գյումրի քաղաքի կանաչ տնկարկների խնամքի և կանաչապատ տարածքների պահպանման հիմնական կանոններ»*-ով: Հավելված 1-ում բերված է բնակավայրերի կանաչ տնկարկների խնամքի և կանաչապատ տարածքների պահպանման օրինակելի հիմնական կանոնները: Այդ կանոնների էլեկտրոնային տարբերակը առկա է <http://www.3nature.am/docs/Methodological%20Manual.pdf> <http://aarhus.am/images/Gyumri/Methodological%20Manual.pdf> կայքերում տեղադրված ձեռնարկում: Կանաչ տնկարկների խնամքի և կանաչապատ տարածքների պահպանման հիմնական կանոններն ընդգրկում են հետևյալ բաժինները:
 - 1) Կանաչ ֆոնդի կառավարումը:
 - 2) Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների մակերեսի նորմերը:
 - 3) Կանաչ ֆոնդի օբյեկտների նկատմամբ սեփականության իրավունքը:

- 4) Հասարակության մասնակցությունը բնակավայրի կանաչապատ տարածքների կառավարման գործընթացում, բնակչության իրավունքներն ու պարտականությունները կանաչ ֆոնդի օգտագործման ոլորտում, բնակավայրի կանաչապատ տարածքների պահպանումը:
- 5) Կանաչապատ տարածքների օգտագործման ռեժիմը:
- 6) Կանաչ տնկարկների խնամքի պահանջներ:
- 7) Կանաչ տնկարկների հատման (վերատնկման) կարգը:
- 8) Փոխհատուցող կանաչապատում:
- 9) Կանաչ տնկարկների հատման համար փոխհատուցման արժեքի հաշվարկման և վճարման կարգը:
- 10) Կանաչ տնկարկների հաշվառումը:
- 11) Կանաչ տնկարկների խնամքի և պահպանման ծախսերի ֆինանսավորումը:
- 12) Կանաչ տնկարկների խնամքի և պահպանության նկատմամբ վերահսկողությունը:

3. Գյումրի քաղաքի կանաչապատման ու կանաչապատ տարածքների կառավարման վերաբերյալ 2008-2014 թվականներին զանգվածային լրատվամիջոցներով հրապարակված հոդվածներում բարձրացվող խնդիրների մասով

- Հրապարակված հոդվածների 54 տոկոսը առնչվում է ծառահատման խնդրի հետ, ընդ որում, այդ հոդվածների կեսը միաժամանակ առնչվում է հողհատկացման գործընթացների հետ, ինչը ենթադրել է տալիս, որ հաճախ ծառահատումները պայմանավորված են հողհատկացման փաստով: Կանաչապատ տարածքների հետ առնչություն ունեցող հողհատկացումների վերաբերյալ հոդվածների ընդհանուր

քանակը կազմում է հրապարակված հոդվածների ընդհանուր թվի մոտ 59,5 տոկոսը:

- Ծառատունկի, կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման, ինչպես նաև կանաչապատ տարածքների սանիտարական վիճակի վերաբերյալ հոդվածները անհամեմատ ավելի քիչ են հետաքրքրել զանգվածային լրատվամիջոցներին, դրանց վերաբերյալ հրապարակված հոդվածները կազմում են հոդվածների ընդհանուր թվի համապատասխանաբար՝ 8,1, 13,5, 13,5 տոկոսը: Կան նաև կանաչապատման ու կանաչապատ տարածքների կառավարման հետ առնչվող այլ հոդվածներ, որոնք ավելի փոքր տոկոս են կազմում (*Աղյուսակ 3*):

4. Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների և կանաչ տնկարկների խնամքին առնչվող հիմնախնդիրների մասով

- Երկու-երեք լավ խնամված այգիների և պուրակների հետ մեկտեղ քաղաքի բնակելի հատվածում և մերձակա տարածքներում գտնվող զբոսայգիների, այգիների և պուրակների մի զգալի մասը սկսած 1990-ական թվականներից գտնվում են ավերված վիճակում: Այդ տարածքների մեծ մասը կարելի է համեմատաբար փոքր դրամական ներդրումով վերադարձնել բնակչությանը՝ որպես հանգստի հարմարավետ վայրեր: Այդ տարածքներում կանաչ տնկարկները որոշ չափով ինքնավերականգնվել են (հատված տնկարկները վերածվել են մացառուտների): Կա միայն ծառատնկման միջոցներով դրանք լրացնելու, գոյություն ունեցող տնկարկները կարգի բերելու անհրաժեշտություն, ինչպես նաև բարեկարգելու, աղբավայրի վերածված մասերը մաքրելու և համապատասխան սարքավորումներ՝ նստարաններ, աղբամաններ տեղադրելու կարիք: Ծառատունկերին անհրաժեշտ է մասնակից դարձնել մոտակա

տարածքների բնակիչներին, ինչը կնպաստի կանաչ տընկարկների պահպանությանը: Դրանց թվում են՝ Բարեկամության զբոսայգին, Կոմերիտմիության այգին, Գյումրին հատող գետակների ափամերձ կանաչապատ տարածքները:

- Կանաչ տնկարկների խնամքի և պահպանման համալիր միջոցառումների ցանկում կարևոր տեղ ունեն կանաչ տնկարկների վիճակի տարեկան մոնիտորինգների իրականացումը: Կանաչ տնկարկների վիճակի մոնիտորինգը իրականացվում է հետևյալ նպատակներով.

1) կանաչ տնկարկների առկա վիճակի գնահատում,

2) կանաչ տնկարկների վիճակի փոփոխության դինամիկայի գնահատում, այդ թվում բացասական փոփոխությունների (դրանց կայունության խախտման, բնական և անտրոպոգեն գործոններով պայմանավորված վնասվածքների ու վարակվածության և այլն),

3) կանաչ տնկարկների ստեղծման, խնամքի, վերահսկման, պահպանման և որակի բարելավման միջոցառումների արդյունավետության գնահատում,

4) կանաչ տնկարկների վիճակի փոփոխության կանխատեսում,

5) կանաչ տնկարկների ստեղծման, խնամքի, վերահսկման և պահպանման ոլորտներում իրականացվող տնտեսական գործունեության բարելավման համար տեղեկատվական ապահովում և տարեկան գործողությունների արդյունավետ պլանի կազմում:

Կանաչ տնկարկների վիճակի տարեկան մոնիտորինգների իրականացման համար որպես մեթոդական ուղեցույցներ առաջարկվում է կիրառել *Հավելված 3*-ում բերված «Կանաչ տնկարկների վիճակի մոնիտորինգ» և *Հավելված 4*-ում բերված «*Ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների*

վիճակի մոնիտորինգի համակարգ» մեթոդական ուղեցույցները: Նշված մեթոդական ուղեցույցների էլեկտրոնային տարբերակները առկա են

<http://www.3nature.am/docs/Methodological%20Manual.pdf>

<http://aarhus.am/images/Gyumri/Methodological%20Manual.pdf>

կայքերում տեղադրված ձեռնարկում:

5. Քաղաքի կանաչապատ տարածքների կառավարման գործընթացներում հասարակության մասնակցության յութանման մասով

- Հայաստանում բնակավայրերի կանաչապատման ոլորտում ներկայումս իրականացվող քաղաքականությունը չունի հաշվետվական և վերահսկողական ազդեցիկ մեխանիզմներ: Ներդրված և ներկայումս գործող քաղաքացիական մասնակցության համակարգը և մասնակցության մեխանիզմները քիչ արդյունավետ են: Դա տեղի է ունենում, նախ և առաջ, կանաչ տնկարկների կառավարման ոլորտում հասարակության և համայնքապետարանների փոխհարաբերությունները միայն քաղաքական և սոցիալ-տնտեսական, և ոչ մի կերպ բնապահպանական և առողջապահական տեսանկյուններից դիտարկելու պատճառով:
- Բնակավայրերի կանաչ տնկարկների վիճակի մասին օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու նպատակով արդյունավետ միջոց է հատուկ մոնիտորինգի համակարգի ստեղծումը՝ տեղական ինքնակառավարման և քաղաքացիական հասարակության կառույցների համատեղ մասնակցությամբ, որը միաժամանակ, քաղաքացիական մասնակցության արդյունավետ մեխանիզմ է: Առաջարկվող ամենամյա հանրային մոնիտորինգները կոչված են տալու ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների կառավարման գործընթացների իրական վիճակի ամբողջական և

ճշմարտացի պատկերը, նախատեսում են հիմնախնդիրների նկատմամբ համալիր մոտեցում, ընդ որում մոնիտորինգի և վերահսկողության գործընթացներում օգտագործվում է հասարակայնության և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ մասնակցության մատչելի և արդյունավետ ձևեր: Կանաչ տնկարկների վիճակի մոնիտորինգի տվյալները կպահվեն «Կանաչ մոնիտորինգ» տվյալների բազայում, որը կհանդիսանա համայնքի տեղեկատվական ռեսուրսի կարևոր բաղկացուցիչ մաս: Կանաչ տնկարկների վիճակի մոնիտորինգի տվյալները հրապարակվելու են յուրաքանչյուր տարի, տարեկան վերլուծական գեկույցում:

- Կանաչ տնկարկների վիճակի հանրային մոնիտորինգի արդյունքները կօգտագործվեն կանաչապատման և բարեկարգման օբյեկտների նախագծման, դրանց սպասարկման աշխատանքների պլանավորման, բնակավայրի գլխավոր հատակագծի համապատասխան բաժինների, քաղաքի զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացներում: Մոնիտորինգի շրջանակներում կանաչ տնկարկների վիճակի վերաբերյալ բացահայտված բնապահպանական օրենսդրության խախտումների վերաբերյալ կընդունվեն որոշումներ՝ ՀՀ օրենսդրությամբ ընդունված կարգով:
- Հանրային մոնիտորինգի շնորհիվ քաղաքացիներն ու հասարակական միավորումները, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, իրական մասնակցություն կունենան այն որոշումների նախապատրաստմանը, կայացմանը և իրականացմանը, որոնք կարող են ազդեցություն ունենալ բնակավայրի կանաչապատ տարածքների վիճակի վրա:

6. Վերահսկողություն իրականացնող մարմինների արդյունավետության բարձրացման մասով

Այսօրվա գործող մեխանիզմը, երբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինները գործում են միմյանցից անկախ, գործուն չէ: Հատկապես դա ակնառու է ծառերն էտելու կամ հատելու պարագայում: Առաջարկվող մեխանիզմը ենթադրում է.

- ծառերն էտելու և հատելու թույլտվության կարգը պետք է հաստատվի տեղական ինքնակառավարման մարմինների հատուկ իրավական փաստաթղթերով՝ իրենց իրավասությունների սահմաններում,
- յուրաքանչյուր հատման փաստի վերաբերյալ (այդ թվում՝ արտակարգ և վթարային դեպքերում, երբ տնկարկների հատումը իրականացվում է առանց նախապես թույլտվության ձևակերպման), որպեսզի հատման որոշման կայացումը համարվի օրինական (պարտադրված) կամ անօրինական, համայնքապետարանի լիազորված մարմինը պետք է կազմի ակտ: Համայնքապետարանը տվյալ ակտը պարտավոր է ուղարկել համապատասխան ոլորտի պետական վերահսկողական տեսչություն, որը տեղում ուսումնասիրություն կատարելով, որոշում է կայացնում հատման օրինական կամ անօրինական լինելու վերաբերյալ: Ոչ վթարային դեպքերում ակտի տրամադրումը պետական վերահսկողական տեսչությանը կատարվում է նախքան հատման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը, որն ուսումնասիրություն կատարելով՝ տալիս է եզրակացություն նախատեսվող հատման օրինականության վերաբերյալ:

7. Բնակավայրերի կանաչապատման և կանաչապատ տարածքների կառավարման ՀՀ օրենսդրության մասով

ՀՀ օրենսդրությունը չի սահմանում բնակավայրերի կանաչ տնկարկների կառավարման հասկացությունը, սկզբունքները, մարմինները, նրանց լիազորությունները, համալիր ձևով չի կարգավորում պետական, այդ թվում վերահսկողական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները: Ոլորտում մոնիտորինգի, հաշվետվության և տեղեկատվական գործընթացները ապահովված չեն օրենսդրությամբ սահմանված, աշխատող մեխանիզմներով:

Առաջարկվում է իրավասու մարմինների, քաղաքացիական հասարակության կառույցների և մասնագիտացված կազմակերպությունների մասնակցությամբ մշակել և ընդունել «Բնակավայրերի կանաչ տնկարկների և կանաչապատ տարածքների կառավարման մասին» ՀՀ օրենք, որը համալիր ձևով կկարգավորի վերոհիշյալ բոլոր խնդիրները:

Առաջարկվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան, նորմատիվ ակտերով, այդ թվում տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակում, ընդունել և առաջնորդվել «Բնակավայրի կանաչ տնկարկների խնամքի, կանաչապատ տարածքների պահպանման և օգտագործման հիմնական կանոններ»-ով: Այդ կանոնների օրինակելի բովանդակությունը բերված է *Հավելված 1*-ում:

8. Հանրության իրազեկվածության և կարծիքի մասով: Հանրության առաջարկությունները

Հանրության իրազեկվածությունը, նույնիսկ այնպիսի հիմնական խնդիրների վերաբերյալ, ինչպիսիք են ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների սեփականության, դրանց կառավարման ոլորտում պատասխանատվության խնդիրները՝ անբավարար է:

Հանրության կարծիքով առկա հիմնական խնդիրներն են՝ կանաչապատ տարածքների սակավությունը, կառավարման

համակարգում որակյալ մասնագետների պակասը, պատկան մարմինների և բնակչության անտարբեր վերաբերմունքը այդ տարածքների նկատմամբ:

Հանրությունը մտահոգող է համարում նաև ոռոգման համակարգի բացակայությունը, կանաչապատ տարածքների ոչ բավարար խնամքը, այդ տարածքներում երեկոյան և գիշերային ժամերին լուսավորության հարցը, աղբամանների պակասը, նստարանների անբավարար քանակը և դրանց ոչ բարվոք վիճակը:

Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների վիճակը հիմնականում չի գոհացնում հանրությանը (լավ է գնահատել հարցվողների 7%-ը և վատ է գնահատել՝ 47%-ը):

Հանրության կողմից ներկայացվող առաջարկությունները ուղղված են բնակչությանը մտահոգող բոլոր հիմնախնդիրների լուծմանը՝

- մեծացնել կանաչապատ տարածքների քանակը,
- ստեղծել պետական համակարգ՝ մասնավորապես մասնագիտացված ստորաբաժանում, ներգրավել որակյալ մասնագետների, նրանց և բնակչության պահանջով վերացնել պատկան մարմինների անտարբերությունը,
- հանրության համար ապահովել բնապահպանական շարունակական կրթություն, որը կնպաստի քաղաքացիների շրջանում էկոլոգիական վարքագծի և մշակույթի ձևավորմանը,
- ստեղծել կանաչապատ տարածքների ոռոգման համակարգ,
- իրականացնել կանաչապատ տարածքների խնամք ու սանիտարական մաքրում,
- բարելավել երեկոյան և գիշերային ժամերին այդ տարածքների լուսավորությունը,
- նստարանները փոխարինել նորերով կամ բերել բարվոք վիճակի:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱԶ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ԿԱՆԱ- ՉԱՊԱՏ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

(նախագիծ)

Յուրաքանչյուր համայնքի համար համապատասխան կանոնները մշակվում և ընդունվում են իրավասու մարմինների իրավական ակտերով, համաձայն ՀՀ գործող օրենսդրության, և կարգավորում են այն իրավահարաբերությունները, որոնք ձևավորվում են բնակավայրի (եթե կիրառելի է՝ համայնքի բնակավայրերի) տարածքում կանաչ տնկարկների խնամքի և կանաչապատ տարածքների պահպանման ոլորտում:

1. Կանաչ ֆոնդի կառավարումը

1.1 Բնակավայրի կանաչ ֆոնդը ներառում է նրա վարչական սահմաններում գտնվող այն կանաչապատ տարածքները, որոնց իրավական պայմանակարգը որոշվում է ՀՀ օրենսդրությամբ, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերով և սույն կանոններով:

Բնակավայրի կանաչ ֆոնդը կառավարում են տեղական ինքնակառավարման մարմինները: Բնակավայրի կանաչապատումը հանդիսանում է համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունը՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորված ստորաբաժանումը իրականացնում է համայնքային սեփականություն համարվող տարածքներում գտնվող կանաչ տնկարկների հաշվա-

ռումը և ռեեստրի վարումը: Կանաչ տնկարկների ռեեստրի վարման կարգը հաստատվում է համապատասխան իրավասություն ունեցող մարմինների կողմից, համաձայն ՀՀ օրենսդրության:

1.2 Կանաչ ֆոնդի կառավարման հիմնական սկզբունքներն են.

1) բնակավայրի տարածքում կանաչ ֆոնդի պահպանման, խնամքի և զարգացման ապահովում՝ որպես բնակչության կյանքի, աշխատանքի և հանգստի համար բարենպաստ կենսամիջավայրի ստեղծման և պահպանման կարևորագույն գործոններից մեկը,

2) բնակավայրի կանաչ տնկարկների ստեղծում, պահպանում և վերարտադրություն, էկոլոգիական, քաղաքաշինական նորմերին և սոցիալ-ժողովրդագրական պահանջներին համապատասխան,

3) բնապահպանական օրենսդրության խախտումների համար պատասխանատվության անխուսափելիություն և կանաչ ֆոնդին հասցված վնասի պարտադիր հատուցում,

4) կանաչ ֆոնդի զարգացման գործունեության տնտեսական խթանում,

5) կանաչ ֆոնդի կառավարման կառույցի կատարելագործում,

6) կանաչ ֆոնդի պահպանման, վերականգնման և զարգացման հարցերով որոշումների կայացման գործընթացներում հրապարակայնություն և համագործակցություն հանրության ու քաղաքացիական հասարակության կառույցների հետ:

1.3 Բնակավայրի կանաչ ֆոնդի համալիր կառավարումը իրականացվում է կանաչ ֆոնդի կառավարման մարմնի կողմից՝ համայնքապետարանի կառուցվածքային ստորաբաժանման կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից լիազորված կազմակերպության կողմից:

1.4 Կանաչ ֆոնդի տնտեսական կառավարումը իրականացվում է մասնագիտացված կանաչապատման կազմակերպության կամ բարեկարգման ձեռնարկության կողմից, որոնց կառավարմանն է հանձնված կանաչ տնկարկները:

Կանաչապատման կազմակերպությունների իրավասության տակ, նորմատիվաիրավական ակտերին, տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերին և կնքված պայմանագրերին համապատասխան, կարող են գտնվել.

1) բնակավայրի տարածքում այն կանաչապատ օբյեկտների սպասարկումը, որոնք, համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների որոշման, ամրացված են կանաչապատման կազմակերպությանը,

2) նոր կառուցված օբյեկտների բարեկարգումը և կանաչապատումը, անկախ դրանց նշանակությունից,

3) գոյություն ունեցող կանաչ տնկարկների վերակառուցումը և հիմնանորոգումը,

4) կանաչ տնկարկների խնամքը և պահպանությունը,

5) կանաչապատ օբյեկտներում կանաչ տնկարկների պահպանության նկատմամբ վերահսկողությունը,

6) կանաչ շինարարության և կանաչ տնկարկների վերակառուցման աշխատանքների կազմակերպումը:

1.5 Քաղաքացիները, իրավաբանական և պաշտոնատար անձինք պարտավոր են իրականացնել կանաչապատ տարածքների պահպանման միջոցառումներ, թույլ չտալ անօրինական գործողություններ կամ անգործություն, ինչը կհանգեցնի կանաչ տրնկարկների վնասման կամ ոչնչացման:

1.6 Կանաչ տնկարկների խնամքի աշխատանքները, որոնք կապված են ագրոտեխնիկական միջոցառումների անցկացման հետ, իրականացվում են մասնագիտացված կազմակերպությունների կողմից, համաձայն սույն կանոնների:

1.7 Բնակավայրի զարգացման գլխավոր հատակագիծը, ինչպես նաև այլ քաղաքաշինական փաստաթղթեր և ծրագրեր մշակվում և իրականացվում են կանաչ ֆոնդի պահպանման պահանջներին և այլ նորմատիվային ակտերին համապատասխան:

1.8 Տնտեսական և այլ գործունեությունը իրականացվում է կանաչ տնկարկների պահպանման պահանջների կատարմամբ, հաստատված ՀՀ օրենսդրությամբ, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերով և սույն կանոններով:

1.9 Կանաչ տնկարկների ցանկացած ոչնչացում հնարավոր է միայն տեղական ինքնակառավարման մարմինների և կանաչ ֆոնդի վիճակի և օգտագործման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող մարմնի համաձայնության առկայության դեպքում: Կանաչ տնկարկի ոչնչացումը նախաձեռնող իրավաբանական կամ ֆիզիկական անձը հատված կանաչ տնկարկի փոխարեն պարտավոր է իրականացնել փոխհատուցող կանաչապատում՝ փոխհատուցել հասցված վնասը, ելնելով ոչնչացված օբյեկտի գնահատման արժեքից, որը որոշվում է համաձայն գործող նորմատիվաիրավական ակտերի:

1.10 Փոխհատուցման արժեքը չի գանձվում հետևյալ դեպքերում.

- կանաչ տնկարկների սանիտարական հատում և վերակառուցում՝ համաձայն վերակառուցման նախագծի, որն ունի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացություն և հաստատված է ընդունված կարգին համապատասխան,
- համապատասխան պետական վերահսկողական տեսչության եզրակացության համաձայն, ծառերի ստվերի պատճառով բնակելի և ոչ բնակելի շենքերում լուսային ռեժիմի խախտումների շտկման պարագայում, երբ տվյալ ծառերի տնկումը իրականացված են գործող նորմատիվային ակտերի պահանջների՝ նորմերի և կանոնների խախտումով,
- վթարային և արտակարգ իրավիճակների վերացման պարագայում, այդ թվում ստորգետնյա կոմունիկացիաների և ինժեներական ենթակառուցվածքների վերանորոգման,

- վթարային տնկարկի հատում, որը վտանգ է ներկայացնում մարդկանց կյանքին, առողջությանը, գույքի պահպանմանը:

2. Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների մակերեսի նորմերը

2.1 Փաստացի կանաչապատված տարածքների նվազագույն մակերեսը պետք է կազմի բնակավայրի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքի մակերեսի ոչ պակաս 70%-ը, համաձայն Հայաստանում ընդունված ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների մակերեսի նորմի:

2.2 Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքում գտնվող շենքերի և այլ կառույցների ընդհանուր մակերեսը, ներառյալ անցումները, ճանապարհները և ամուր ծածկույթով հրապարակները (հարթակները), չի կարող գերազանցել այդ տարածքի 30%-ը:

2.3 Քաղաքային և գյուղական բնակավայրերի համար ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների մակերեսը պետք է կազմի (նորմը մեկ մարդու հաշվով).

- 100 հազարից ավելի բնակչության դեպքում՝ 16-21մ²,
- 50 հազարից 100 հազար բնակչության դեպքում՝ 13մ²,
- 20 հազարից 50 հազար բնակչության դեպքում՝ 8մ²,
- մինչև 20 հազար բնակչության դեպքում՝ 10մ²,
- գյուղական բնակավայրերի դեպքում՝ 12մ²:

2.4 Սույն կանոնների 8.2.1 - 8.2.3 կետերում տրված նորմերը պետք է հաշվի առնվեն հողօգտագործման և կառուցապատման կանոնների մշակման ընթացքում, ինչպես նաև հատակագծման նախագծերի և տեղական ինքնակառավարման մարմինների այլ նորմատիվաիրավական ակտերի մշակման ժամանակ:

2.5 Բնակավայրի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների մակերեսը ենթակա չէ փոքրացման:

3. Կանաչ ֆոնդի օբյեկտների նկատմամբ սեփականության իրավունքը

3.1 Համայնքային սեփականություն համարվող տարածքներում գտնվող կանաչ տնկարկները, համաձայն ՀՀ օրենսդրության, հանդիսանում են անշարժ գույք և համայնքային սեփականություն՝ համայնքի բնակչության սեփականությունը:

3.2 Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները գտնվում են համայնքապետարանի որևէ ստորաբաժանման կամ մասնագիտացված կանաչապատման կազմակերպության կառավարման տակ:

3.3 Սահմանափակ օգտագործման կանաչապատ տարածքները կարող են լինել համայնքային, պետական և մասնավոր սեփականություն, կախված հողի նկատմամբ իրավունքի սուբյեկտից: Տվյալ տարածքների օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքը իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

3.4 Հատուկ նշանակության կանաչապատ տարածքները կարող են լինել համայնքային, պետական և մասնավոր սեփականություն:

Հատուկ նշանակության կանաչապատ տարածքներում գտնվող կանաչ տնկարկների տիրապետումը, տնօրինումը և օգտագործումը իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

3.5 Քաղաքացիներին և իրավաբանական անձանց որպես սեփականություն փոխանցվող հողամասերում (որոնք պատկանելու են նրանց սեփականության իրավունքով) գոյություն ունեցող կանաչ տնկարկների տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը պետք է իրականացվի սեփականատիրոջ կողմից՝ կանաչ տնկարկների պահպանման և խնամքի պահանջների պարտադիր կատարմամբ:

Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց որպես սեփականություն պատկանող հողամասերում տնտեսական գործունեության արդյունքում կամ բնական ճանապարհով առաջացած կանաչ տնկարկները (այգի-բանջարանոցներ, ամառանոցներ, անհատական բնակելի կառուցապատում), հանդիսանում են նրանց սեփականությունը, ինչը տիրապետում, օգտագործում և տնօրինում են իրենց հայեցողությամբ՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

4. Հասարակության մասնակցությունը բնակավայրի կանաչապատ տարածքների կառավարման գործընթացում, բնակչության իրավունքներն ու պարտականությունները կանաչ ֆոնդի օգտագործման ոլորտում, բնակավայրի կանաչապատ տարածքների պահպանումը

4.1 Քաղաքացիներն ու հասարակական միավորումներն իրավունք ունեն.

1) բնակավայրի կանաչապատ տարածքների վիճակի և հեռանկարային զարգացման վերաբերյալ ստանալ հավաստի տեղեկատվություն,

2) ընդունված կարգով բողոքարկել պաշտոնատար անձանց, տեղական ինքնակառավարման մարմինների, կանաչապատ տարածքների պահպանման պահանջների խախտման հետ կապ ունեցող կազմակերպությունների գործողությունները (անգործությունը),

3) իրենց իրավունքներն իրացնելու նպատակով իրականացնել օրենքով չարգելված այլ գործողություններ:

4.2 Քաղաքացիներն ու հասարակական միավորումները, ՀՀ օրենսդրությանը համապատասխան.

1) մասնակցություն են ունենում այն որոշումների նախապատրաստմանը, կայացմանը և իրականացմանը, որոնք կարող են ազ-

դեցություն ունենալ բնակավայրի կանաչապատ տարածքների վիճակի վրա,

2) իրականացնում են հասարակական մոնիտորինգ ու վերահսկողություն կանաչապատ տարածքների պահպանման, սպասարկման և զարգացման նկատմամբ,

3) անցկացնում են հասարակական քննարկումներ կանաչապատ տարածքների պահպանման, սպասարկման և զարգացման հարցերով, որոնց արդյունքները տրամադրվում են տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմիններին,

4) առաջարկություններ են ներկայացնում կանաչապատ տարածքների սպասարկման և օգտագործման կարգի վերաբերյալ,

5) իրականացնում են օրենքով չարգելված այլ գործողություններ:

4.3 Քաղաքացիներն իրավունք ունեն.

1) ազատ մուտք գործել ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ, իրենց հանգստի, մշակութային, առողջարարական և գեղագիտական պահանջները բավարարելու համար, զբոսնել, զբաղվել սպորտով: Հատուկ նշանակության կանաչապատ տարածքների առանձին տեղամասերի և բնության հատուկ պահպանվող տարածքների օգտագործումը բնակչության կողմից կարող է մասնակիորեն կամ ամբողջովին արգելվել՝ գործող օրենսդրությանը համապատասխան: Բնակավայրի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների սահմանափակ օգտագործումը, այդ թվում՝ այդ տարածքների հասանելիության ժամանակավոր դադարեցումը, թույլատրվում է կանաչ տնկարկների պահպանության նպատակով, դրանց վերականգնման, տվյալ տարածքների բարեկարգման և ինժեներական ենթակառուցվածքով ապահովման աշխատանքների անցկացման ընթացքում, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում,

2) աջակցություն ցուցաբերել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին կանաչ ֆոնդի պահ-

պանման, վերականգնման և զարգացման միջոցառումների իրականացման գործում,

3) մասնակցություն ունենալ կանաչ ֆոնդի սպասարկման, պահպանման, վերականգնման և զարգացման առաջարկությունների մշակման և դրանց իրականացման գործընթացներում: Ներկայացվող առաջարկությունները պետք է պարտադիր կարգով դիտարկվեն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից և դրանց վերաբերյալ պետք է կայացվեն հիմնավորված որոշումներ,

4) բնակավայրի կանաչ ֆոնդի վիճակի, սպասարկման որակի, պահպանման և հեռանկարային զարգացման վերաբերյալ ստանալ հավաստի տեղեկատվություն: Կանաչ ֆոնդի մասին տեղեկատվությունը հասարակության համար պետք է լինի հասանելի: Այն տարածվում կամ տրամադրվում է անվճար,

5) մասնակցել ներկայացվող կանաչ շինարարության նախագծերի քննարկմանը, ինչպես նաև այլընտրանքային նախագծերի մշակմանը,

6) ստեղծել բնակավայրի կանաչ ֆոնդի պաշտպանության հասարակական նախաձեռնություններ ու շարժումներ,

7) կանաչ տնկարկների պահպանության և խնամքի հարցերով հանդես գալ հայտարարություններով և հրապարակումներով,

8) հանդես գալ այն նախագծերի, ծրագրերի և որոշումների հասարակական գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացման նախաձեռնությամբ, որոնց իրականացումը կարող է վնաս հասցնել բնակավայրի կանաչ ֆոնդին,

9) մասնակցություն ունենալ բնակավայրի կանաչապատման և կանաչապատ տարածքների սանիտարական մաքրման միջոցառումներում:

4.4 Քաղաքացիները պարտավոր են կատարել կանաչ տընկարկների պահպանության հետևյալ պահանջները:

4.5 Կանաչապատ տարածքներում և կանաչ մասսիվներում արգելվում են.

- 1) կանաչ տնկարկների վնասումը կամ ոչնչացումը,
- 2) թափված տերևների և չոր խոտի այրումը,
- 3) սիզամարգերի (բացառությամբ սպորտային սիզամարգերի, քաղաքային անտառների) և կանաչ տնկարկներով զբաղված այլ տեղամասերի վրայով քայլելը,
- 4) խարույկներ վառելը և վրանների տեղադրումը,
- 5) կենդանական աշխարհի օբյեկտներին հետապնդելը, վնասելը և ոչնչացնելը, թռչունների բների, մրջանոցների քանդելը,
- 6) խոտաբույսեր հավաքելը,
- 7) սիզամարգերի, ծաղկանոցների, ճանապարհների և ջրային օբյեկտների աղտոտումը,
- 8) ծառերի կեղևի վնասումը, ծառերին գովազդ, հայտարարություններ, ցանկացած ձևի ցուցանակներ փակցնելը, հաղորդակարեր ամրացնելը, ծառերի մեջ կեռիկներ և մեխեր խփելը, ճոճանակ, ճոճացանց, պարան և այլ առարկաներ կախելը,
- 9) ընդհանուր օգտագործման երթևեկելի ճանապարհներից դուրս տրանսպորտային միջոցներ վարելը, բացառությամբ հատուկ նշանակության մեքենաների,
- 10) ավտոմեքենաների լվացումը, լվացաջրերի թափումը,
- 11) տրանսպորտի կայանումը, բացի հատուկ առանձնացված տեղերի,
- 12) անասունների արածեցումը,
- 13) հողահանումը, ավազահանումը և ցանկացած պեղումների իրականացումը,
- 14) աղբի, ավազի, տարբեր բեռների, այդ թվում շինանյութի թափումը և կուտակումը,
- 15) տանիքներից ձյան թափումը կանաչ տնկարկներով զբաղեցված տարածքներ, առանձ նրանց պահպանությունը ապահովող միջոցառումների իրականացման,

16) աղտոտված ձյան, կոտրված սառցաբեկորների և մայթերից և ճանապարհներից հավաքված ձյան կուտակումը կանաչ տընկարկներով զբաղեցված տարածքներում,

17) զբոսայգիներում, պուրակներում, բուլվարներում և փողոցներում ծառերի բների սպիտակեցումը: Սպիտակեցումը կարելի է կատարել առանձին օբյեկտներում, որտեղ ներկայացվում են սանիտարական հատուկ պահանջներ,

18) հողածածկի խախտումը և դրա աղտոտումը,

19) այլ գործողությունների իրականացումը, որոնք կարող են վնաս պատճառել կանաչ տնկարկներին:

4.6 Կանաչ տնկարկների պաշտպանությունը:

1) Բնակավայրի բոլոր կանաչապատ տարածքները ենթակա են պաշտպանության:

2) Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներում, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, արգելվում է տնտեսական և այլ գործունեություններ, որոնք նշված տարածքների վրա ունենում են բացասական ազդեցություն և խոչընդոտում են այդ տարածքների էկոլոգիական, սանիտարահիգիենիկ և հանգստի դերերի իրականացմանը, այդ թվում.

ա. շենքերի և շինությունների կառուցումը, բացի քաղաքացիական պաշտպանության և տարածքի պահպանության համար նախատեսված օբյեկտների, մոնումենտալ արվեստի օբյեկտների, ինժեներական ենթակառուցների, հասարակական զուգարանների կառուցումը սույն կանոնների 2-րդ բաժնի պահանջների կատարմամբ, եթե այլ բան նախատեսված չէ գործող օրենսդրությամբ,

բ. առևտուր և այլ ձեռնարկատիրական գործունեություն, վրանների և այլ կառույցների տեղադրում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով՝ առանց տարածքի բարեկարգման և կանաչապատման անհրաժեշտ միջո-

ցառումների անցկացման, ինչպես նաև առանց տեղական ինքնակառավարման մարմինների թույլտվության,

գ. պայթուցիկության, հրդեհավտանգ, թունավոր նյութերի օգտագործումը, տարածքի աղտոտումը և թափված իրերի հավաքատեղի դարձնելը, այլ գործողություններ, որոնք կարող են կանաչ տնկարկների վնասման կամ ոչնչացման պատճառ հանդիսանալ,

դ. սույն կանոններով և այլ նորմատիվաիրավական ակտերով նշված այլ գործողությունների կատարումը, որոնք կարող են կանաչ տնկարկներին վնաս պատճառել:

3) Բնակավայրի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները, համաձայն ՀՀ օրենսդրության, վերաբերվում են ընդհանուր օգտագործման հողատարածքներին և սեփականաշնորհման, երկարաժամկետ վարձակալության ենթակա չեն:

4) Սահմանափակ օգտագործման և հատուկ նշանակության կանաչապատ տարածքների պաշտպանությունը իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

4.7 Տեղական ինքնակառավարման մարմինները, տնտեսական և այլ գործունեություն իրականացնող սուբյեկտները պարտավոր են ապահովել քաղաքացիների և հասարակական միավորումների մասնակցությունը կանաչապատ տարածքների պահպանությանը ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

4.8 Բնակավայրի կանաչապատ տարածքների պահպանության ոլորտում հասարակական վերահսկողության արդյունքները ներկայացվում են տեղական ինքնակառավարման մարմիններին և ենթակա են պարտադիր քննարկման ՀՀ օրենսդրությամբ և տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերով ընդունված կարգով:

5. Կանաչապատ տարածքների օգտագործման ռեժիմը

5.1 Տարբեր կարգերի կանաչապատ տարածքների օգտագործման ռեժիմն ու կարգը պետք է ապահովի կանաչապատ օբյեկտների պահպանությունը, կայունությունը անտրոպոգեն ծանրաբեռնվածության նկատմամբ, դրանց դերերի կատարումը և ստեղծի պայմաններ կանաչապատ տարածքների միջավայրաստեղծ և հանգստի ներուժի լավագույն օգտագործման համար:

5.2 Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների օգտագործման ռեժիմը:

1) Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները որպես համայնքային սեփականություն ստանում են իրենց կարգավիճակը՝ զբոսայգի, այգի, պուրակ կամ բուլվար, համաձայն նորմատիվաիրավական ակտերի և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների՝ ընդունված կարգի համաձայն:

2) Պուրակների, բուլվարների և այլ ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների սահմանները չեն կարող փոփոխվել առանց տեղական ինքնակառավարման մարմինների համաձայնության՝ ձևակերպված որոշման տեսքով, իրենց իրավասության սահմաններին համապատասխան:

3) Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքի կամ դրա մի մասի հանումը բնակավայրի կանաչ ֆոնդի կազմից, առանց հատկացնելու փոխհատուցման տարածք, որը նախատեսված է բնակավայրի կանաչ ֆոնդի լրացման համար՝ չի թույլատրվում:

4) Ընդհանուր օգտագործման կանաչապատ օբյեկտների վերակառուցման հատակագծերը և նախագծերը կազմվում են տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերով նախատեսված ժամկետներում:

5) Կանաչ տնկարկների լրիվ պահպանության և հաշվառման նպատակներով, քաղաքաշինական փաստաթղթերի մշակման ժա-

մանակ, անհրաժեշտ է ճարտարապետական և քաղաքաշինական մարմնի կողմից հենակետային նախագծի կատարման տեխնիկական պայմանների պարտադիր ցանկում ներառել կանաչ տնկարկների որակական և քանակական նկարագրությունը:

5.3 Սահմանափակ օգտագործման կանաչապատ տարածքների օգտագործման ռեժիմը:

1) Սահմանափակ օգտագործման կանաչապատ տարածքները կարող են գտնվել պետական, համայնքային, մասնավոր և սեփականության այլ ձևերում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ, նորմատիվաիրավական ակտերով և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներով: Ընդ որում, կանաչ տրնկարկների պահպանման և խնամքի աշխատանքների ֆինանսավորումը իրականացնում է սեփականատերը կամ պատասխանատու օգտագործողը:

2) Սահմանափակ օգտագործման կանաչապատ օբյեկտի սահմանները և նշանակությունը կարող են փոփոխվել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, իրենց իրավասությունների սահմաններում ընդունված որոշումների հիման վրա, սեփականատիրոջ և կանաչ ֆոնդի վիճակի ու պահպանության նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող մարմնի համաձայնությամբ:

3) Սահմանափակ օգտագործման կանաչապատ օբյեկտները կարող են լինել պետական սեփականություն: Ընդ որում, կանաչ տնկարկների խնամքի և պահպանության աշխատանքների ֆինանսավորումը իրականացնում է սեփականատերը կամ պատասխանատու օգտագործողը:

5.4 Հատուկ նշանակության կանաչապատ տարածքների օգտագործման ռեժիմը:

Հատուկ նշանակության կանաչապատ տարածքները, որոնք իրականացնում են բնապահպանական, սանիտարական պաշտպանիչ դերեր և հանդիսանում են պետական սեփականություն,

չեն կարող սեփականաշնորհվել և տրվել վարձակալության: Դրանք կարող են փոխանցվել տեղական ինքնակառավարման մարմինների կառավարմանը, առանց դրանց սահմանների և նշանակության փոփոխման իրավունքի:

Արդյունաբերական ձեռնարկությունների սանիտարապաշտպանիչ գոտիների սահմաններում գտնվող կանաչապատ տարածքները փոխանցվում են այդ ձեռնարկությունների կառավարմանը: Արդյունաբերական ձեռնարկությունների սանիտարապաշտպանիչ գոտու սահմաններում բնության համալիրի տարրերի (ջրամբարներ, կանաչ տնկարկներ, սիզամարգեր և այլն) պահպանությունը և խնամքը իրականացվում է այդ ձեռնարկությունների հաշվին, գործող սանիտարական նորմերին և կանոններին համապատասխան:

Հատուկ նշանակության կանաչապատ տարածքների պահպանությունը և վերարտադրությունը իրականացվում է տվյալ տարածքների օգտագործողների հաշվին:

5.5 Կանաչ ֆոնդի պահուստային տարածքների օգտագործման ռեժիմը:

Կանաչ ֆոնդի պահուստային տարածքները նախատեսված են ընդհանուր օգտագործման կանաչապատ օբյեկտների ստեղծման համար:

Բնակավայրի կանաչ ֆոնդի պահուստային տարածքների օգտագործման ռեժիմը չի թույլատրում այդ տարածքներում իրականացնել կապիտալ շինարարություն, որը կխոչընդոտի կանաչ ֆոնդի պահպանման և զարգացման նախագծերի իրականացումը բնակավայրի կայուն զարգացման ապահովման նպատակով: Կանաչ ֆոնդի պահուստային տարածքները կարող են օգտագործվել այդ տարածքների բնական համալիրին և կանաչ ֆոնդի պահպանման և զարգացման նախագծերի իրականացմանը վնաս չպատճառելու պայմանով:

6. Կանաչ տնկարկների խնամքի պահանջներ

6.1 Կանաչապատ տարածքների սեփականատերերը և պատասխանատու օգտագործողները ընդունում են իրենց պարտավորվածությունը կանաչ տնկարկների պահպանության և խնամքի նկատմամբ: Կանաչ տնկարկների ամրացումը քաղաքացիներին և իրավաբանական անձանց կատարվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Կանաչ տնկարկներով զբաղեցված հողատարածքների գնման, վաճառքի, նվիրատվության, օգտագործման կամ վարձակալության փոխանցման, ինչպես նաև հողատարածքի շրջանառության այլ ձևերի պարագայում, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, նոր սեփականատիրոջը, օգտագործողին, վարձակալին են անցնում կանաչ տնկարկների պահպանության և խնամքի իրավունքներն ու պարտականությունները: Կանաչապատ հողատարածքի շրջանառությունը հավաստող փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել համայնքապետարան:

6.2 Բոլոր կանաչապատ օբյեկտները (տեղամասերը) ենթակա են անձնագրավորման:

Կանաչապատ օբյեկտների անձնագրերի կազմումը իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից:

Կանաչապատ օբյեկտների (տեղամասերի) անձնագրերը պահվում են համայնքապետարանում կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից լիազորված կառույցում:

Անձնագրի պատճենը պահվում է սեփականատիրոջ, պատասխանատու օգտագործողի մոտ, որոնք կրում են կանաչ տնկարկների խնամքի և պահպանման պարտավորությունները:

6.3 Խնամքը:

1) Այգիների, պուրակների, բուլվարների, հետիոտնային ծառուղիների, ներթաղամասային զբոսայգիների խնամքը դրվում է

մասնագիտացված սպասարկող կանաչապատման կազմակերպությունների վրա:

2) Համաքաղաքային և մասնագիտացված զբոսայգիների, անտառայգիների խնամքը դրվում է տվյալ հաստատությունների կառավարման մարմինների վրա:

3) Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների որոշակի տեղամասերի՝ պուրակների, փողոցների, բուլվարների և հետիոտնային ծառուղիների խնամքը, որոնք կազմում են առևտրի, սպասարկման, բանկերի, գրասենյակների, ձեռնարկությունների, անհատական տների և այլ օբյեկտների ճակատային (մուտքային) մասի անբաժանելի մասը՝ դրվում է այդ շենքերի և շինությունների սեփականատերերի, վարձակալների և օգտագործողների վրա:

4) Ձեռնարկությունների, հաստատությունների, կազմակերպությունների տարածքների, ինչպես նաև դրանց ամրացված տարածքների կանաչ տնկարկների խնամքը իրականացվում է անմիջականորեն այդ ձեռնարկությունների, հաստատությունների և կազմակերպությունների կողմից:

5) Մանիտարապաշտպանիչ գոտիների խնամքը իրականացվում է այդ գոտու սահմաններում հողամասերի սեփականատերերի, հողօգտագործողների և հողամասերի վարձակալների կողմից:

6) Ներթաղամասային և մերձշենքային ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների խնամքը իրականացնում է համայնքը, ընդ որում խնամքի և պահպանության որոշ տարրեր կարող են ստանձնել օգտագործողները:

6.4 Կանաչ տնկարկների խնամքի և պահպանության պարտականություններ ստանձնած քաղաքացիները, իրավաբանական անձինք՝ կանաչապատ տարածքների սեփականատերերը, օգտագործողները պարտավոր են.

1) ունենալ կանաչ տնկարկների անձնագրի պատճենը,

2) ապահովել կանաչ տնկարկների պահպանվածությունը և խնամքը, անհրաժեշտության դեպքում, ընդունված կարգին համա-

ձայն, մասնագիտացված կանաչապատման կազմակերպության հետ կնքել կանաչ տնկարկների պահպանման վերաբերյալ պայմանագիր,

3) կանոնավոր կերպով անցկացնել ագրոտեխնիկական միջոցառումների ամբողջ համալիրը, այդ թվում՝ սիզամարզերի, ծառերի, թփերի ոռոգում, սիզամարզերի հնձում, պայքար մոլախոտերի, վնասատուների և կանաչ տնկարկների հիվանդությունների հարուցիչների դեմ,

4) իրենց ամրացված տարածքներում իրականացնել կանաչապատում և կանաչ տնկարկների վերակառուցում,

5) կանաչ տնկարկների հատումը (վերատնկումը) ձևակերպել ըստ սույն կանոնների *8.7-րդ բաժնում* սահմանված կարգի,

6) թույլ չտալ կանաչ տնկարկներով զբաղեցված տարածքների աղտոտումը կենցաղային և արտադրական թափոններով, հոսքաջրերով,

7) թույլ չտալ սիզամարզերի և կանաչապատ այլ տարածքների վրա պահեստավորել աղբ,

8) կատարել տարածքի սանիտարական մաքրում, կոտրված ճյուղերի, ծառերի և թփերի հեռացում,

9) կանոնավոր և ժամանակին անցկացնել կանաչ տնկարկների վնասատուների և հիվանդությունների հարուցիչների հայտնաբերման և պայքարի միջոցառումներ,

10) յուրաքանչյուր տարի համայնքապետարան կամ դրա կողմից լիազորված մարմին, ընդունված ձևով, ներկայացնել կանաչ տնկարկների գույքագրման նյութերում բոլոր փոփոխությունների (հատում, վերակառուցում, վերատնկում, տնկում) մասին տեղեկատվություն,

11) շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում պահպանել սույն կանոնները:

7. Կանաչ տնկարկների հատման (վերատնկման) կարգը

7.1 Կանաչ տնկարկների՝ ծառերի, թփերի հատումը, սիգամարգերի և ծաղկանոցների ոչնչացումը կարող է թույլատրվել հետևյալ դեպքերում:

1) Քաղաքաշինական փաստաթղթերով նախատեսված նախագծերի իրականացում, որոնք մշակված են քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան և ունեն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացությունը:

2) Սանիտարական հատումների իրականացման և կանաչ տնկարկների վերակառուցման ծրագրերի հիման վրա, որոնք անցել են հասարակական իրազեկում, քննարկումներ և հաստատվել են ընդունված կարգին համապատասխան:

3) Պետական վերահսկողական տեսչությունների եզրակացությունների հիման վրա՝ բնակելի և ոչ բնակելի շինությունների բնական լուսավորության ռեժիմի վերականգնում (գործող նորմերի և կանոնների խախտմամբ տնկված ծառերի կողմից ստվերացման դեպքում):

4) Վթարային և արտակարգ իրավիճակների վերացում, այդ թվում ստորգետնյա կոմունիկացիաների և կապիտալ ինժեներական ենթակառուցների վերանորոգում:

5) Վթարային տնկարկների հատում, որոնք վտանգ են ներկայացնում մարդկանց կյանքին, առողջությանը և գույքի պահպանվածությանը:

Առանց նախօրոք ձևակերպված թույլատրման փաստաթղթերի կանաչ տնկարկների հատումը հանդիսանում է անօրինական, բացի սույն կանոնների 8.7.1 կետի 4-րդ ենթակետում նշված դեպքերի:

7.2 կանաչ տնկարկների հատումը թույլատրվում է միայն կանաչ ֆոնդի կառավարման մարմնի կողմից տրված թույլտվությամբ:

Քաղաքացուն կամ իրավաբանական անձին որպես սեփականություն հողամասի (այգի-բանջարանոց, ամառանոց, անհատական բնակելի տուն) փոխանցումից հետո տնտեսական գործունեության արդյունքում կամ բնական ճանապարհով առաջացած ծառաթփային բուսականության հատումը կամ վերակառուցումը իրականացվում է իր հայեցողությամբ, առանց թույլտվության ձևակերպման, եթե այլ բան նախատեսված չէ գործող օրենսդրությամբ:

7.3 Բնության կամ պատմության հուշարձանների, կամ հազվադեպ գեղագիտական արժեք ներկայացնող ծառերի հատումը, որոնց կարգավիճակը հաստատված է ըստ կարգի, Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված տեսակների ծառերի և թփերի հատումը, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքներում գտնվող ծառերի և թփերի հատումը իրականացվում է միայն արտակարգ իրավիճակներում (եթե այլ բան նախատեսված չէ պահպանության ընդունված ռեժիմով), շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացության հիման վրա:

7.4 Արտակարգ և վթարային դեպքերում, երբ խոշոր ծառերի ընկնելը սպառնում է մարդկանց կյանքին և առողջությանը, կառույցների և շինությունների վիճակին, տրանսպորտի շարժին, ինժեներական ենթակառույցների գործունեությանը, այս տնկարկների հատումը իրականացվում է առանց նախապես թույլտվության ձևակերպման:

Այդպիսի յուրաքանչյուր հատման փաստի վերաբերյալ, որպեսզի հատման որոշման կայացումը համարվի օրինական (պարտադրված) կամ անօրինական, համայնքապետարանի լիազորված մարմինը կազմում է ակտ: Համայնքապետարանը տվյալ ակտը ուղարկում է համապատասխան ոլորտի պետական վերահսկողական տեսչություն:

7.5 Շենքերին, շինություններին մոտ աճող ծառերի, որոնք առաջացնում են սենյակների բարձր ստվերայնություն, էտելու կամ հատելու թույլտվությունը տալիս է համայնքապետարանը, կամ դրա կողմից լիազորված մարմինը, քաղաքացիների դիմումի դեպքում (անվճար) և պետական վերահսկողական տեսչության եզրակացությանը համապատասխան:

7.6 Չորացած, չորացող և հիվանդ ծառերի, թփերի հաշվառումը և դրոշմումը, անկախ դրանց գտնվելու վայրից, իրականացվում է մասնագիտացված կանաչապատման կազմակերպությունների կողմից և միջոցներով, քաղաքացիների և իրավաբանական անձանց, կանաչ տնկարկների օգտագործողների, սեփականատերերի և վարձակալների դիմումներով:

Եթե չորացած ծառերի և թփերի հետազոտության ընթացքում պարզվի, որ ծառերի չորացումը տեղի է ունեցել ոչ ծերացման և հիվանդությունների պատճառով, այլ առանձին քաղաքացիների կամ պաշտոնատար անձանց մեղքով, ապա այդ ծառերի գնահատումը կատարվում է փոխհատուցման դրույքաչափերով, իսկ մեղավորները ենթարկվում են պատասխանատվության, համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

7.7 Ծառերի էտելու և հատելու թույլտվության կարգը հաստատվում է տեղական ինքնակառավարման մարմինների իրավական փաստաթղթերով՝ իրենց իրավասությունների սահմաններում:

8. Փոխհատուցող կանաչապատում

8.1 Կանաչ ֆոնդի կազմում գտնվող կանաչ տնկարկների վնասման կամ ոչնչացման բոլոր դեպքերում փոխհատուցող կանաչապատումը հանդիսանում է պարտադիր (բացառությամբ 3.5 կետում և 7.1 կետի 2 – 5 ենթակետերում նշված դեպքերի):

8.2 Փոխհատուցող կանաչապատման իրականացման դեպքում.

1) փոխհատուցող կանաչապատումը իրականացվում է տվյալ բնակավայրի տարածքում,

2) փոխհատուցող կանաչապատման մակերեսը չի կարող փոքր լինել վնասված կամ ոչնչացված կանաչ տնկարկների մակերեսից,

3) կանաչ տնկարկների անօրինական ոչնչացման կամ վնասման դեպքում փոխհատուցող կանաչապատումը իրականացվում է նույն հողատարածքում, հավասար արժեք ունեցող կամ ավելի բարձրարժեք տեսակների կանաչ տնկարկներով,

4) քաղաքացիները, պաշտոնատար կամ իրավաբանական անձինք, որոնց մեղքով, կամ ի օգուտ որոնց իրականացվել է կանաչ տնկարկների հատումը, վերատնկումը, վնասումը կամ ոչնչացումը, մուծում են փոխհատուցման արժեքը կազմող դրամական միջոցներ,

5) փոխհատուցման արժեքը պետք է ապահովի համապատասխան որակի և ծավալի կանաչապատման ծառայություններ (ներառյալ տարիների ընթացքում անհրաժեշտ խնամքի աշխատանքների ծախսերը), որը կբավարարի աճեցնել նույն չափերի և որակի կանաչ տնկարկներ, որքան ոչնչացվել է,

6) հատման կամ այլ աշխատանքների կատարման թույլտվությունը, որոնք կապված են կանաչ տնկարկների հատման կամ վերատնկման հետ, համայնքապետարանի կողմից տրվում է քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց (որոնց շահերից է բխում կանաչ տնկարկների վերատնկումը կամ հատումը), միայն նրանց կողմից փոխհատուցման արժեքը կազմող դրամական միջոցները տեղական բյուջեի կանաչապատման նպատակային հաշվին փոխանցելուց հետո:

8.3 Փոխհատուցող կանաչապատման աշխատանքները կատարվում են համայնքապետարանի համապատասխան ստորա-

բաժանման կամ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորած կառույցի կողմից՝ ըստ համապատասխան նախագծի:

8.4 Փոխհատուցող կանաչապատումը կատարվում է առաջիկա սեզոնին, ծառատունկի համար հարմար ժամանակ, բայց ոչ ուշ քան մեկ տարին, երբ կանաչ ֆոնդի վիճակի և օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական վերահսկողական մարմինները տեղեկացել են կանաչ տնկարկների վնասման կամ ոչնչացման մասին:

8.5 Կանաչ տնկարկների ոչնչացման դեպքում փոխհատուցող կանաչապատումը իրականացվում է այն նույն հողամասում, որտեղ դրանք ոչնչացվել են, ընդ որում բույսերի քանակը և զբաղեցրած տարածքը չպետք է փոքրացվի, կամ այլ հողատարածքում, սակայն անպայման նույն վարչական շրջանում (թաղամասում) կրկնակի չափերով, թե բույսերի քանակի, և թե մակերեսի առումով: Տնկվող ծառերի ու թփերի տեսակային կազմը և տարիքը պետք է ապահովի ոչնչացված կանաչ տնկարկների վերարտադրությունը:

8.6 Փոխհատուցող կանաչապատումը իրականացվում է այն քաղաքացիների կամ իրավաբանական անձանց հաշվին, որոնց շահերից է բխում, կամ որոնց անօրինական գործողություններից կամ անգործությունից է տեղի ունեցել կանաչ տնկարկների վնասումը կամ ոչնչացումը: Այն դեպքերում, երբ անհնարին է հաստատել վնաս պատճառող անձը, կամ այն փաստը, թե արդյոք բնականորեն է ոչնչացել կանաչ տնկարկը, ինչպես նաև սույն կանոնների 7.1 կետի 2–5 ենթակետերում նշված դեպքերում փոխհատուցող կանաչապատումը ֆինանսավորվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, իսկ կանաչ տնկարկների ապահովագրված լինելու դեպքերում իրականացվում է ապահովագրության գումարների հաշվին, որոնք վճարվում են կանաչ տնկարկների վնասման կամ ոչնչացման դեպքերում:

8.7 Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ, հատման ենթակա կանաչ տնկարկները վերականգնվում են շինարարի կամ տարածքի սեփականատիրոջ հաշվին:

Այն կանաչապատումը, որը շինարարը իրականացնում է շինարարության նախագծային փաստաթղթերին համապատասխան, չի կարող համարվել որպես փոխհատուցող կանաչապատման համար իրականացված աշխատանքներ:

9. Կանաչ տնկարկների հատման համար փոխհատուցման արժեքի հաշվարկման և վճարման կարգը

9.1 Փոխհատուցման արժեքի հաշվարկը իրականացվում է համայնքապետարանի կողմից կանաչ տնկարկների հատման թույլտվության ձևակերպման ընթացքում, համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված հաշվարկի մեթոդաբանության, եթե այլ բան նախատեսված չէ գործող օրենսդրությամբ, իսկ այդ մեթոդաբանության բացակայության դեպքում՝ փոխհատուցող կանաչապատում իրականացնելու համար անհրաժեշտ փաստացի ծախսերի հաշվով:

9.2 Կանաչ տնկարկների փոխհատուցումը կարող է իրականացվել միայն դրամային ձևով, տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի հիման վրա:

9.3 Դրամական միջոցները փոխանցվում են համայնքի բյուջեի հատուկ նպատակային հաշվին, փոխհատուցող կանաչապատման աշխատանքների իրականացման համար:

9.4 Փոխհատուցման արժեքը չի գանձվում սույն կանոնների 7.1 կետի 2–5 ենթակետերում նախատեսված դեպքերում:

10. Կանաչ տնկարկների հաշվառումը

10.1 Կանաչապատ տարածքների արդյունավետ օգտագործման, դրանց վիճակի վերաբերյալ քաղաքացիների և հասարակա-

կան միավորումների տեղեկատվության իրավունքի ապահովման, կանաչ տնկարկների պահպանման, քաղաքացիների էկոլոգիական իրավունքների ապահովման, կանաչ տնկարկների քանակը գործող քաղաքաշինական և սանիտարական նորմերին համապատասխանության ապահովման, փոխհատուցման արժեքի և փոխհատուցող կանաչապատման կարգի ընդունման համար համայնքապետարանը կազմակերպում է կանաչ տնկարկների հաշվառման հետևյալ միջոցառումները.

- կանաչ տնկարկների գույքագրման և այլ ձևերի հետազոտության իրականացում,
- կանաչապատ տարածքների անձնագրավորում,
- կանաչ տնկարկների և կանաչապատ տարածքների ռեեստրի ստեղծում և վարում:

Կանաչապատ տարածքների ռեեստրի վարման կարգը որոշվում է իրավասու մարմինների կողմից, համաձայն ՀՀ օրենսդրության:

Կանաչապատ տարածքների ռեեստրը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

- նույնականացման համարը,
- կանաչապատ տարածքի անվանումը,
- կանաչապատ տարածքի տեղադրությունը և դրա քարտեզագրական նկարագրությունը,
- կանաչապատ տարածքի ընդհանուր մակերեսը,
- փաստացի կանաչապատված տարածքի մակերեսը,
- այլ տեղեկություններ:

Բնակավայրի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների հաշվառման տվյալները ներկայացվում են իրավասու մարմնին ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների մարզային և հանրապետական վիճակագրական հաշվառում իրականացնելու նպատակով:

Ռեեստրի տվյալները համարվում են հասարակության համար հասանելի և տեղադրվում են համայնքապետարանի տեղեկատվական կայքում:

10.2 Բնակավայրի կանաչ ֆոնդի ամբողջական գույքագրումը իրականացվում է մասնագիտացված կազմակերպության կողմից 5 տարին մեկ անգամ, եթե ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ գործող նորմատիվաիրավական ակտերով:

10.3 Ֆիզիկական և իրավաբանական անձանց օգտագործման համար հողատարածքների փոխանցման պայմանագրերում հաստատվում են կանաչ տնկարկների առկայությունը, դրանց զբաղեցրած մակերեսները, ծառերի և թփերի տեսակային կազմը և տարիքը, ինչպես նաև կանաչ տնկարկների պաշտպանության համար անհրաժեշտ միջոցառումները:

11. Կանաչ տնկարկների խնամքի և պահպանման ծախսերի ֆինանսավորումը

11.1 Պահպանման և խնամքի ծախսերի ֆինանսավորումը:

1) Զբոսայգիների, պուրակների, բուլվարների, հետիոտնային ծառուղիների, այլ կանաչապատ տարածքների պահպանման և խնամքի ծախսերի ֆինանսավորումը գտնվում է համայնքապետարանի կամ նրա հաստատությունների ենթակայության շրջանակներում, իրականացվում է տեղական բյուջեի միջոցներով, բարեկարգման, կանաչապատման նպատակով նախատեսված հոդվածներով, կանաչապատման ֆոնդերի միջոցներով, ՀՀ օրենսդրությամբ հաստատված այլ աղբյուրների միջոցներով:

2) Մասնագիտացված զբոսայգիների դեպքում՝ համայնքի բյուջեի միջոցներով, որոնք նախատեսված են համայնքային օբյեկտների պահպանման համար, ինչպես նաև մասնագիտացված զբոսայգիների սեփական դրամական միջոցներով:

3) Քաղաքացիներին և իրավաբանական անձանց, սեփականատերերին, օգտագործողներին և վարձակալներին փոխանցված կանաչապատ տարածքների խնամքի և պահպանության համար՝ իրենց սեփական միջոցներով:

4) Ձեռնարկությունների, հաստատությունների, կազմակերպությունների տարածքների սահմաններում գտնվող և դրանց ամրացված կանաչապատ տարածքներում՝ իրենց սեփական միջոցների հաշվին:

5) Սանիտարապաշտպանիչ գոտիների համար՝ սեփականատերերի, օգտագործողների և վարձակալների միջոցներով:

6) Ներթաղամասային ընդհանուր օգտագործման կանաչ տընկարկների դեպքում՝ համայնքի, տնամերձ տարածքների դեպքում, հողօգտագործման սահմաններում՝ այդ տարածքների սեփականատերերի, օգտագործողների, վարձակալների միջոցներով:

7) Կառուցվող բնակելի թաղամասերի, տների խմբերի, առանձին շենքերի և կառույցների կանաչապատման միջոցները մտնում են ընդհանուր շինարարական և նախագծային աշխատանքների արժեքի մեջ:

11.2 Կանաչ տնկարկների պահպանման և խնամքի ծախսերը հաշվի են առնվում համայնքների տեղական բյուջեների և կանաչապատման ֆոնդերի նախահաշիվների ձևավորման ընթացքում:

11.3 Կանաչ տնկարկների պահպանման ոլորտում հանրապետական նպատակային նախագծերի մշակումը և իրականացումը ֆինանսավորվում է պետական բյուջեի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ աղբյուրների միջոցներով:

11.4 Բնակավայրերում կանաչ տնկարկների խնամքի, պահպանման և զարգացման միջոցառումների պլանավորումը իրականացվում է բնակավայրի զարգացման գլխավոր հատակագծին համապատասխան ձևավորված, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից որոշված կարգով, կանաչապատման համալիր նախագծերի հիման վրա:

12. Կանաչ տնկարկների խնամքի և պահպանության նկատմամբ վերահսկողությունը

12.1 Կանաչ տնկարկների խնամքի և պահպանության նկատմամբ վերահսկողության խնդիրը հանդիսանում է քաղաքացիների և պաշտոնատար անձանց կողմից սույն կանոնների պահպանումը, այդ թվում.

1) պայքար կանաչ տնկարկների ինքնակամ հատումների և վնասվածքներ հասցնելու դեմ,

2) հսկողություն կանաչ տնկարկների հատման (վերատնկման) թույլտվության ձևակերպման պահանջների պահպանման նկատմամբ,

3) վերահսկողություն կանաչ տնկարկների պաշտպանության պահանջների կատարման նկատմամբ քաղաքաշինական և տնտեսական գործունեության իրականացման ընթացքում,

4) քաղաքացիների և պաշտոնատար անձանց կողմից կանաչապատ տարածքների խնամքի, բարեկարգման և սանիտարական մաքրման պահանջների կատարման նկատմամբ հսկողություն,

5) վերահսկողություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանաչապատվածության նորմերի կատարման նկատմամբ,

6) կանաչ տնկարկների տնկման աշխատանքների իրականացման նկատմամբ վերահսկողություն և այլն:

12.2 Կանաչ տնկարկների խնամքի և պահպանության ոլորտում իրավաբանական անձանց և քաղաքացիների գործունեության նկատմամբ իրականացվում է վերահսկողություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

12.3 Կանաչ տնկարկների խնամքի և պահպանության ոլորտում պետական վերահսկողությունը, իրենց իրավասությունների շրջանակներում, իրականացնում են հատուկ լիազորված տեսչական մարմինները և դրանց պաշտոնատար անձինք:

12.4 Կանաչ տնկարկների խնամքի և պահպանության ոլորտում համայնքային վերահսկողությունը իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները կամ նրանց կողմից լիազորված կազմակերպությունը:

12.5 Կանաչ տնկարկների խնամքի և պահպանության ոլորտում անկախ հասարակական վերահսկողությունը իրականացվում է հանրության և քաղաքացիական հասարակության կառույցների կողմից:

ՀԱՎԵԼ ՎՄՕ 2

ԿԱՆԱՉ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈՂ (նախագիծ)

Կանաչ տնկարկների գույքագրումը պետք է իրականացվի նորմատիվաիրավական ակտով հաստատված մեթոդով և համաձայն կանաչ տնկարկների գույքագրման և կանաչապատ տարածքների անձնագրավորման կանոնների:

1. Կանաչ տնկարկների գույքագրումը անցկացվում է հետևյալ նպատակներով.

- կանաչ տնկարկների տարածքի սահմանների հաստատման և փաստագրման համար,
- բնակավայրում կանաչ տնկարկների քանակի, ինչպես նաև դրանց վիճակի վերաբերյալ ճշմարտացի տվյալների ստացում՝ համայնքային տնտեսության վարման բոլոր մակարդակներում կառավարման, շահագործման և ֆինանսավորման գործընթացների համար, կանաչապատ տարածքները հողերի համապատասխան կատեգորիային դասելու, դրանց պահպանման կարգավիճակին և սպասարկման կարգին համապատասխանեցնելու համար,

- ծառերի և թփերի տեսակային կազմի որոշում՝ ծառերի և թփերի քանակի, տնկարկների կարգի և տեսակի, բույսերի տարիքի, տրամագծի (ծառերի համար), վիճակի, ինչպես նաև սիզամարզերի և ծաղկանոցների մակերեսների հաշվառմամբ,
- տեղի ունեցող փոփոխությունների ժամանակին բացահայտում և գրանցում,
- կանաչապատ տարածքների հողօգտագործողների և այն կազմակերպությունների (իրավաբանական և ֆիզիկական անձանց) որոշումը, որոնք պատասխանատու են տնկարկների պահպանման և վիճակի համար,
- կանաչապատ տարածքներում ճարտարապետական «անշարժ» կառույցների և սարքավորումների (շատրվաններ, հուշարձաններ, քանդակներ և այլն) առկայության և պատկանելիության որոշում,
- կանաչ տնկարկների պահպանման, դրանց հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների կանոնակարգում,
- բնակավայրի տարածքի ռացիոնալ օգտագործում,
- կանաչ տնկարկների ռեեստրի վարման և մոնիտորինգի ընթացքում բնակավայրի կանաչ տնկարկների և կանաչապատ օբյեկտների էլեկտրոնային հաշվառման ապահովում:

2. Գույքագրման են ենթակա բոլոր կանաչ տնկարկները, որոնք գտնվում են բնակավայրի շրջագծի մեջ, ունեն հաստատված սահմաններ և տրամադրված են պատասխանատու հողօգտագործողներին (իրավաբանական կամ ֆիզիկական անձանց) օգտագործման համար՝ անկախ սեփականության կազմակերպաիրավական ձևից:

3. Գույքագրումն իրականացվում է հաստատված իրավիճակային հատակագծի (մասշտաբ՝ 1:2000) և տեղագրական հատա-

կազմի (մասշտաբ՝ 1:500) հիման վրա, երկու փուլերով: Առաջին փուլի ընթացքում հաստատվում է գույքագրվող օբյեկտի մակերեսը, սահմանները և կարգը: Երկրորդ փուլի ընթացքում որոշվում է կանաչ տնկարկների և բարեկարգման տարրերի որակական և քանակական վիճակը:

4. Կանաչապատ տարածքներում տեղակայված պատմության և մշակույթի հուշարձանների գույքագրման համար կիրառվում է պատմության և մշակույթի հուշարձանների վերաբերյալ օրենսդրական կարգը:

5. Նոր շինարարության և վերակառուցման օբյեկտների գույքագրման արդյունքները ներկայացնող փաստաթուղթը հանդիսանում է տարածքի հատակագծային լուծման և բարեկարգման անձնագիրը, որը կազմվում է իրավասու մարմնի կողմից հաստատված ձևով: Անձնագիրը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

- ընդհանուր դրույթներ, այդ թվում՝ տարածքի վարչատարածքային պատկանելիությունը, պատասխանատու հողօգտագործողի նշումը, օբյեկտի հաստատված կարգավիճակը, հողատարածքի հաստատված ֆունկցիոնալ նշանակությունը,
- բնակավայրում օբյեկտի տեղադրության սխեման,
- օբյեկտի իրավիճակային հատակագիծը (մասշտաբ՝ 1:2000),
- օբյեկտի գույքագրման հատակագիծը 1:500, 1:1000, 1:2000 մասշտաբով՝ կախված ծառաթփային տնկարկների զբաղեցրած մակերեսից և համասեռությունից,
- բարեկարգման հատակագծային որոշումը՝ գլխավոր հատակագծի սխեման,
- օբյեկտի և դրա շրջակայքի ճարտարապետագեղագիտական բնութագիրը, լանդշաֆտի և կանաչապատման առանձնահատկությունները,

- շենքերը և կառույցները, հարթ կառույցները, ճանապարհաարահետալին ցանցը,
- կանաչապատման տարրերը և կանաչ տնկարկների գրանցման աղյուսակները,
- փոքր ճարտարապետական ձևերը և բարեկարգման տարրերը,
- ռելիեֆի կազմակերպման տարրերը, ֆուկցիոնալ ապահովման համակարգերը, բնապահպանության և միկրոկլիմայի հարմարավետության ստեղծման համակարգերը,
- վերանորոգման աշխատանքների կատարման վերաբերյալ տեղեկություններ:

6. Անձնագիրը պետք է ունենա ծածկագրային համար: Գույքագրման տվյալների լրացման ընթացքում անձնագրի ծածկագրային համարը պետք է մուտքագրել «կանաչ տնկարկների ռեեստր»:

Անձնագրի կազմի մեջ մտնում են հետևյալ փաստաթղթերը.

- իրավիճակային հատակագիծը, հաստատված տեղական իշխանությունների կողմից,
- տարածքի գույքագրման հատակագիծը 1:500 մասշտաբով՝ հիմնված տեղագրական հատակագծի վրա,
- տնկարկների հաշվառման ամփոփագիրը,
- անձնագրի կազմի մեջ մտնող լրացված ձևաթղթերը:

7. Գոյություն ունեցող բարեկարգման օբյեկտի գույքագրման արդյունքները պատկերվում են հաշվառվող տեղամասի անձնագրում (հավելված 1), որը տարբերվում է տարածքի հատակագծային լուծման և բարեկարգման անձնագրից գլխավոր հատակագծի սխեմայի և «Օբյեկտի և դրա շրջակայքի ճարտարապետագեղագիտական բնութագիրը, լանդշաֆտի և կանաչապատման առանձնահատկությունները» գլխի բացակայությամբ:

8. Կանաչապատ տարածքի անձնագիրը հաստատվում է տարածքի սեփականատիրոջ (պատասխանատու հողօգտագործողի)

կողմից, ՀՀ օրենսդրությամբ և իրավական ակտերով սահմանված կարգով և ենթակա է հետագա ճշգրտման:

9. Անձնագրում նշված շինությունները հաշվի են առնվում ըստ դրանց ֆունկցիոնալ նշանակության և անձնագրավորվող տարածքի դերերի համապատասխանության գնահատականով՝ այդ շինությունների վերացման կամ պահպանման համապատասխան որոշում կայացնելու համար: Տարածքի մեջ գտնվող օբյեկտների՝ շենքերի, շինությունների մակերեսը կանաչապատված տարածքի մակերեսի մեջ չի մտնում:

10. Բնակավայրի մայրուղիների և փողոցների երկարությամբ ձգվող կանաչապատված շերտի տեսքով տարածքների, ինչպես նաև կանաչապատ այլ օբյեկտների համար, որոնք ունեն մեկ անվանում, սակայն բաժանված են տարբեր վարչական ստորաբաժանումների հաշվեկշռում գտնվող տեղամասերի՝ կազմվում է բաժանված լանդշաֆտային տեղամասերով միացյալ անձնագիր, կոնկրետ հողօգտագործողների պատկանելիության նշումով: Այդպիսի անձնագրերի ֆինանսավորման և համաձայնեցման կարգը որոշվում է տեղական իշխանությունների կողմից:

11. Հողամասերի հետ կապված գործարքների գրանցման, հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման դեպքում, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անօրինաչափ գործողությունների հետևանքով կանաչ տնկարկներին վնաս հասցնելու դեպքում, ինչպես նաև հողի անցումը շինարարության տակ ձևակերպելու պարագայում անցկացվում է արտալանային գույքագրում:

12. Արտալանային գույքագրման և փոփոխությունների կատարման պարտականությունը, կախված տնկարկների կարգից, դրվում են.

- պատասխանատու հողօգտագործողների վրա, ում անցում է հողատարածքի օգտագործման իրավունքը,

- տարածքի սեփականատիրոջ վրա՝ վթարներից կամ այլ ճգնաժամային իրավիճակներից կամ հակաօրինական գործողություններից կանաչ տնկարկներին հասցված վնասի դեպքում:

13. Գույքագրման ելակետային տվյալները (իրավիճակային հատակագիծ 1:2000 մասշտաբով) պատվիրում են տեղական իշխանությունների ենթակայության տակ գտնվող ճարտարապետական ծառայությունում: Հողհատկացման ելակետային տվյալները տրվում են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Տարածքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն (ստեղծման պատմությունը, փաստացի օգտագործման կարգի առանձնահատկությունները և այլն) անհրաժեշտ է ստանալ տարածքի սեփականատիրոջից:

14. Գույքագրումը անցկացվում է գոյություն ունեցող գեոդեզիական նյութի, նախագծերի, տեղագրական հատակագծերի օգտագործմամբ (1:500 – 1:1000 մասշտաբով, առանձին դեպքերում՝ 1:2000 մասշտաբով, օրինակ, երկարաձիգ մայրուղիների երկայնքով ձգվող մեկ կամ երկու տիպի տնկարկների դեպքում): Այդ նյութերի բացակայության պայմաններում գույքագրվող օբյեկտների գծահանման աշխատանքները կատարում է տեխնիկական գույքագրման ծառայությունը, առաջնորդվելով բնակավայրերի գծահանման հրահանգներով: Բացառիկ դեպքերում թույլատրվում է ոչ մեծ մակերեսով օբյեկտների գեոդեզիական գծահանում:

15. Դաշտային աշխատանքների համար գեոդեզիական նյութերի հետ պատճենահանվում է կանաչապատ տարածքի հատակագիծը (առանց կորդինատների ցանցի, պայմանական նշանների, դրոշմների, մակարդակաչափի նիշերի անցկացման):

Հատակագծի պատճենը համեմատվում է բնական տարածքի հետ, ճշտվում է հատակագծի վրա անցկացված սահմանների և հաշվառվող օբյեկտի փաստացի իրավիճակի համապատասխանությունը:

16. Կանաչ տնկարկների գույքագրման իրականացման հարմարության նպատակով տարածքը բաժանվում է պայմանական հաշվառվող տեղամասերի (լանդշաֆտային տեղամասերի), որոնք սահմանափակված են ճանապարհներով կամ ներքին իրավիճակի այլ մշտական ուրվագծերով:

17. Կանաչ տնկարկների գույքագրումը և տարածքի անձնագրի ձևավորումը պետք է իրականացվի տվյալ տեսակի աշխատանքների կատարման կանոններին և հրահանգներին համապատասխան:

18. Կանաչ տնկարկների հետազոտման գործընթացում նըշվում են հետևյալ տվյալները:

- Մայրուղիների, փողոցների, բուլվարների, պուրակների, այգիների, զբոսայգիների տնկարկներում գտնվող ծառերի վերաբերյալ՝ ծառատունկերի տիպը (առանձին, շարքով, խմբերով), ծառերի համարը, քանակը, զբաղեցրած մակերեսը, ծառատեսակը, տարիքը, տրամագիծը, բարձրությունը, վիճակի բնութագիրը (այդ թվում, առանձնացվում են այն ծառերը, որոնք ենթակա են էտի), խնամքի վերաբերյալ առաջարկություններ:

Ծանոթություն.

- 1) *ծառատունկի տակ գտնվող մակերեսը պայմանականորեն ընդունվում է 0,5մ² չափով,*
 - 2) *ճանապարհների երկայնքով տեղադրված ծառերի և թփերի տեղեկությունները գրանցվում են կենտ և զույգ կողմերով՝ առանձին-առանձին,*
 - 3) *սիզամարզերի և ծաղկանոցների մասին տեղեկությունները գրանցվում են ամենավերջում:*
- Թփերի վերաբերյալ՝ տունկերի տիպը (առանձին, խմբով, շարքով, «կենդանի ցանկապատ» և այլն), թփերի համարները, քանակը, զբաղեցրած մակերեսը, թփատեսակը, տարիքը, բարձրությունը, վիճակի բնութագիրը, շարքով տունկի

երկարությունը, խնամքի վերաբերյալ առաջարկություններ:

Ծանոթություն.

առանձին կամ խմբով թփի մակերեսը որոշվում է սաղարթի պրոյեկցիայով (կամ ընդունվում է պայմանականորեն 0,3մ² չափով), «կենդանի ցանկապատի» մակերեսը որոշվում է ցանկապատի լայնության և երկարության արտադրյալով:

- Սիզամարգերի և ծաղկանոցների վերաբերյալ՝ հաշվառվում են մակերեսը, սիզամարգերի մակերեսը թեք լանջերի և հարթ տեղամասերի վրա հաշվառվում են առանձին տողերով:
- Անտառավարման մեթոդով ստեղծված տնկարկների վերաբերյալ (գնահատվում են անտառային տաքսացիայի մեթոդների կիրառմամբ՝ գույքագրման պատվիրատուի համաձայնությամբ)՝ բաժնի (լանդշաֆտային տեղամասի) մակերեսը, տեսակային կազմը, հարկայնությունը, տարիքային դասերը, միջին բարձրությունը, միջին տրամագիծը, տնկարկների կցվածությունը, 1 հա մակերեսի վրա ծառերի քանակը, վիճակը, նշվում են մատղաշները, մանրանտառը և հողածածկույթը: Այդպիսի տնկարկների գնահատման ընթացքում տրվում է յուրաքանչյուր հարկի նկարագրությունը:

Այդ դեպքում ծառաթփերի տեսակային կազմը նշանակվում է 1-10 ամբողջական միավորներով, իսկ տեսակների անվանումը՝ իրենց ցեղերի անվանման առաջին տառերով (նույն տառով սկսվող տարբեր ցեղերի բույսերի առկայության պարագայում, բացի առաջին տառից, օգտագործվում է ցեղի անվանման մեջ առկա ևս մի տառ), օրինակ, Բ1՝ բարդի բրգաձև, Կ1՝ կեչի ելունդավոր, Կ2՝ կեչի Լիտվինովի, Ե1՝ եղևնի կեռիկավոր, Ե2՝ եղևնի սովորական, Են1՝

եղևին սիբիրյան, Եր1՝ եղևանի ամուրյան, Լ1՝ լորենի մանրատերև և այլն:

Տնկարկների կցվածությունը ընդունվում է միավորի տասնորդական մասերով, հաշվելով լրիվ կցվածությունը՝ մեկ միավոր:

19. Կանաչ տնկարկների և տարածքի բարեկարգման տարրերի վիճակը որոշվում են աղյուսակ 8-ում բերված հատկանիշներով:

Աղյուսակ 6. Կանաչ տնկարկների և կանաչապատ տարածքների բարեկարգման տարրերի որակական վիճակի գնահատման հատկանիշները

Որակական վիճակը	Վիճակի կարգը	Հիմնական հատկանիշները
ԾԱՌԵՐ		
<i>Լավ</i>	Առանց թուլացման հատկանիշների	Տերևները կամ ասեղնատերևները կանաչ են, նորմալ չափերի, սաղարթը խիտ է, նորմալ ձևի և զարգացման, ընթացիկ տարվա վերաճը նորմալ է տվյալ տեսակի և հասակի, աճման պայմանների և սեզոնային փուլի համար: Վնասատուներով և հիվանդություններով վարակվածությունը հազվադեպ է կամ բացակայում է:
<i>Բավարար-1</i>	Թուլացած	Տերևները կամ ասեղնատերևները հաճախ սովորականից ավելի բաց գույն ունեն, սաղարթը չունի բավարար խտություն, վերաճը նորմալի համեմատ թուլացած է, սաղարթում չոր ճյուղերը կազմում են 25%-ից ավելի քիչ: Հնարավոր է բնի, մակերեսային արմատների և ճյուղերի տեղային վնասվածքի նշաններ, մեխանիկական վնասվածքներ, կան եզակի արմատաշվեր:

<p><i>Բավարար-2</i></p>	<p>Խիստ թուլացած</p>	<p>Տերևները սովորականից ավելի մանր են կամ բաց գույն ունեն, ասեղնատերևները բաց կանաչ կամ մոխրագույն ու անփայլ են, սաղարթը նոսր է, չոր տերևները կազմում են 25-50%, վերաճը նորմալի համեմատ նվազ է ավելի քան կիսով չափ: Հաճախ նկատվում է բնի, մակերեսային արմատների, ճյուղերի, տերևների կամ ասեղնատերևների հիվանդություններով և վնասատուներով վնասվածություն, այդ թվում բնային վնասատուներով: Լայնատերև ծառերի մոտ հաճախ հանդիպում են բնաշվեր:</p>
<p><i>Անբավարար-1</i></p>	<p>Չորացող</p>	<p>Տերևները սովորականից ավելի փոքր են, բաց գույն ունեն կամ դեղին գույնի են, ասեղնատերևները մոխրագույն-դեղնավուն են կամ դեղնականաչավուն, հաճախ ժամանակից շուտ թափվում են կամ չորանում, սաղարթը շատ նոսր է, սաղարթում ավելի քան 50%-ը չոր ճյուղեր են, ընթացիկ տարվա վերաճը շատ փոքր է, կամ բացակայում է: Բնի և ճյուղերի վրա հաճախ նկատվում են բնային վնասատուների բնակության նշաններ (անցքեր, հյութի հոսք, անցքերի բացման տեղերում՝ փայտալյուր և թեփ, կեղևի վրա, դրա տակ և բնափայտում՝ միջատներ): Լայնատերև ծառերի մոտ մեծ քանակով բնաշվերի առկայություն՝ երբեմն չորացող կամ չորացած:</p>
<p><i>Անբավարար-2</i></p>	<p>Ընթացիկ տարվա չորացած</p>	<p>Տերևները չորացել են, թառամել են կամ ժամանակից շուտ թափվել են, ասեղնատերևները մոխրագույն են, դեղին կամ գորշ, սաղարթը չորացել է, բայց մանր</p>

		ճյուղերը և կեղևը պահպանվել են: Բնի, ճյուղերի և մակերեսային արմատների վրա հաճախ բնային վնասատուների բնակության նշաններ են, բնափայտում բացված անցքեր:
<i>Անբավարար-3</i>	Անցած տարիների չորացած	Տերևները և ասեղնատերևները թափված են կամ պահպանվել են միայն մասնակիորեն, մանր ճյուղերը և ճյուղերի մի մասը թափվել են, կեղևը քայքայված է կամ բնի մեծ մասից թափված: Բնի և ճյուղերի վրա վնասատուների կողմից բացված անցքեր են, կեղևի տակ, անցքերի բացման տեղերում առկա է առատ փայտալյուր, առկա է քայքայող սնկերի սնկամարմին:
<i>ԹՓԵՐ</i>		
<i>Հավ</i>	Առանց թուլացման հատկանիշների	Առողջ թփեր՝ հիվանդության և վնասատուներով վնասվածության նշաններ չկան, առանց մեխանիկական վնասվածքների, նորմալ զարգացած են, խիտ տերևակալված են, տերևների գույնը և չափը նորմալ է:
<i>Բավարար-1</i>	Թուլացած	Թփեր՝ դանդաղ աճման նշաններով, չորացող ճյուղերի առկայությամբ (մինչև 10-15%), սաղարթի ձևի խախտմամբ և վնասատուներով վնասվածությամբ:
<i>Բավարար-2</i>	Խիստ թուլացած	Թփեր՝ դանդաղ աճման նշաններով, չորացող ճյուղերի առկայությամբ (մինչև 25-50%), սաղարթը նոսր է, ձևը փոփոխված, վերաճը ավելի քան կրկնակի անգամ փոքր է նորմալի համեմատությամբ:
<i>Անբավարար-1</i>	Չորացող	Չաճող, թուլացած թփեր, փոքր տերևներով, չկա վերաճ, ավելի քան 50% չորացող սաղարթով, հիվանդություններով և

		վնասատուներով վնասվածություն:
<i>Անբավարար-2</i>	Ընթացիկ տարվա չորացած	Տերևները չորացած կամ թառամած են, կամ ժամանակից շուտ թափվում են, սաղարթը չորացել է, բայց մանր ճյուղերը և կեղևը պահպանվել են:
<i>Անբավարար-3</i>	Անցած տարիների չորացած	Տերևները թափվել են, սաղարթը չորացել է, մանր ճյուղերը և մյուս ճյուղերի մի մասը թափվել են, կեղևը քայքայված կամ ճուղերի մեծ մասից թափված է:
<i>ՄԻՋԱՄԱՐԳԵՐ</i>		
<i>Լավ</i>		Միզամարզի մակերեսը լավ հարթեցված է, խոտածածկը խիտ է, համասեռ, համաչափ է, կանոնավոր խուզվում է, գույնը վառ կանաչ է, անցանկալի խոտաբույսեր և մամուռ չկա, նախագծային մակերեսի ծածկվածությունը՝ 90-100%:
<i>Բավարար</i>		Միզամարզի մակերեսը նկատվող անհարթություններով է, խոտածածկը անհարթ է, խառնված անցանկալի բույսերով, խուզվում է ոչ կանոնավոր, գույնը կանաչ է, նախագծային մակերեսի ծածկվածությունը՝ ոչ պակաս 75%:
<i>Անբավարար</i>		Խոտածածկը նոսր է, անհամասեռ է, շատ են անցանկալի բույսերը, խուզվում է անկանոն, սիզամարզի գույնը անհավասար է՝ դեղնավուն երանգների գերակայությամբ: Մամուռի առկայություն, շատ են սիզամարզի դատարկ և տրորված մասերը, նախագծային մակերեսի ծածկվածությունը՝ 75%-ից պակաս:
<i>ԾԱՂԿԱՆՈՑՆԵՐ</i>		
<i>Լավ</i>		Ծաղկանոցի մակերեսը մանրակրկիտ պլանավորված, հողը լավ պարարտացված է, բույսերը լավ են զարգացած և հա-

		վասարապես լավ որակի են, անցանկալի և չորացած բույսեր չկան:
<i>Բավարար</i>		Մակերեսը կոպիտ է պլանավորված, նկատելի անհավասարություններով, հողը թույլ է պարարտացված, բույսերը նորմալ զարգացած են: Չորացած բույսերի քանակը աննշան է, անցանկալի բույսերը եզակի են (մակերեսի մինչև 10%-ը):
<i>Անբավարար</i>		Մակերեսը կոպիտ է պլանավորված, հողը պարարտացված չէ, բույսերը թույլ են զարգացած, չորացած բույսերի քանակը զգալի է, շատ են անցանկալի բույսերը (մակերեսի ավելի քան 10%-ը):
<i>ՓՈՔԸ ՃԱՆՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՁԵՎԵՐ</i>		
<i>Լավ</i>		Կատարված են նախագծին խիստ համապատասխան, հուսալի ամրացված և ներկված են խոնավակայուն ներկերով:
<i>Բավարար</i>		Կան աննշան խախտումներ նախագծից, որոնք չեն խանգարում դրանց նշանակությանը և օգտագործման գործընթացին: Հուսալիորեն ամրացված են, բայց ծածկող ներկերը թափված են (մակերեսի մինչև 10-15%-ից):
<i>Անբավարար</i>		Առկա են մեխանիկական վնասվածքներ, կառուցվածքի խախտումներ, բաղադրիչ մասերի մասնակի բացակայություն, անհուսալի են ամրացված, ներկված են անփույթ կամ առկա են չներկված տեղեր՝ ավելի քան 15%:
<i>ՃԱՆԱՊԱՐՀԱՐԱՆՔԵՏԱՅԻՆ ՑԱՆՑ</i>		
<i>Լավ</i>		Ճանապարհները լավ են պլանավորված, ճանապարհաձածկը ամրացված է, փոսեր չկան, եզրաքարերը լավ վիճա-

		կում են:
<i>Բավարար</i>		Ճանապարհի լավ պլանավորում, վերին շերտի փոսերը և քայքայված մասերը՝ 10-15%: Ոչ ամուր ծածկույթով պատված ճանապարհներին առկա են անցանկալի բույսերի աննշան քանակություն, եզրաքարերը տեղ-տեղ բացակայում են:
<i>Անբավարար</i>		Ճանապարհային պլանավորումը խախտված է նախագծից, փոսերը և քայքայված մասերը՝ ավելի քան 15%: Կան տեղեր, որտեղ անձրևաջուրը չի հեռանում: Ոչ ամուր ծածկույթով պատված ճանապարհները ծածկված են անցանկալի բույսերով: Նախագծից դուրս՝ «տրորված արահետները» նույնպես գնահատվում են անբավարար:

20. Գույքագրման հատակագծում անհրաժեշտ է ցույց տալ.

- օբյեկտի արտաքին սահմանները,
- սահմաններից դուրս գտնվող իրավիճակը,
- հաշվառված տեղամասերի և կենսախմբերի սահմանները և համարները,
- փոքր ճարտարապետական ձևերի տեղադրությունը (սխեմատիկորեն),
- սիզամարզերի և ծաղկանոցների տեղադրությունը,
- հարթ կառույցները և ճանապարհաարահետային ցանցը՝ ճանապարհաձածկի տեսակի նշումով,
- պայմանական նշանները և պարզաբանման տեքստը:

Ծանոթություն:

- 1) *Ծառերի շատ արժեքավոր տեսակները (բացառիկ, պատմական) անցկացվում են հատակագծի վրա և համարակալվում են կարմիր գույնով, ամբողջ օբյեկտի սահմաններում ինքնուրույն համարներով:*

- 2) Փողոցների, նրբանցքների, հրապարակների, ավամերձ կանաչապատ և բարեկարգ տարածքների գույքագրման հատակագծում ցույց է տրվում յուրաքանչյուր ծառ և իր համարը:
- 3) Որպես հանգստի գոտի ցածր ծանրաբեռնվածություն կամ խիստ սահմանափակ այցելուների հոսք ունեցող կանաչապատ տարածքների (պատմական անտառայգիներ, սպորտային և այլն) գույքագրման հատակագծում նշվում են՝ բացատները, ջրամբարները և այլ օբյեկտներ: Ծառաթփային բուսականությունը ցույց է տրվում պայմանական նշաններով: Գույքագրման հատակագիծը կարող է լինել մշակված 1:1000 և ավելի փոքր մասշտաբով:
- 4) Որպես հանգստի գոտի բարձր ծանրաբեռնվածություն ունեցող պուրակներում, այգիներում, բուլվարներում, զբոսայգիներում, բակային և մերձշենքային տնկարկներում հատակագծի վրա անցկացվում են բոլոր ծառերը, թփերը, ծառուղիների ծառատունկերը, կենդանի ցանկապատերը, ծաղկանոցները և սիզամարգերը, խմբային ծառատունկերի ծառախմբերը և թփերի խմբերը:

Գույքագրման հատակագիծը ձևավորվում է դենդրոլոգիական հատակագծերի և հաշվառման ամփոփագրերի կազմման, նորմատիվաիրավական ակտերով հաստատված, մեթոդական ցուցումների և համապատասխան:

21. Անձնագրում բերվում են լրացուցիչ տեղեկություններ, որտեղ նշվում են կանաչապատ օբյեկտի հիմնանորոգման կամ վերակառուցման ժամկետները:

22. Տարածքը իրավաբանորեն տիրապետող կազմակերպությունները նոր օբյեկտների կառուցման մտադրության և գոյություն ունեցող կանաչապատ տարածքում իրականացվող բոլոր փոփոխությունների մասին պարտավոր են ժամանակին հայտնել տեխնիկական գույքագրման տարածքային կառույցին:

Տարածքը իրավաբանորեն տիրապետող կազմակերպությունները պարտավոր են ժամանակին տեղյակ պահել գործադիր իշխանության մարմնին, որի վրա է դրված կանաչ տնկարկների ռեեստրի վարման պարտականությունը, գոյություն ունեցող կանաչ տնկարկների տարածքում իրականացվող փոփոխությունների մասին, այդ թվում՝ կանաչ տնկարկների հատումների, ծառատունկերի և վերատնկումների վերաբերյալ:

Օբյեկտներում իրականացվող փոփոխությունները ցույց են տրվում գույքագրման հատակագծի վրա և անձնագրում, որն իրականացվում է ինչպես էլեկտրոնային կրիչների վրա, այնպես էլ թղթային տեսքով:

Գույքագրման հատակագծում փոփոխությունները (թղթային տեսքով) ցույց են տրվում՝ կարմիր գույնի գծեր քաշելով գոյություն ունեցող իրավիճակի վրա և գծագրվում է նորը՝ սև գույնով:

Անձնագրում հնացած գրառումները (թղթային տեսքով) ջնջվում են կարմիր գույնի գիծ քաշելով: Նոր գրառումները նշվում են անձնագրի հաջորդող հորիզոնական տողերում: Անհրաժեշտության դեպքում անձնագիրը լրացվում է ներդիրներով:

Էլեկտրոնային տարբերակով անձնագրում փոփոխությունները անցկացվում են թղթայինում իրականացվող ուղղումների հետ միաժամանակ: Ընդ որում, անձնագրում իրականացվող փոփոխությունների էլեկտրոնային ֆորմատը հաստատվում է համայնքի տեղական իշխանությունների լիազորած մարմնի կողմից, որի վրա դրված է համայնքի կանաչ տնկարկների տվյալների հաշվառման և ռեեստրի վարման պարտավորությունը:

23. Կանաչապատ օբյեկտի հաշվառման անձնագիրը կազմվում է երկուական օրինակներից՝ թղթային և էլեկտրոնային կրիչների վրա, որոնք նույնությամբ պարունակում են բոլոր տեղեկությունները: Թղթային և էլեկտրոնային տարբերակներով անձնագրերի տվյալների նույնականությունը երաշխավորվում է կանա-

չապատ օբյեկտի գույքագրման աշխատանքների պատվիրատուի կողմից:

24. Կանաչ տնկարկների գույքագրման արդյունքներով վարվում է կանաչ տնկարկների ռեեստրը: Ռեեստրի վարման կարգը հաստատվում է նորմատիվաիրավական ակտով, համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

25. Կանաչ տնկարկների գույքագրման աշխատանքների անցկացման ընթացքում աշխատանքների պատվիրատուները պարտավոր են պայմանագրային փաստաթղթերի մեջ մտցնել գույքագրման արդյունքների էլեկտրոնային տեսքով տրամադրման վերաբերյալ պահանջ:

Գույքագրման արդյունքների էլեկտրոնային տեսքով տրամադրման ֆորմատը հաստատվում է համայնքի գործադիր իշխանության լիազորված մարմնի կողմից, որի վրա դրված է համայնքի կանաչ տնկարկների ռեեստրի վարման պարտավորությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԿԱՆԱՉ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Կանաչ տնկարկների վիճակի մոնիտորինգը կարևոր դեր ունի բնակավայրի կանաչ տնկարկների պահպանման և խնամքի կազմակերպման գործընթացում: Մոնիտորինգի շնորհիվ հնարավոր է դառնում պարզել տնկարկների ֆունկցիոնալ վիճակը, ինչպես նաև համեմատել այն նորմալ վիճակին համապատասխանող չափորոշիչների և նախորդ մոնիտորինգների արդյունքների հետ՝ պարզելու համար տեղի ունեցող փոփոխությունների դինամիկան:

1. Կանաչ տնկարկների վիճակի մոնիտորինգը իրականացվում է հետևյալ նպատակներով.

- կանաչ տնկարկների առկա վիճակի գնահատում,

- կանաչ տնկարկների վիճակի փոփոխության դինամիկայի գնահատում, այդ թվում բացասական փոփոխությունների (դրանց կայունության խախտման, բնական և անտրոպոգեն գործոններով պայմանավորված վնասվածքների և վարակվածության և այլն),
- կանաչ տնկարկների ստեղծման, խնամքի, վերահսկման, պահպանման և որակի բարելավման միջոցառումների արդյունավետության գնահատում,
- կանաչ տնկարկների վիճակի փոփոխության կանխատեսում,
- կանաչ տնկարկների ստեղծման, խնամքի, վերահսկման և պահպանման ոլորտներում իրականացվող տնտեսական գործունեության բարելավման համար տեղեկատվական ապահովում:

2. Կանաչ տնկարկների վիճակի մոնիտորինգը իրականացվում է դիտարկումների մշտական և ժամանակավոր կետերում, արհեստականորեն ստեղծված և բնական կանաչապատ տարածքների փորձագիտական հետազոտման ճանապարհով: Դիտարկումներն անցկացվում են կանաչապատ օբյեկտների կանաչ տրնկարկների միջատաբանական, ֆիտոպաթոլոգիական, էկոլոգիական, երկրաքիմիական, լանդշաֆտային, դենդրոլոգիական, քարաքոսաչափորոշիչային ցուցանիշներով, ինչպես նաև հողակենդանաբանական բնութագրերով և թռչնաբանական տվյալներով: Մոնիտորինգի տվյալների գնահատումը իրականացվում է կանաչապատ և բնական տարածքների դասակարգումով, բնակավայրի տարածքի վարչատարածքային բաժանման և քաղաքաշինական գոտիավորման հաշվառումով:

3. Մոնիտորինգի համակարգը կառուցվում է կանաչ տնկարկների գույքագրման հիման վրա և դրանց վիճակի ամենամյա վերահսկողության վրա, ինչը թույլ է տալիս արժանահավատ ձևով գնահատել կանաչ տնկարկների վիճակի դինամիկան, վերլուծել

ստացված արդյունքները, կառուցել ապագա կանխատեսումներ: Յուրաքանչյուր ծառի համար, որը մտնում է մոնիտորինգի նախագծի մեջ, որոշվում է դենդրոլոգիական և ֆիտոսանիտարական պարամետրերը: Հետազոտությունների արդյունքները յուրաքանչյուր տարի գրանցվում են «Կանաչ մոնիտորինգ» տվյալների բազայում:

4. Կանաչ տնկարկների վիճակի մոնիտորինգի տվյալները պահվում են «Կանաչ մոնիտորինգ» տվյալների բազայում և հանդիսանում են համայնքի տեղեկատվական ռեսուրսի կարևոր բաղկացուցիչ մաս:

5. Կանաչ տնկարկների վիճակի մոնիտորինգի տվյալները հրապարակվում են յուրաքանչյուր տարի, տարեկան վերլուծական զեկույցում:

6. Կանաչ տնկարկների վիճակի մոնիտորինգի արդյունքները օգտագործվում են կանաչապատման և բարեկարգման օբյեկտների նախագծման, դրանց սպասարկման աշխատանքների պլանավորման, բնակավայրի գլխավոր հատակագծի համապատասխան բաժինների մշակման և թարմացման գործընթացներում: Մոնիտորինգի շրջանակներում կանաչ տնկարկների վիճակի վերաբերյալ բացահայտված բնապահպանական օրենսդրության խախտումների մասին տեղեկատվությունը ուղարկվում է իրավասու վերահսկիչ մարմիններին:

Կանաչապատման և բարեկարգման օբյեկտների նախագծման ժամանակ հաշվի են առնվում մոնիտորինգի արդյունքները, կապված վնասատուների և հիվանդությունների նկատմամբ կանաչ տնկարկների կայունության հետ: Կանաչապատման և բարեկարգման նախագծերի համաձայնեցման գործում իրավասու հաստատությունը նախագծային փաստաթղթերում ապահովում է տվյալ էկոլոգիական պահանջի կատարումը:

Կանաչ տնկարկների սպասարկման աշխատանքների պլանավորման ժամանակ ձևավորվում և հիմնավորվում է պլանավորվող

աշխատանքների ծավալը, հաշվի առնելով այն առաջարկությունները, որոնք տրված են մոնիտորինգի արդյունքների հիման վրա՝ կանաչ տնկարկների վիճակի բացասական դինամիկայի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների ցանկի վերաբերյալ:

Չորացած ծառերի առկայության վերաբերյալ մոնիտորինգի տվյալները հաշվի են առնվում սանիտարական հատումների աշխատանքների ծավալների պլանավորման համար, որն իրականացնելու են կանաչ տնկարկների սպասարկմամբ զբաղվող կազմակերպությունները:

Մոնիտորինգը ապահովում է բնակավայրի գլխավոր հատակագծի ցուցանիշների թարմացումը կանաչ տնկարկների վիճակի մասով:

Կանաչ տնկարկների վիճակի վերաբերյալ բնապահպանական օրենսդրության խախտումների բացահայտման մասին տեղեկատվություն ստանալով, ներառյալ կանաչապատման աշխատանքների և օբյեկտների սպասարկման աշխատանքների ընթացքում թույլ տրված խախտումների կամ ագրոտեխնիկական կանոնները չպահպանելու վերաբերյալ, տեղական իշխանության համապատասխան ստորաբաժանումները և բնապահպանական վերահսկողական տեսչությունները անցկացնում են ստուգումներ՝ իրենց իրավասություններին համապատասխան:

7. Կանաչ տնկարկների վիճակի մոնիտորինգի տվյալները հրապարակվում են ամեն տարի, ամենամյա վերլուծական զեկույցի կազմում:

8. Կանաչ տնկարկների վիճակի մոնիտորինգի արդյունքներով, անհրաժեշտության պարագայում, յուրաքանչյուր տարի բնակավայրի տնկարկներում իրականացվում են առկա ծառաթփային տեսակների առավել վտանգավոր հիվանդությունների և տնկարկների պաշտպանության համար անհրաժեշտ համապատասխան կենսաբանական և քիմիական միջոցների ցանկերի լրացումներ:

ՀԱՎԵԼ ՎԱԾ 4

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱԶ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Բնակավայրերի կանաչ տնկարկների վիճակի մասին օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու նպատակով արդյունավետ միջոց է հատուկ մոնիտորինգի համակարգի ստեղծումը:

Այն ենթադրում է հետևյալ աշխատանքների իրականացումը.

- 1) կանաչ տնկարկների գույքագրում, որը ներառում է ծառերի, թփերի (առկայության դեպքում՝ նաև լիանաների), ծաղկադեկորատիվ բույսերի, ինչպես նաև ծաղկանոցների և սիզամարգերի տարածքների վերաբերյալ տվյալների հավաքագրում, համակարգում և վերլուծություն,
- 2) միջոցառումների մշակում՝ ուղղված կանաչ տնկարկների վիճակի բարելավմանը, մարդկանց հանգստի կազմակերպման և միջավայրի ձևավորման գործում դրանց դերի ուժեղացմանը,
- 3) տնկարկների մոնիտորինգի տվյալների տեղեկատվական բազայի ստեղծում:

Մոնիտորինգի հիմքը հանդիսանում է կանաչ տնկարկների գույքագրման աշխատանքների իրականացումը: Կախված աշխատանքների նպատակից, ինչպես նաև տարբեր տեսակի կանաչ տնկարկների բարձրարժեք լինելու հանգամանքից, գույքագրումը կարող է լինել համատարած կամ ընտրովի:

Համատարած գույքագրումը անցկացվում է ծառերի, թփերի անընդմեջ հաշվառմամբ հետագուտվող ամբողջ տեղամասում: Որպես կանոն, համատարած գույքագրումը իրականացվում է այն տնկարկներում, որոնք գտնվում են բնակավայրի վարչական սահմաններում (այգիներ, զբոսայգիներ, պուրակներ, բուլվարներ, փողոցների երկայնքով, ներթափանցանքային, սահմանափակ օգտագործման և հատուկ նշանակության տնկարկներ):

Ընտրովի գույքագրումն իրականացվում է, հիմնականում, բնակավայրի շրջագծից դուրս գտնվող տնկարկներում:

Այդպիսի գույքագրումը իրականացնում են հետևյալ դեպքերում.

- երբ կանաչ տնկարկների առանձին տեղամասեր կտրուկ տարբերվում են իրենց գնահատականի (տաքսացիա) ցուցանիշներով՝ կազմով, տարիքով, բարձրությամբ, բնի տրամագծով, սահարթների կցվածությամբ ու ձևով և այլն,
- երբ օբյեկտները, որտեղ անհրաժեշտ է առանձնացնել և գույքագրել տեղամասերը, իրենց բույսերի տեսակային կազմով և հորինվածքային լուծումներով ունեն մեծ արժեք (ճարտարապետական կոթողների և ջրամբարների շրջապատող տրնկարկներ, կանաչ գոտիների, անտառայգիների հիմնական մայրուղիների և գլխավոր մուտքերի տարածքում գտնվող տեղամասեր և այլն):

Կանաչ տնկարկների մնացած տարածքներում, որոնք հեռու են հիմնական հորինվածքային կենտրոններից, անցկացվում է լանդշաֆտային գնահատում, որոշելով տնկարկների տաքսացիայի միջին ցուցանիշները, լանդշաֆտի սանիտարական վիճակը և գեղագիտական արժեքը, ինչպես նաև իրականացվում է կանաչ տնկարկների կայունության և, որպես մարդկանց հանգստի միջավայր, արժեքի բարձրացման վերաբերյալ առաջարկությունների մշակում:

Գույքագրմանը նախորդում է կանաչ տնկարկների ամբողջ տարածքի տեղադրիտական հետազոտությունը: Տեղադրիտական հետազոտության արդյունքները անցկացվում են հատակագծի վրա, նշելով այն տեղամասերը, որոնք ենթակա են մանրակրկիտ գույքագրման կամ լանդշաֆտային տաքսացիայի:

Գույքագրման են ենթարկվում առանձին ծառերը և թփերը, ծառերի և թփերի խմբերը, կանաչ ցանկապատերը, ծառուղիները, բուլվարները, ծաղկանոցները, սիգամարգերը և այլն:

Հետազոտված յուրաքանչյուր տեղամաս անցկացվում է հատակագծի վրա, որտեղ նշվում են տեղամասի համարը և մակերեսը: Եթե

բույսերի խումբը տալիս է ավարտուն, տեսողական (հորինվածքային) տպավորություն և ընկալվում է որպես ինքնուրույն միավոր, ապա այն նկարագրվում է մի համարի տակ, դրա բաղադրամաս կազմող տարրերը (ծառերի, թփերի խումբ, կենդանի ցանկապատ և այլն) տրվում են այդ համարի տակ՝ ավելացնելով համարի ինդեքսը (*ա, բ, գ* և այլն):

Գույքագրման հատակագծի վրա ծառերի, թփերի, ինչպես նաև ծաղկանոցների և սիզամարգերի գծագրումը, 1:500 կամ այլ մասշտաբով, իրականացվում է դրանց համարակալումից և տեղադրության որոշումից հետո: Տեղադրության որոշման համար օգտագործվում է տվյալ տեղամասում առկա ամբողջ ներքին իրադրությունը (շենքեր, կառույցներ, ճանապարհներ, գեոդեզիական նշաններ և այլն):

Կանաչ տնկարկների գույքագրման աշխատանքները տարվում են երկու փուլով՝ դաշտային և գրասենյակային: Դաշտային (բնօրինակի վրա) աշխատանքները կատարվում են բույսերի բուսաճական շրջանում և տնկարկների տերևակալված վիճակում:

Տնկարկների գույքագրման արդյունքները գրանցվում են հատուկ դաշտային մատյաններում: Հետազոտության արդյունքներով կազմրվում է բույսերի գույքագրման տվյալների ամփոփագիրը:

Ծառերի, թփերի մանրամասն գույքագրման ամփոփագրում նրշվում են.

- տեղամասի համարը և մակերեսը,
- կանաչ տնկարկների տեղադրությունը և բնութագրերը,
- տեղամասում գեղազարդ բույսերի տեսակները և քանակը,
- տաքսացիայի ցուցանիշները՝ տարիքը, միջին բարձրությունը, ծառաբնի և սաղարթի միջին տրամագիծը և այլն,
- սանիտարական վիճակը,
- գեղագիտական արժեքը,
- բույսերի պահպանվածությունը (%),
- կանաչ տնկարկների վիճակի ընդհանուր գնահատականը,
- կանաչ տնկարկների խնամքի և առողջացման առաջարկվող միջոցառումները:

Տաքսացիայի ցուցանիշները որոշվում են դաշտային հետազոտությունների ընթացքում՝ ընդունված համընդհանուր մեթոդներով:

1. Կանաչ տնկարկների սանիտարական վիճակի և կայունության գնահատման համար օգտագործում են հետևյալ դասակարգումը (աղյուսակ 7):

Աղյուսակ 7. Կանաչ տնկարկների սանիտարական վիճակի և կայունության գնահատման դասակարգումը

<i>I կարգ</i>	Տնկարկները միանգամայն առողջ են, ունեն լավ աճ և զարգացվածություն, առողջ ծառերը և թփերը տեղամասում կազմում են ոչ պակաս 90%:
<i>II կարգ</i>	Տնկարկները առողջ են, բայց զգալիորեն դանդաղ աճ ունեն, առողջ բույսերը տեղամասում կազմում են ոչ պակաս 50%:
<i>III կարգ</i>	Տնկարկները ունեն կտրուտ դանդաղեցված աճ, անկայուն են, անբարենպաստ գործոնների ազդեցության տակ սկսվել է տնկարկների անկումը, առողջ բույսերը տեղամասում կազմում են ոչ պակաս 20%:

2. Կանաչ տնկարկների գեղագիտական գնահատման համար օգտագործվում է հետևյալ դասակարգումը (աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Կանաչ տնկարկների գեղագիտական գնահատման դասակարգումը

<i>I կարգ</i>	<i>Բարձր գեղագիտական արժեք:</i> Ծառերի և թփերի արժեքավոր տեսակային կազմով, բարձր գեղագարդ որակներով տեղամասեր, որոնցում մոտակա տարիների չի պահանջվում իրականացնել տրնտեսական միջոցառումներ:
<i>II կարգ</i>	<i>Միջին գեղագիտական արժեք:</i> Միջին գեղագարդ որակներով տեղամասեր, տնկարկները աչքի են ընկնում միանման տեսակային կազմով, չափից

	ավելի խիտ են կամ առկա են մեծ քանակությամբ ցածրարժեք տեսակներ, գեղագիտական արժեքի բարձրացման համար պահանջվում են հատուկ միջոցառումներ՝ խնամքի հատումներ, արժեքավոր տեսակների տնկում:
<i>III կարգ</i>	<i>Ցածր գեղագիտական արժեք:</i> Տեղամասերը աչքի են ընկնում ոչ բարձր գեղագարդ հատկանիշներով, տնկարկները միատարր են, տեսակային կազմով հետաքրքիր չեն կամ վարակված են հիվանդություններով, չորացող են, քիչ կայուն են, տնկարկների բարելավման համար պահանջվում են ավելի բարդ միջոցառումներ՝ սանիտարական հատումներ, տնկարկների վերակառուցում, արժեքավոր տեսակների տնկում:

Մոնիտորինգի արդյունքներով կազմվում է կանաչ տնկարկների խնամքի և առողջացման տնտեսական միջոցառումների ամփոփագիրը, որն օգտագործվում է կանաչապատման աշխատանքների պլանավորման և իրականացման ընթացքում:

Առաջարկվում է ստեղծել ավտոմատացված «երկրատեղեկատվական համակարգի» (GIS) տարրերով համակարգչային տվյալների բանկ՝ բնակավայրերի կանաչապատման բոլոր օբյեկտների համար, ինչը թույլ կտա որակապես բարելավել կանաչ տնկարկների վիճակի մոնիտորինգի աշխատանքների որակը, ինչպես նաև կանաչ տնկարկների վիճակի կառավարումը:

ՀԱՎԵԼՎԱԾ 5

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱԶ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Կանաչ տնկարկների գույքագրման արդյունքների հիման վրա ստեղծվում և վարվում է կանաչ տնկարկների ռեեստրը:

Սույն մեթոդական առաջարկները նախատեսված են համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին կանաչ տնկարկների ռեեստրը ստեղծելու և վարելու գործում տեխնիկական աջակցություն ցուցաբերելու համար:

1. Ընդհանուր դրույթներ

- 1) Բնակավայրի կանաչ տնկարկների ռեեստրը (այսուհետ՝ կանաչ տնկարկների ռեեստր) համայնքապատկան տարածքներում գտնվող և պետական անտառային ֆոնդի մեջ չմտնող կանաչ տնկարկների վերաբերյալ տվյալների ամբողջությունն է, որն իրենից ներկայացնում է բնակավայրի սահմաններում կանաչ տնկարկների բուսատեսակային կազմի և քանակի վերաբերյալ տվյալների ժողովածու:
- 2) Կանաչ տնկարկների ռեեստրի ստեղծման նպատակը բնակավայրում կանաչ տնկարկների հաշվառումն ու վիճակի ընթացիկ վերահսկողության իրականացումն է, այդ թվում.
 - կանաչ տնկարկների վիճակի և քանակի մոնիտորինգի անցկացումը,
 - կանաչապատ տարածքների պահպանության, սպասարկման ու զարգացման ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքականության հիմնական ուղղությունների որոշումը,

- կանաչ տնկարկների պահպանության, խնամքի ու զարգացման գործընթացներում առավել ռացիոնալ մոտեցումների մշակումը,
 - կանաչ տնկարկների քանակի և վիճակի վերաբերյալ բնակչությանը, իշխանություններին և կանաչապատ տարածքների կառավարման մարմիններին արժանահավատ տեղեկատվությամբ ապահովումը:
- 3) Կանաչ տնկարկների ռեեստրի ստեղծման և վարման կարգը հաստատվում է տեղական ինքնակառավարման կամ այլ իրավասու մարմինների կողմից, համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:
 - 4) Կանաչ տնկարկների ռեեստրը վարում են տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք յուրաքանչյուր տարի կազմակերպում և անցկացնում են կանաչ տնկարկների ուսումնասիրություն:
 - 5) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշակվում է հաշվառվող տեղամասերի որոշման և գույքագրման միջոցառումների իրականացման նախագիծ:

2. Կանաչ տնկարկների ռեեստրի ստեղծման և վարման կարգի օրինակելի դրույթներ

- 1) Կանաչ տնկարկների ռեեստրի ստեղծման նպատակն է հաշվառման և կանաչ տնկարկների վիճակի ընթացիկ վերահսկողության իրականացումը բնակավայրի կանաչ գոտիների սահմաններում:
- 2) Ռեեստրը իրենից ներկայացնում է աղյուսակների (հաշվառվող տեղամասերի կանաչ տնկարկների տեղեկագրերի՝ *հավելված 7*-ում ներկայացված ձևով) ամբողջություն:
- 3) Բնակավայրի կանաչապատ տարածքները, որոնք հաշվառվում են ռեեստրում, իրենցից ներկայացնում են բնականո-

րեն աճած կամ արհեստականորեն տնկված ծառաթփային և (կամ) խոտային բուսականությամբ ծածկված տարածքներ, ներառյալ այն հատվածները որոնք ծածկված չեն բուսականությամբ, սակայն հանդիսանում են տվյալ կանաչապատ տարածքների անբաժան բաղադրիչներ (ճանապարհներ, հարթակներ, շատրվաններ, բարեկարգման այլ տարրեր):

- 4) Հաշվառվող տարածք համարվում է այն կանաչապատ տեղամասը, որն ունի հաստատված սահմաններ և տրամադրված է օգտագործման որևէ իրավաբանական կամ ֆիզիկական անձի (պատասխանատու օգտագործող, վարձակալ կամ կառավարող), այդ թվում ընդհանուր օգտագործման հողատարածքներում, մայրուղիների երկայնքով կանաչապատ տարածքներում՝ հատկացվող գոտու սահմաններում:
- 5) Բնակավայրի սահմաններում կանաչ տնկարկների հաշվառումն իրականացվում է դրանց գույքագրման հիման վրա, որոնք գտնվում են հաշվառվող տեղամասի՝ կանաչապատ տարածքի սահմաններում, կանաչ տնկարկների քանակի, տեսակային կազմի և վիճակի որոշման նպատակներով:
- 6) Տեղամասերի հաշվառումն ընդգրկում է բոլոր կանաչ տրնկարկները (ծառերը, թփերը, սիզամարգերը, ծաղկանոցները), որոնք գտնվում են բնակավայրերի հանգստի, բնակելի, հասարակական, արտադրական գոտիներում և այլ տարածքներում տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներով և քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան՝ բնակավայրերի բարեկարգման և կանաչապատման նպատակներով:
- 7) Ռեեստրում չեն ընդգրկվում.
 - այն կանաչ տնկարկները, որոնք գտնվում են քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն

հանդիսացող կանաչապատ հողամասերում և չունեն սահմանափակումներ տվյալ հողամասի օգտագործման համար,

- այն արհեստական և բնական ծագման կանաչ տնկարկները, որոնք չեն համապատասխանում քաղաքաշինական փաստաթղթերին կամ այլ նորմատիվախրավական ակտերի,
- այն կանաչ տնկարկները, որոնք գտնվում են բնության հատուկ պահպանվող տարածքներում (կարգավորվում է բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ օրենսդրությամբ):

8) Հաշվառվող տեղամասերի՝ բնակավայրերի կանաչապատ տարածքների հիմնական կարգերը.

- 1-ին կարգ՝ ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ (կանաչապատ տարածքներ, որոնք նախատեսված են բնակչության տարբեր ձևերի հանգստի անցկացման համար՝ անտառներ, անտառապուրակներ, զբոսայգիներ, այգիներ կամ պարտեզներ, պուրակներ, բուլվարներ, առափնյա և այլ հանգստի, բնության տարածքներ),
- 2-րդ կարգ՝ սահմանափակ օգտագործման կանաչապատ տարածքներ (առողջապահական, մանկական, մշակութային, կրթական, գիտական հաստատությունների, բնակելի, քաղաքացիական, արդյունաբերական կառուցապատման տարածքների, սպորտային համալիրների, առողջարարական հաստատությունների սահմաններում գտնվող կանաչապատ տարածքներ, որոնք նախատեսված են բնակչության որոշակի խմբերի օգտագործման համար),
- 3-րդ կարգ՝ հատուկ նշանակության կանաչապատ տարածքներ (սանիտարապաշտպանիչ, պաշտպանական

գոտիների, հողապաշտպան, ջրապաշտպան, հողմապաշտպան, մերձճանապարհային տնկարկներ, բուսաբանական, կենդանաբանական այգիներ, պտղատու այգիներ, ցուցահանդեսների տնկարկներ, տնկարաններ և այլն):

- 9) Ռեեստրի վարման համար կանաչ տնկարկների հաշվառվող տեղամասի տեղեկագրերը ձևավորվում են թղթային և էլեկտրոնային կրիչների վրա՝ աղյուսակների և քարտեզագրական նյութերի տեսքով:
- 10) Կանաչ տնկարկների ռեեստրի վարումը իրականացնում է համայնքապետարանի մասնագետը (լիազորված ստորաբաժանումը):
- 11) Տեղեկատվական քարտեզի փոփոխությունը իրականացնում է համայնքապետարանի մասնագետը (լիազորված ստորաբաժանումը) կատարված աշխատանքների ակտի ձևակերպման օրվանից մեկ ամսվա ընթացքում:
- 12) Հաշվառվող տեղամասի կանաչ գոտու վիճակի փոփոխությունը պետք է ուղեկցվի այդ տեղամասի կանաչ տնկարկների տեղեկատվական քարտեզի համապատասխան ճշգրտմամբ:
- 13) Կառուցապատման, ճանապարհների ու մայրթերի անցկացման և այլ կառույցների նախագծերի մշակման ժամանակ տեղեկատվական քարտեզ են մտցվում առկա ծառաթփերի տնկարկները՝ տեսակների նշումով, իսկ ծառաթփային բուսականության բացակայության դեպքում կատարվում է համապատասխան գրառում:
- 14) Ռեեստրում հաշվառված տեղամասերում առկա ծառերի ու թփերի հատման և վերատնկման, սիզամարգերի հատակագծի փոփոխության բոլոր այն դեպքերը, որոնք անհրաժեշտ են քաղաքաշինական գործունեության իրականաց-

ման ընթացքում, կատարվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կամ նրանց թույլտվությամբ:

- 15) Կանաչ տնկարկների ամբողջական ռեեստրը, ինչպես նաև դրանում կատարվող բոլոր փոփոխությունները հաստատվում են տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերով:
- 16) Բնակավայրի կանաչ տնկարկների ամբողջական ռեեստրը և դրանում պլանավորվող բոլոր փոփոխությունները պետք է հասանելի լինեն հանրությանը և տեղադրված լինեն համայնքապետարանների տեղեկատվական կայքերում:

ՀԱՎԵԼՎԱԾ 6

ՀԱՇՎԱՌՎՈՂ ՏԵՂԱՄԱՍԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Համայնք _____	
ՀԱՇՎԱՌՎՈՂ ՏԵՂԱՄԱՍԻ ԱՆՁՆԱԳԻՐ	
Գույքագրման համարը _____	
Օբյեկտի անվանումը _____	
Դասակարգման ծածկագիրը (հողի ֆունկցիոնալ նշանակության) _____	
Վարչատարածքային պատկանելիությունը, (վարչական շրջան, եթե կիրառելի է) _____	
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է	ՀԱՍՏՏՏՎԱԾ Է
Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից լիազորված ստորաբաժանում _____	Մեփականատեր (տարածքի պատասխանատու հողօգտագործող) _____
« ____ » _____ 20 թ.	« ____ » _____ 20 թ.
Կատարող (գույքագրումը կատարող կազմակերպության անվանումը) _____	
« ____ » _____ 20 թ.	

Անձնագիրը կազմեցին

	Պաշտոն	Ա.Ա.Հ.	Ստորագրություն	Ամսաթիվ
<i>Ստուգեց</i>				
<i>Կատարող</i>				

Անձնագրի կազմի մեջ մտնող փաստաթղթեր

№	Անվանումը	Ամսաթիվ	Մասշտաբ	Քանակը	Էջը
1	<i>Անձնագրի կազմի մեջ մտնող փաստաթղթեր</i>		-		
2	<i>Օբյեկտի մասին ընդհանուր տեղեկություններ</i>		-		
3	<i>Բնակավայրում օբյեկտի տեղադրության սխեման</i>		-		

4	Իրավիճակային հատակագիծ		1:2000		
5	Գույքագրման հատակագիծ		1:500		
6	Օբյեկտի ընդհանուր մակերեսը		-		
7	Շենքեր և շինություններ		-		
8	Հարթ կառույցներ		-		
9	Ճանապարհաարահետային ցանց		-		
10	Կանաչապատման տարրեր և կանաչ տնկարկների աղյուսակներ		-		
11	Փոքր ճարտարապետական ձևեր և բարեկարգման տարրեր		-		
12	Ռեյլեֆի կազմակերպման տարրեր		-		
13	Ֆունկցիոնալ ապահովման համակարգեր		-		
14	Բնապահպանական և միկրոկլիմայական հարմարավետության ապահովման համակարգեր		-		
15	Վերանորոգման աշխատանքների անցկացման մասին տեղեկություններ		-		
16	Օբյեկտի բնութագիրը		-		

Օբյեկտի մասին ընդհանուր տեղեկություններ

Վարչատարածքային պատկանելիությունը, (վարչական շրջան, եթե կիրառելի է) _____
Հասցեն (փոստային) _____
Օբյեկտի անվանումը և կարգավիճակը _____
Օբյեկտի սեփականատերը, պատասխանատու հողօգտագործողը (վարձակալողը), (անվանում, հասցե, հեռախոս) _____
Անձնագրի պատվիրատուն _____
Ճարտարապետանախագծային լուծման մշակողը _____
Մշակման ամսաթիվը _____
Անձնագրի կազմողը _____
Անձնագրի կազմման ամսաթիվը _____

Բնակավայրում օբյեկտի տեղադրության սխեման

Օբյեկտի տեղադրության սխեման.

Իրավիճակային հատակագիծը (մասշտաբ 1:2000)

Հաշվառվող օբյեկտի գույքագրման հատակագիծը (մասշտաբ 1:500)

I. Օբյեկտի ընդհանուր մակերեսը (մ²)

--

II. Շենքեր և շինություններ

<i>N^o</i>	<i>Նշանակությունը (բնակելի, ուսումնական, սպորտային, առողջապահական և այլն)</i>	<i>Կառուցապատման մակերեսը (մ²)</i>	<i>Կառույցի եզրամայթ (մ²)</i>

III. Հարթ կառույցներ

<i>Ընդհանուր մակերեսը (մ²)</i>			
<i>N^o</i>	<i>Անվանումը</i>	<i>Մակերեսը (մ²)</i>	<i>Ծածկը</i>

Օբյեկտի տարածքը վերաբերվում է խնամքի _____ կարգին:

Սեփականատեր _____

IV. Ճանապարհաարահետային ցանց

<i>Ընդհանուր մակերեսը (մ²)</i>			
<i>N^o</i>	<i>Անվանումը</i>	<i>Մակերեսը (մ²)</i>	<i>Ծածկը</i>

Օբյեկտի տարածքը վերաբերվում է խնամքի _____ կարգին:

Սեփականատեր _____

V. Կանաչապատման տարրեր և կանաչ տնկարկների աղյուսակ

Կանաչ տնկարկների (սիզամարգ) հաշվառման ամփոփագիր

Տեղամասի №-ը	Սիզամարգի նակերեւը, մ ²	Սիզամարգի տիպը, մ ²						Սիզամարգի վիճակը		
		Սովորական	Մարգագեղսնային	Պարտերային	Թեքության վրա	Իներտ նյութ (ավազ, իւնաքար, ածուխ և այլն)	Այլ տեսակի	Լավ	Բավարար	Անբավարար
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

Օբյեկտի տարածքը վերաբերվում է խնամքի _____ կարգին:

Սեփականատեր _____

Կանաչ տնկարկների (ծառաթփեր) հաշվառման ամփոփագիր

Տեղամասի №-ը	Կենսախմբի №-ը	Բույսի №-ը	Տնկարկի տիպը	Կենսաձևը	Բույսի տեսակը	Բույսերի քանակը			Տրամագիծը (1,3մ բարձրության վրա)	Բարձրությունը, մ	Տարիքը, տարի	Բույսերի վիճակը								
						Հատ	մ ²	զմ				Լավ	Բավարար	Անբավարար		Ընթացիկ տարվա չորացած	Անցած տարիներին չորացած	Վիճակի բնութագրիչը	Խնամքի առաջարկություններ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	

Կանաչ տնկարկների (ծաղկանոցների) հաշվառման ամփոփագիր

Տեղամասի №-ը	Ծաղկանոցի №-ը	Ծաղկանոցների մակերեսը				
		Միամյաներ	Բազմամյաներ	Մոխուկավորներ	Վարդեր	Ճամբ
1	2	3	4	5	6	7

Օբյեկտի տարածքը վերաբերվում է խնամքի _____ կարգին:

Սեփականատեր _____

VI. Փոքր ճարտարապետական ձևեր և բարեկարգման տարրեր

№	Անվանումը	Քանակը, հատ/մ	Բարձրությունը (ցանկապատ, պարիսպ), մ

Օբյեկտի տարածքը վերաբերվում է խնամքի _____ կարգին:

Սեփականատեր _____

VII. Ռեզիդենցի կազմակերպման տարրեր

(հենապատ, սանդղավանդ, տեռաս, թեք լանջերի ամրացման համակարգեր և այլն)

№	Անվանումը	Քանակը, մ ²

VIII. Ֆունկցիոնալ ապահովման համակարգեր

(ոռոգման խողովակաշար, հեղեղատար կոյուղի, արտաքին լուսավորության հենասյուներ ու ցանցեր և այլն)

№	Անվանումը	Քանակը, գմ, մ ²

**IX. Բնապահպանության և միկրոկլիմայական հարմարավետության
ապահովման համակարգեր**
(հողմապաշտպան, աղմկապաշտպան տարրեր, ջրամբարների
մաքրման համակարգեր և այլն)

№	Անվանումը	Քանակը, գմ, մ ²

Օբյեկտի տարածքը վերաբերվում է խնամքի _____ կարգին:
Սեփականատեր _____

**X. Վերանորոգման աշխատանքների կատարման մասին տեղեկու-
թյուններ**

№	Անվանումը	Կատարման ամսաթիվը	Բնութագիրը (ծավալները)	Կապալառու կազմակերպությունը (լիցենզիայի №-ը)	Երաշխիքային ժամկետը

Օբյեկտի տարածքը վերաբերվում է խնամքի _____ կարգին:
Սեփականատեր _____

XI. Օբյեկտի բնութագիր

№	Անվանումը	Քանակը			Արժեքը, դրամ	Փոփոխությունները ըստ տարիների
		մ ²	մ	հատ		
<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>4</i>	<i>5</i>	<i>6</i>	<i>7</i>
1.	Օբյեկտի ընդհանուր մակերեսը					
2.	Շահագործվող մակերեսը					
3.	Կանաչ տնկարկներով զբաղեցված, այդ թվում.					

	• ծառերով					
	• թփերով					
	• սիզամարգերով					
	• թեք լանջերի սիզամարգերով					
	• ծաղկանոցներով					
4.	Մալահատակների տակ, այդ թվում (ծածկի տեսակը)					
5.	Կառույցներ և շինություններ					
6.	Ջրամբարներ					
7.	Բարեկարգման տարրեր					
8.	Լրացուցիչ տեղեկություններ					
	• կառուցման ամսաթիվը					
	• վերջին հիմնանորոգման կամ վերակառուցման ամսաթիվը					
	• օբյեկտի շահագործման կարգը					
	• քաղաքաշինական գործունեության պայմանակարգ					

Օբյեկտի տարածքը վերաբերվում է խնամքի _____ կարգին:
Մեփականատեր _____

ՀԱՎԵԼՎԱԾ 7

Ձև №

« _____ » համայնքի
կանաչ տնկարկների ռեեստրի ստեղծման և վարման կարգի
Հաստատված է.

Համայնք « _____ »
(անվանումը)

**№..... ՀԱՇՎԱՌՎՈՂ ՏԵՂԱՍԱՍԻ
ԿԱՆԱՉ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

« _____ » _____ 20__ թ.-ի վիճակով

<i>№</i>	<i>Ռեեստրային ցուցանիշներ</i>	<i>Տեղեկատր- վություն</i>	<i>Ծանոթու- թյուն*</i>
1	Հաշվառվող տեղամասի՝ կանաչա- պատ տարածքի (զբոսայգի, պուրակ, փողոց և այլն) անվանումը		
2	Հաշվառվող տեղամասի՝ կանաչա- պատ տարածքի գտնվելու վայրը գրլ- խավոր հատակագծի վրա (հասցեն)		
3	Հաշվառվող տեղամասի՝ կանաչա- պատ տարածքի ստեղծման ամսաթի- վը		
4	Հաշվառվող տեղամասի՝ կանաչա- պատ տարածքի պատկանելիությունը (կանաչապատ տարածքի հողօգտա- գործողի/ սեփականատիրոջ անվա- նումը)		
5	Հաշվառվող տեղամասի՝ կանաչա- պատ տարածքի պահպանման կարգի պատասխանատու իրավաբանական, ֆիզիկական անձը, իրավաբանական հասցեն, հեռախոսը, էլ. փոստը		
6	Հաշվառվող տեղամասի՝ կանաչա- պատ տարածքի կարգը		

7	Հաշվառվող տեղամասի՝ կանաչապատ տարածքի մակերեսը, մ ²		
8	Հաշվառվող տեղամասի՝ կանաչապատ տարածքի կարճ բնութագիրը.		
	ծառեր, հատ		
	թփեր, հատ		
	խոտածածկ տարածք, մ ² , դրա ծագումը (բնական, արհեստական)		
	բույսերի և սնկերի (ծառեր, թփեր, լիանաներ, խոտաբույսեր, սնկեր), հազվադեպ տեսակներ, նշել ինչպիսիք		
9	Հաշվառվող տեղամասում կանաչ տնկարկների տեսակային կազմը տեսակների ընդհանուր քանակում, %.		
	փշատերև ծառեր, %		
	լայնատերև ծառեր, %		
	թփեր, %		
	բազմամյա խոտաբույսերով ծածկված տեղամասեր, %		

** նշվում են նաև այն իրավական ակտի ամսաթիվը, համարը, անվանումը, որով կանաչ տնկարկների ռեեստրում մտցվում են փոփոխություններ:*

Կազմեց _____
(անուն, հայրանուն, ազգանուն)

Պաշտոն _____

Ամսաթիվ «__» _____ 20__ թ. Ստորագրություն _____

ՀԱՎԵԼՎԱԾ 8

Աղյուսակ 9. Ցանկ Գյումրի քաղաքի կանաչապատման և կանաչապատ տարածքների կառավարման խնդիրների վերաբերյալ 2008 - 2014 թվականներին զանգվածային լրատվամիջոցներով հրապարակված հոդվածների

Հ/հ	Հոդվածի անվանումը	Հոդվածում ներկայացվող հիմնախնդրի դասակարգումը	Հրապարակման աղբյուրը և ամսաթիվը
1	Կանաչ տարածքների ոչնչացման հաշվին Գյումրու խանութապատման գործընթացը շարունակվում է	Ծառահատում, հողհատկացում, կառուցապատում	http://www.old.asparez.am/ 23.05.2008
2	Գյումրիում փետրվարի 22-23-ի գիշերը հատվել է մոտ 100 մատղաշ ծառ	Ծառահատում	http://www.old.asparez.am/ 26.02.2008
3	Փայտահատներն արժանի են իրենց փայտահատներին	Ծառահատում, կառուցապատում (ճանապարհահատվածի շինարարություն)	http://www.old.asparez.am/ 21.08.2009
4	Վնասատուների մասին, նորից	Ծառահատում, կառուցապատում (ճանապարհահատվածի շինարարություն)	http://www.old.asparez.am/ 03.09.2009

5	Գյումրիում ցուրտ ու մութ տարիներին սղոցումից փրկված ծառերը հատվում են այսօր	Ծառահատում, կառուցապատում, հողհատկացում	http://hetq.am/ 02.02.2009
6	Արատավոր ընդօրինակում	Հողհատկացում	http://www.aravot.am/ 16.03.2010
7	Գյումրու հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների բողոքը	Հողհատկացում, կառուցապատում	http://www.lragir.am/ 04.06.2010
8	Կումայրի արգելոցը սպասարկման օբյեկտ	Հողհատկացում, կառուցապատում	http://www.aravot.am/ 29.05.2010
9	Ի պաշտպանություն կանաչ տարածքների	Հողհատկացում, կառուցապատում	http://shirakcentre.org/ 19.08.2010
10	Այս հակաեղևնային քաղաքականությունն այլևս ընդունելի չէ	Ծառահատում (տեղափոխում, պահպանում), հողհատկացում, կառուցապատում	http://hetq.am/ 16.03.2011
11	Արդյո՞ք Գյումրու քաղաքապետարանը տեղյակ է	Հողհատկացում	http://7or.am/ 09.07.2011

12	<p>Գյումրու Վարդանանց հրապարակի և Արագած ճեմափողոցի քաղաքաշինական վիճակի ու պլանավորվող աշխատանքների վերաբերյալ Գյումրու հասարակական կազմակերպությունների հայտարարությունը</p>	<p>Ծառահատում (տեղափոխում, պահպանում), հողհատկացում, կառուցապատում</p>	<p>http://www.lragir.am/ 16.03.2011</p>
13	<p>Գյումրու քաղաքապետի խորհրդականն առաջարկում է ձեռքբառատվել «եղնինների մերժված» կերպարից</p>	<p>Ծառահատում (տեղափոխում, պահպանում), հողհատկացում, կառուցապատում</p>	<p>http://hetq.am/ 11.03.2011</p>
14	<p>Եղնինները կտեղափոխվե՞ն</p>	<p>Ծառահատում (տեղափոխում, պահպանում), տարածքի սանիտարական վիճակ</p>	<p>http://hetq.am/ 28.03.2011</p>
15	<p>Ծառերին չօգնեցին ոչ մարգպետի խորհրդականը, ոչ ՀՀԿ գրասենյակը</p>	<p>Ծառահատում</p>	<p>http://www.asparez.am/ 01.11.2011</p>

16	Մանիտարական ծառահատում Գյումրու Բագրատունյաց պուրակում	Ծառահատում, կանաչ տնկարկների խնամքի խնդիրներ	http://www.old.asparez.am/ 15.07.2011
17	Գյումրու Վարդանանց հրապարակի եղևնիները կտեղափոխվեն	Ծառահատում (տեղափոխում, պահպանում)	http://www.azatutyun.am/ 19.04.2011
18	Գյումրու քաղաքային իշխանություններից պահանջում են դադարեցնել «հակաեղևնային քաղաքականությունը»	Ծառահատում (տեղափոխում, պահպանում), հողհատկացում, կառուցապատում	http://www.epress.am/ 16.03.2011
19	Տարածքում կլինի կանաչ գոտի	Հողհատկացում	http://www.asparez.am/ 06.10.2011
20	Գյումրու քաղաքացիական հասարակության հայտարարությունը Գյումրու Շահումյան փողոցի 188 շենքի հարևանությամբ նախատեսվող աշխատանքների և ներկայացվող նախագծի վերաբերյալ	Ծառահատում, հողհատկացում, կառուցապատում, կանաչապատ տարածքների պահպանություն	http://www.asparez.am/ 17.06.2012

21	Ավտոտնակ թող չուում դնեն	Հողհատկացում, կառուցապատում	http://www.asparez.am/ 16.10.2012
22	Արագած. փողոց, թե՞ ճեմնափողոց	Քաղաքաշինա- կան նորմերի հետ կապված խնդիր- ներ	http://www.asparez.am/ 20.11.2012
23	Բալասանյանին կհաջողվի՞ հետ վերցնել Վարդա- նիկի 99 տարով նվիրած այգիները	Հողհատկացում, կառուցապատում	http://www.aravot.am/ 28.09.2012
24	Ծրագրային դրույթները պետք է լինեն քաղաքային միջավայրը ձևավորողը, ոչ թե անձինք	Ծառահատում, հողհատկացում, կառուցապատում, կանաչապատ տարածքների պահպանություն	http://hetq.am/ 30.08.2012
25	Ամերիաբանկը կռիվ է քցել Գյումրիում	Հողհատկացում, կառուցապատում	http://www.aravot.am/ 17.07.2012
26	Բնակիչները պահանջում են կանաչ տարածք	Կանաչ տնկարկ- ների խնամքի խնդիրներ, կանաչապատ տարածքների պահպանություն, հողհատկացում, կառուցապատում	http://www.asparez.am/ 18.04.2013

27	Ծառերը շարունակում են «գոհվել» հանուն մասնավորի շահի	Ծառահատում, հողհատկացում, կառուցապատում	http://www.asparez.am/ 07.05.2013
28	Գյումրու հրապարակի եղևնիները կմնան տեղում	Ծառահատում (տեղափոխում, պահպանում)	http://www.azatutyun.am/ 16.08.2013
29	Ինչի համար և ո՞վ է ուզում հատել Վարդանանց հրապարակի եղևնիները	Ծառահատում (տեղափոխում, պահպանում)	Ցայգ հեռուստաընկերություն 14.08.2013
30	Կհաջողվի՞ Գյումրին մաքրել փոշուց	Տարածքի սանիտարական վիճակ, կանաչ տրնկարկների խնամքի խնդիրներ	http://galatv.am/ 04.05.2013
31	Գյումրու կենտրոնում սուպերմարկետ կկառուցվի	Հողհատկացում, կառուցապատում	http://galatv.am/ 07.05.2013
32	Դենդրապարկ Գյումրիում. գաղափարն աստիճանաբար իրականություն է դառնում	Ծառատունկ	http://www.asparez.am/ 02.05.2014

33	Կադաստրի բարձրաստիճան պաշտոնյան Գյումրու կենտրոնական փողոցն ու զբոսայգին սեփականաշնորհելու մասին	Հողհատկացում, կառուցապատում	http://www.aravot.am/ 11.04.2014
34	Մենք ու մեր էկոլոգիան	Տարածքի սանիտարական վիճակ	http://www.asparez.am/ 06.08.2014
35	Գյումրին կմաքրվի փոշուց	Տարածքի սանիտարական վիճակ, կանաչ տնկարկների խնամքի խնդիրներ, ծառատունկ	http://galatv.am/ 04.05.2014
36	Գյումրիում ծառերի էտը կատարվում է կոմունալ բաժնի պետերի ճաշակով	Ծառահատում, կանաչ տնկարկների խնամք, տարածքի սանիտարական վիճակ, հողհատկացում, կառուցապատում	http://hetq.am/ 15.04.2014
37	Ծառն էլ ծառի նման չէր, ճիշտ եղավ, որ վերացավ էլ ծառը	Ծառահատում	Շրջապատ շարաթաթերթ, № 4 04.02.2014

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
3. ՀՀ օրենքը «Քաղաքաշինության մասին»
4. ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին»
5. ՀՀ հողային օրենսգիրք
6. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք
7. ՀՀ քրեական օրենսգիրք
8. ՀՀ բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը. վիճակագրական տեղեկատու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
9. ՀՀ կառավարության 30-ը հոկտեմբերի 2008 թվականի N 1318-Ն որոշումը բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին
10. ՀՀ կառավարության 12-ը օգոստոսի 2002 թվականի N 180-Ն որոշումը ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի որոշումը «Հաշվետվություն քաղաքային հողերի և կանաչապատ տարածքների մասին» ձև թիվ 1 – կանաչ պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին
11. ՀՀ կառավարության 28 հոկտեմբերի 1998 թվականի N 660 որոշումը կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը հաստատելու մասին
12. ՀՀ Երևան քաղաքի ավագանու 18 նոյեմբերի 2009 թ. N 36-Ն որոշումը Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնները հաստատելու մասին
13. Գյումրի համայնքի քառամյա (2013-2016թթ.) զարգացման ծրագիր
14. Գյումրի համայնքի քառամյա (2009-2012թթ.) զարգացման ծրագիր

15. <http://armstat.am/file/doc/99482923.pdf>
16. Գյումրիի համայնքի 2013 թվականի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվություն, Գյումրու քաղաքապետարանի պաշտոնական կայք՝
<http://www.gyumricity.am/index.php/hy/gyumri-community/community-budget>
17. Գյումրիի համայնքի 2013 թվականի բյուջեի հաստատված նախագիծ
18. Գյումրու քաղաքապետարանի պատասխան նամակը «Մոնիտորինգ հանուն ապագայի» ծրագրի հարցմանը, 14.08.2014թ.
19. ՀՀ բնապահպանության նախարարության պատասխան նամակը «Մոնիտորինգ հանուն ապագայի» ծրագրի հարցմանը, 28.08.2014թ.
20. Գյումրու քաղաքապետարանի պատասխան նամակը Գյումրու բնապահպանական տեղեկատվության հասարակական «Օրհուս» կենտրոնի հարցմանը, 11.11.2014թ.
21. Բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների և դրանց կառավարման գործընթացների հանրային մոնիտորինգի մեթոդական ձեռնարկ, Գյումրի, 2014թ.
<http://www.3nature.am/docs/Methodological%20Manual.pdf>
<http://aarhus.am/images/Gyumri/Methodological%20Manual.pdf>



«ԵՐՐՈՐԴ ԲՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԿԱՆԱԶՍՊԱՏ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ԶԵԿՈՒՅՑ**

Կազմողներ.

Ռաֆայել Մխիթարյան

Գևորգ Պետրոսյան

Հռիփսիմե Հովակիմյան

Նուռա Ասոյան

Սոֆյա Հովհաննիսյան

Քաջիկ Հարությունյան

Վահան Բաղդասարյան

Լիլիթ Ավետիսյան

Հրայրա Հովհաննիսյան

ԳՅՈՒՄՐԻ 2014